

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Ինքնավերլուծության զեկույց
(ASIIN)

Բովանդակություն

Ներածություն	3
I. Որակի սահմանում	5
I.1. Խնդիրներ	5
I.2. Կառավարման համակարգ.....	9
II. Կրթական ծրագրեր /դասընթացներ/.....	19
II.1. Կրթական ծրագրերի մշակում և զարգացում	19
II.2. Կրթական ծրագրերի / դասընթացների / վերապատրաստումների իրականացում	23
II.3. Համագործակցություն	28
II.4. Քննական համակարգ և քննությունների կազմակերպում	34
II.5. Ուսանողների նվաճումների ճանաչում/փոխճանաչում	39
II.6. Աջակցություն և օժանդակություն	42
III. Ռեսուրսների կառավարում	47
III. 1. Նյութական և մարդկային ռեսուրսներ	47
III.2. Մարդկային ռեսուրսների զարգացում	53
III.3 Կապը հետազոտության հետ	57
III.4. Կապը վարչարարության հետ.....	62
IV.1 Ծրագրերի /դասընթացներ/ կանոններ և կանոնակարգեր	66
IV.2 Փաստաթղթավորում	70

Ներածություն

Երևանի գեղարվեստի պետական ինստիտուտը հիմնադրվել է 1945 թվականին և հիմնադրման պահին ունեցել է երկու մասնագիտություններ՝ գեղանկարչություն և քանդակագործություն, որոնցով ուսումնառում էին 22 ուսանող: 1953 թվականին միավորվում են Թատերական և Գեղարվեստի ինստիտուտները և ստեղծվում է Գեղարվեստաթատերական ինստիտուտը, որը 1994 թվականին կրկին բաժանվում է 2 առանձին բուհերի, իսկ 2000 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ բուհը վերանվանվում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա (ԵԳՊԱ):

Այսօր, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, ինչպես նաև Գյումրու և Դիլիջանի մասնաճյուղերում, սովորում է շուրջ 900 ուսանող: ԵԳՊԱ-ն կրթական ծառայություններ է առաջարկում կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի ոլորտների 17 մասնագիտության կրթական ծրագրերով, բարձրագույն կրթության երեք մակարդակներում (8 բակալավրի, 8 մագիստրոսի և 1 հետազոտողի կրթական ծրագրեր): ԵԳՊԱ-ում դասավանդում են հանրապետության արվեստի առաջատար գործիչները, ովքեր ունեն նաև միջազգային ճանաչում՝ արվեստի և մշակույթի վաստակավոր գործիչներ, ժողովրդական ու վաստակավոր նկարիչներ, միջազգային մրցույթների հաղթողներ, պետական մրցանակների դափնեկիրներ՝ 3 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 37 պրոֆեսոր, 25 դոցենտ, 35 ավագ դասախոս, 36 դասախոս:

Վերջին տարիներին ԵԳՊԱ-ն ակտիվ գործողություններ է ծավալում իր գործունեության բոլոր ոլորտների բարելավման ուղղությամբ: Հիմնվելով միջազգային արդի փորձի վրա՝ վերանայվում են կառավարման համակարգը, իրականացվող կրթական ծրագրերը, հետազոտությունների իրականացումը և փոխկապակցումը ուսումնառության հետ, արտաքին կապերի ընդլայնումը և շարժունության խթանումը, հասարակությանը մատուցվող ծառայությունների զարգացումը, որակի ապահովման համակարգի կատարելագործումը և այլն: Այս գործողությունները միտված են բուհի միջազգայնացմանը և որպես արդյունք ԵԳՊԱ-ի միջազգային ճանաչմանը: Այս կարևորագույն խնդիրների լուծման նպատակով ԵԳՊԱ-ում ստեղծվել է կրթության ոլորտի արդի միտումներին և խնդիրներին քաջատեղյակ մասնագետներից կազմված աշխատանքային խումբ, որն ապահովում է ոչ միայն անհրաժեշտ աշխատանքների իրականացումը և գործընթացների փաստաթղթավորումը, այլ նաև լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ է հայթայթում բարեփոխումների, եվրոպական հայտնի մասնագետների կողմից ԵԳՊԱ-ի անձնակազմի վերապատրաստման և նյութատեխնիկական բազայի բարելավման համար:

Իրականացվող գործընթացների արդյունավետության մասին են վկայում նաև 2014 թվականից ՀՀ-ում ներդրված բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի ամենամյա գնահատումների արդյունքները: Վարկանիշավորումը իրականացվում է ըստ բուհերի գործունեության հետևյալ ուղղությունների՝ ուսանողներ, ուսումնառության արդյունքներ, միջազգային ուղղվածություն, գիտահետազոտական աշխատանք, դասավանդման գործընթաց, հաստատության կարողություններ, աշխատանքային շուկա, հանրային կապեր:

ՀՀ բոլոր պետական և մասնավոր բուհերը բաժանվում են 6 խմբերի: Դրանք են՝

1. Երեք կրթական աստիճաններում և երեք ու ավել մասնագիտական ոլորտներում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
2. Երեք կրթական աստիճաններում և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
3. Բակալավրական ու մագիստրոսական և երեք ու ավել մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
4. Բակալավրական և մագիստրոսական և մինչև երեք մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
5. Միայն բակալավրական մասնագիտական ոլորտում կրթական ծրագրեր իրականացնող բուհեր
6. Արվեստի բուհեր

ԵԳՊԱ-ն, հանդիսանալով ՀՀ կերպարվեստի ոլորտի բուհ, ընդգրկվել է 6-րդ վարկանիշային խմբում և վարկանիշավորման արդյունքներով արդեն երրորդ տարին անընդմեջ զբաղեցնում է 1-ին տեղը:

2016 թվականից սկսած կատարվում է նաև բուհերի ընդհանուր վարկանիշավորում, որտեղ միասնական չափանիշերով գնահատվում են բոլոր պետական և մասնավոր բուհերը՝ անկախ դրանցում իրականացվող կրթական աստիճանների և մասնագիտական ոլորտների թվից: Ընդհանուր վարկանիշում, որտեղ մասնակցել են ՀՀ-ում բարձրագույն կրթություն իրականացնող 55 հաստատություններ ԵԳՊԱ-ն զբաղեցրել է 13-րդ տողը: Հաշվի առնելով ակադեմիայի փոքր չափերը (տարածքը, ֆինանսավորումը պետական բյուջեից, ուսանողների թվաքանակը, պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի թիվաքանակը զգալի ազդում են արդյունքների վրա)՝ շատ բարձր արդյունք է:

Նշված արդյունքները վկայում են վերջին տարիների գործունեության բարձր որակի և կրթության ոլորտում կատարված բարեփոխումների արդյունավետության մասին: Վարկանիշավորման չափանիշերին և արդյունքներին կարելի է ծանոթանալ Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի պաշտոնական կայքէջերում՝ <http://ranking.amedu.am/> և <http://rank.amedu.am/>:

I. Որակի սահմանում

1.1. Խնդիրներ

ա) Ինստիտուցիոնալ

- Հաստատության որակի խնդիրներից որո՞նք ազդեցություն ունեն դասավանդման և ուսուցման որակի վրա:
- Որակի խնդիրներից որո՞նք են բարձր առաջնահերթության, որո՞նք ցածր առաջնահերթության:
- Որակի խնդիրներից որո՞նք են արտացոլում հաստատության առկա ուժեղ կողմերը:
- Որակի խնդիրներից որո՞նք են ուղղված ինստիտուցիոնալ զարգացմանը և որո՞նք ապագային:
- Որո՞նք են ամենամեծ մարտահավերժերը՝ պահպանելու որակի խնդիրների արդյունքները:

Որդեգրելով որակի սահմանումը որպես համապատասխանություն նպատակներին՝ ԵԳՊԱ-ի որակի քաղաքականությունը միտված է բուհի առաքելության և Ռազմավարական ծրագրով սահմանված նպատակների իրականացմանը: Այն ենթադրում է որակի խնդիրների սահմանում, բուհի գործընթացների արդյունավետ իրականացում և դրանց շարունակական բարելավման ապահովում, ներքին ու արտաքին շահակիցների արձագանքի հիման վրա բարելավումների իրականացում: Որակի շրջանակը ընդգրկում է վերահսկողության, որակի ապահովման, շարունակական բարելավման գործընթացներ, բուհի գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր: ԵԳՊԱ-ն որդեգրել է պլանավորում, իրականացում, ստուգում և բարելավում շրջափուլը, որով և առաջնորդվում է գործընթացներ իրականացնելիս:

ԵԳՊԱ-ի 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրով (տե՛ս հավելված 1) սահմանված խնդիրները միտված են բուհում դասավանդման և ուսուցման որակի բարձրացմանը և մասնավորապես անդրադառնում են.

- միջազգային չափանիշերի համաձայն ՄԿԾ-երի վերանայմանը, դրանց հաջող իրականացմանը և համապատասխան կրթական միջավայրի ստեղծմանը,
- պրոֆեսորադասախոսական կազմի կայունության ու մասնագիտական աճի ապահովմանը,
- դիմորդների և ուսանողների կայուն համակազմի ձևավորմանը և պահպանմանը:

Սահմանված խնդիրների իրականացման ուղղությամբ կատարված գործողությունները նպաստել են հաստատության գործունեության տարբեր ոլորտների բարելավմանը, ինչը իր դրական ազդեցությունն է ունեցել ԵԳՊԱ ընդհանուր գործունեության արդյունավետության բարձրացման գործընթացում: Որպես կատարված գործողությունների ուժեղ կողմեր, մասնավորապես, կարելի է նշել՝

- մշակվել և ներդրվել են ՈԱ գործիքներ ու մեխանիզմներ (Որակի ապահովման ձեռնարկ և հարցաթերթեր տե՛ս հավելված 2, 2.1, գործողությունների տարեկան

պլանավորման ձևաչափ տե՛ս հավելված 3, եռամսյակային և տարեկան հաշվետվության ձևաչափ տե՛ս հավելված 4, Մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձևաչափ տե՛ս հավելված 5, Մասնագիտության կրթական ծրագրերի և ՀՀ որակավորումների ազգային շրջանակի միջև համադրելիության ապահովման ուղեցույց տե՛ս հավելված 6, ԵԳՊԱ ռազմավարական ծրագրի նախագծման և մշակման ուղենիշեր տե՛ս հավելված 7, ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործողությունների պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ տե՛ս հավելված 8 և այլն),

- մշակվել է ՄԿԾ-երի մշակման և վերանայման ձևաչափ և դրան համաձայն վերանայվել են 6 ՄԿԾ-եր՝ դառնալով վերջնարդյունահենք,
- Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական աճն ապահովելու նպատակով ԵԳՊԱ-ն նախաձեռնել և իրականացրել է վերապատրաստումներ:

Սակայն նշված գործողությունները բավական չեն խնդիրների լիարժեք լուծման համար և պահանջում են լրացուցիչ միջոցառումների ձեռնարկում, ինչը և արտացոլվում է 2017-2021թթ. ռազմավարական ծրագրում (տե՛ս հավելված 9):

Բացի այդ, ԵԳՊԱ-ն կարևորում է իր նպատակներին ուղղված կատարողականի ցուցիչների սահմանումը, որը նախորդ ՌԾ-ն իրականացնելիս լուրջ մարտահրավեր էր: Բուհը չունի սահմանված ԳԱԱՑ-եր, հետևաբար դժվար է չափել և գնահատել, թե որքանով է ԵԳՊԱ-ն հասել սահմանված ռազմավարական նպատակներին և խնդիրներին, սակայն պլանավորման և իրականացման գործող ընթացակարգերը հավաստում են, որ իրականացված գործողությունները միտված են եղել ԵԳՊԱ 2012-2016 ռազմավարական ծրագրի իրականացմանը: ԵԳՊԱ 2017-2021թթ. ռազմավարական ծրագրի շրջանակներում բուհը արդեն սահմանել է գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ՝ KPIs, որոնք կնպաստեն գործընթացների որակի վերահսկողությանն ու շարունակական բարելավմանը:

բ) Ընթացակարգային

- Դասավանդման և ուսուցմանը վերաբերող որակի խնդիրներից որո՞նք են վերջերս փոփոխվել:
- Որո՞նք էին փոփոխության պատճառները:
- Որո՞նք են այս (որակի) խնդիրները կանոնավոր կերպով սահմանելու, իրականացնելու և վերանայելու գործընթացները:

Ինչպես արդեն նշվել է, ԵԳՊԱ որակի խնդիրները բխում են հաստատության Ռազմավարական Ծրագրից և ուղղված են դրա իրականացման արդյունավետության բարձրացմանը: ԵԳՊԱ ռազմավարական ծրագիրը մշակվում է համաձայն «ԵԳՊԱ ռազմավարական ծրագրի նախագծման և մշակման ուղենիշեր»-ի, որտեղ առկա է սպառիչ և հստակ տեղեկություն ռազմավարական ծրագրի մշակման գործընթացի, աշխատանքային խմբի և այլնի վերաբերյալ(տե՛ս հավելված 7):

Յուրաքանչյուր նոր ռազմավարական ծրագրի կազմման նախնական փուլում

աշխատանքային խումբը կատարում է վերլուծություն, որը գնահատում է հաստատության ներկա վիճակը՝ հաշվի առնելով արդի միջազգային և ազգային պահանջները ու մարտահրավերները, շահակիցների կարիքները և բուհի նախորդ ռազմավարական ծրագրով նախատեսված գործողությունների իրականացման արդյունքները: Հիմնվելով վերլուծության արդյունքների վրա կազմվում է ԵԳՊԱ-ի նոր ռազմավարական ծրագիրը, և սահմանվում են խնդիրները: Որակի խնդիրների իրականացման համար ռազմավարական ծրագրի ժամանակացույցում (պլանում) նախատեսվում են գործողություններ, որոնք ներառվում են ստորաբաժանների տարեկան պլաներում: Խնդիրների լուծման ընթացքը մշտադիտարկվում է եռամսյակային և տարեկան հաշվետվությունների և ՈԱ կենտրոնի կողմից իրականացվող միջոցառումների միջոցով: ԵԳՊԱ գործընթացների արդյունավետությունը գնահատելու նպատակով ՈԱ կենտրոնը թիրախային տարբեր խմբերում անցկացնում է հարցումներ, որոնց արդյունքները ներկայացվում են հիմնական շահակիցներին, կառավարման մարմիններին և հիմք են հանդիսանում հետագա բարելավման գործողությունների համար:

Տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման համար ՈԱ կենտրոնը սահմանել է հարցումների իրականացման հստակ ժամանակացույց, որը բխում է իրականացվող գործընթացի յուրահատկություններից: Յուրաքանչյուր հարցում ունի գործիքի նկարագիր, որի համաձայն այն իրականացվում է (տե՛ս հավելված 2.1):

Որակի խնդիրները վերանայվում են ռազմավարական ծրագրի ավարտից հետո՝ նոր ռազմավարական ծրագրի մշակման ժամանակ, կամ ընթացիկ ծրագրում փոփոխությունների իրականացման անհրաժեշտություն հայտնաբերելու դեպքում: Ներկայիս ՌԾ-ում սահմանվել են խնդիրները և համապատասխան գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշներ՝ KPIs, որոնք չափելի են դարձնում խնդիրների իրականացման արդյունքները:

գ) Մշակութային

- Հաստատության որակի խնդիրների վրա ո՞ր արժեքները և վարքագծի ձևերը ունեն ամենամեծ ազդեցությունը:
- Ներքին շահակիցների համար որակի ո՞ր խնդիրներն են առավելագույնս կարևոր:
- Հաստատության ո՞ր խմբերն են հատկապես առնչվում որակի խնդիրներին:
- Հաստատության շահակիցները որակի ո՞ր խնդիրները չեն ընդունում:
- Ներքին շահակիցների շրջանում որակի խնդիրների քննարկման համար ի՞նչ հնարավորություններ են ստեղծված:

ԵԳՊԱ նպատակների և համապատասխան խնդիրների իրականացման գործում կարևորվում է որակի մշակույթի ներդրումն ու տարածումը:

Որակի մշակույթի ձևավորման, ինչպես նաև տարածման համար կարևոր է բուհի ներքին շահակիցների շրջանում «որակ» և «որակի ապահովում» հասկացությունների տարածման և բուհական գործընթացներում դրանց կիրառման կարևորության գիտակցման մակարդակի բարձրացումը: Այդ նպատակով ԵԳՊԱ-ում սեմինարներ և վերապատրաստումներ են կազմակերպվում, որոնք հիմնականում ուղղված են՝ որակի

ապահովմանն ու PDCA համակարգին, կրթական ծրագրերը և դասընթացները ուսումնառության վերջնարդյունքներով սահմանելուն, կրեդիտների բաշխման մեթոդաբանությանը և այլն: Վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի համար իրականացվել են վերապատրաստումներ նաև մի շարք դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում (DIUSAS, GOVERN, ALIGN), ինչպես նաև ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից (տե՛ս հավելված 10):

Հանդիպումները և քննարկումները օգնում են բարձրացնել աշխատակիցների հանձնառությունը, որն էլ իր դրական ազդեցությունն է ունենում աշխատանքային պարտականությունների իրականացման վրա: Քննարկումների ժամանակ կարծիքների փոխանակումը օգնում է ձևավորել նոր մոտեցումների ընդունման մշակույթ, ինչն էլ առավել դյուրին են դարձնում ինստիտուցիոնալ մակարդակով որակի մշակույթի տարրերի ձևավորումը:

ԵԳՊԱ-ն իր գործունեության ընթացքում արժևորում է.

- ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը որակի կառավարման համակարգում, դրանով իսկ՝ մասնակից դարձնելով ԵԳՊԱ-ի որոշումների կայացման, վարչարարական, կրթական ծրագրերի մշակման և վերամշակման և մի շարք այլ գործընթացներին,
- թափանցիկության ապահովումը՝ տարբեր գործընթացների վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցներին տեղեկության և հաշվետվությունների տրամադրման միջոցով:

ԵԳՊԱ որակի խնդիրները անդրադառնում և տարածվում են բուհի գործունեության բոլոր ոլորտներին: Ներքին շահակիցները գիտակցելով որակի խնդիրների իրականացման կարևորությունը, ակտիվորեն մասնակցում են դրանց սահմանման, վերանայման, ինչպես նաև փոփոխությունների իրականացման գործընթացներում: ԵԳՊԱ որակի խնդիրներն ընդունվում են ներքին շահակիցների կողմից, քանի որ դրանք պարբերաբար քննարկվում են և ներառում են ներքին շահակիցների կարիքները:

1.2. Կառավարման համակարգ

ա) Ինստիտուցիոնալ

- Հաստատության որակի կառավարման գործում ստորաբաժանումներին և նրանց գործառնություններին, կառուցվածքին, նյութական ու մարդկային ռեսուրսներին առնչվող գործընթացներում ի՞նչն է լավ աշխատում:
- Ո՞վ է ներգրավված, պատասխանատու և ո՞վ է տեղեկացվում:
- Որակի կառավարման համար մոտ ապագայում հաստատության կառուցվածքին և ռեսուրսներին վերաբերող ի՞նչ փոփոխություններ են պլանավորվում և ինչու՞ :
- Ինչպե՞ս է գնահատվում կազմակերպական տարբեր ստորաբաժանումների (դասավանդում, ուսուցում, վարչարարություն) միջև համագործակցությունը տարբեր ստորաբաժանումների, ֆակուլտետների և կառավարման գլխավոր օղակի կողմից:
- Համագործակցության ո՞ր կողմերն են արդյունավետ, իսկ որո՞նք՝ խոչընդոտող:

ԵԳՊԱ գործունեության հիմքում են «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքը, ԵԳՊԱ կանոնադրությունը (տե՛ս հավելված 11) և այլ հիմնադիր փաստաթղթեր:

ԵԳՊԱ որակի կառավարման համակարգը պատկերված է հավելված 2.3-ում, որտեղ հստակորեն երևում է բուհում իրականացվող տարբեր գործընթացների որակի ապահովումը և կառավարումը, գործընթացների փոխկապակցվածությունը, գործընթացների գնահատումը, տարբեր գործընթացների պատասխանատու վարչական օղակները ու ներգրավված ներքին շահակիցները և այլն:

ԵԳՊԱ-ի կառավարումն իրականացվում է միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ՝ ԵԳՊԱ-ի կառավարման խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի կողմից: Կառավարման խորհուրդը պատասխանատու է ռազմավարական պլանի հաստատման և դրա կատարման ընթացքի միջնաժամկետ և երկարաժամկետ մշտադիտարկման (հաշվետվությունների ընդունման) համար: Իսկ ռազմավարական ծրագրի երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների իրականացման և ընթացիկ կառավարման համար պատասխանատու են գիտական խորհուրդը և ռեկտորը: ԵԳՊԱ ստորաբաժանումների, դրանց ենթակայության և գործառնության հաղորդակցության կապերը ներկայացված են կազմակերպական կառուցվածքում (տե՛ս հավելված 15): ԵԳՊԱ կառավարման մարմինների և/կամ ստորաբաժանումների գործառնությունները ներկայացվում են ստորև՝

Կառավարման խորհուրդը ԵԳՊԱ կառավարման բարձրագույն մարմինն է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով՝ խորհրդի անդամների մասնակի շրջափոխությամբ: Ըստ ԵԳՊԱ կանոնադրության կառավարման խորհրդում ներգրավված են՝ հիմնադրի անունից ՀՀ վարչապետի կողմից առաջադրված պետական պաշտոնյաներ - 25%, գիտության, մշակույթի, տնտեսության տարբեր բնագավառների, գործատուների ներկայացուցիչներ - 25%, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ - 25%, ուսանողներ - 25%: Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն տարեկան մեկ անգամ:

Խորհրդի իրավասությանն են պատկանում.

- Կանոնադրության, դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունը հիմնադրի հաստատմանը ներկայացնելը

- Ռեկտորի ընտրությունը
- Ռազմավարական ծրագրի հաստատումը
- Ռեկտորի կողմից ներկայացվող ակադեմիայի գործունեության մասին տարեկան հաշվետվության գնահատումը
- Տարեկան ֆինանսական բյուջեի հաստատումը:

ԵԳՊԱ **գիտական խորհուրդը** ուսումնական, գիտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող և կարգավորող կառավարման մարմին է, որը ձևավորվում է ԵԳՊԱ կանոնադրության համաձայն: Գիտական խորհուրդը ստեղծվում է հինգ տարի ժամկետով: Գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են ռեկտորը, պրոռեկտորները, գիտական քարտուղարը, ֆակուլտետների դեկանները, ամբիոնների վարիչները, ակադեմիայի մասնաճյուղերի, ուսումնական և գիտական այլ ստորաբաժանումների ղեկավարները, ուսանողական խորհրդի ներկայացուցիչները և ֆակուլտետների կողմից ընտրված անդամները: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:

Գիտական խորհուրդն իր իրավասությունների սահմաններում.

- Հաստատում է իր գործունեության կանոնակարգը
- Հատկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում, ռեկտորի ներկայացմամբ, հաստատում է վճարովի հիմունքներով ըստ մասնագիտությունների ընդունելության տեղերը
- Մշակում է դիմորդների ընդունելության կանոնակարգի նախագծեր և ներկայացնում լիազոր մարմնին
- Քննարկում է ակադեմիայի՝ օտարերկրյա պետությունների հետ կապերի ուղղությունները, միջազգային համագործակցության ծրագրերը և ակադեմիայի կողմից կնքվող միջազգային պայմանագրերի նախագծերը
- Ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ակադեմիայի կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ,
- Հաստատում է ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումների օրինակելի կանոնակարգերն ու ներքին կարգապահական կանոնները
- Քննարկում է ակադեմիայի ուսումնական մասնագիտությունների ու մասնագիտացումների անվանացանկերը
- Հաստատում է ուսումնական պլաններն ըստ մասնագիտությունների
- Քննարկում է ակադեմիայի գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները
- Շնորհում է ակադեմիայի գիտական և պատվավոր կոչումներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգևատրում է ակադեմիայի մեդալով, պատվոգրով, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար ներկայացնում է թեկնածություններ
- Հաստատում է ակադեմիայի ֆակուլտետի դեկանի և ամբիոնի վարիչի ընտրությունների կարգերը
- Իրականացնում է ակադեմիայի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ, որոնք բխում են կանոնադրությունից:

ԵԳՊԱ-ի ընթացիկ ղեկավարումը իրականացնում է **ռեկտորը**, որն ընտրվում է հինգ տարի ժամկետով:

Ռեկտորի իրավասություններն են.

- ԵԳՊԱ-ի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության ղեկավարումը
- Պետական մարմիններում, կազմակերպություններում, հիմնարկներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ օտարերկրյա պետություններում ԵԳՊԱ-ն ներկայացնելը
- Ըստ մասնագիտությունների, մասնագետների պատրաստման և գիտահետազոտական աշխատանքների պետական պատվերների կատարումը
- Պայմանագրերի կնքումը, բանկերում հաշիվներ բացելը
- ԵԳՊԱ-ի կառուցվածքի և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունների սահմանումը
- Սահմանված կարգով ընտրված ղեկանների, ամբիոնների վարիչների և դասախոսների հետ աշխատանքային պայմանագրերի կնքումը: ԵԳՊԱ-ի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին պաշտոնի նշանակումը և պաշտոնից ազատումը, նրանց իրավունքների սահմանումը
- ԵԳՊԱ-ի կառավարման խորհրդի, գիտական խորհրդի ու ռեկտորատի նիստերի հրավիրումը և դրանց սերտ համագործակցության ապահովումը
- Աշխատողների և սովորողների նկատմամբ սահմանված կարգով կարգապահական ներգործության միջոցների կիրառումը
- ԵԳՊԱ-ի ֆինանսական միջոցների շրջանակներում աշխատողների աշխատավարձերի և հավելավճարի չափերի սահմանումը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան աշխատողների և սովորողների պարգևատրման ու ֆինանսական օգնությունների հետ կապված հարցերի լուծումը
- Ուսանողների և ասպիրանտների ընդունելության, կուրսից կուրս փոխադրելու, կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու և որակավորման աստիճան շնորհելու մասին հրամանների արձակումը
- Պրոռեկտորներին պաշտոնի նշանակումը և պաշտոնից ազատումը և նրանց գործունեության ոլորտների ու պարտականությունների սահմանումը
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

Ռեկտորատը ԵԳՊԱ ռեկտորին կից և նրա նախագահությամբ գործող խորհրդակցական մարմին է, որը կառավարման խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում քննարկում է ակադեմիայի գործունեությանը վերաբերող հարցեր: Ռեկտորատի կազմի մեջ մտնում են պրոռեկտորները, ռեկտորի խորհրդականը, գիտական քարտուղարը, ֆակուլտետների ղեկանները, ակադեմիայի ուսումնական և այլ ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ռեկտորի կողմից նշանակված անձիք: Ռեկտորատի որոշումները կենսագործվում են ռեկտորի հրամանով:

ԵԳՊԱ ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորները նշանակվում են ռեկտորի հրամանով, ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված

կարգով:

Ուսումնական վարչությունը իր մեջ ներառում է՝ Ուսումնամեթոդական բաժինը և Ուսումնական գործընթացի հաշվառման բաժինը: Ուսումնական վարչությունն իրականացնում է ԵԳՊԱ-ի կրթական գործընթացի կազմակերպումը/ապահովումը, կրթական ծրագրերի մշակման, իրականացման, գնահատման և բարելավման գործընթացների համակարգումը, ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման փաստաթղթերի մշակումը, ուսումնական ռեզիստի աշխատանքների իրականացումը՝ ուսանողների հետ կապված ամբողջ տեղեկատվության հավաքագրումը, մուտքագրումը, պահպանումը և հաշվետվությունների պատրաստումը:

Ուսումնամեթոդական բաժին: Վերջինիս գործառույթներն են՝ ամբիոնների ուսումնական բեռնվածության հաշվարկումը, դասաբաշխումների հաստատումը, դասացուցակների հաստատումը, պրակտիկաների կազմակերպումը, քննաշրջանների գրաֆիկների հաստատումը, ուսումնական պլաների մշակումը և բարելավումը, ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման փաստաթղթերի մշակումը, ուսումնական գործընթացի իրականացման վերահսկումը:

Ուսումնական գործընթացի հաշվառման բաժին: Վերջինիս գործառույթներն են՝ ուսանողների հրամանագրումը, ուսանողների գնահատականների գրանցումն ու պահպանումը, ռոտացիան, ուսանողների տեղափոխությունները, դիպլոմների, համապատասխան տեղեկագրերի և այլ փաստաթղթերի կառավարումը:

ԵԳՊԱ-ում գործում է երկու **Ֆակուլտետ**՝ Կերպարվեստի և Դիզայնի և ղեկորատիվ կիրառական արվեստի: Ֆակուլտետը իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում ԵԳՊԱ-ի կողմից ընդունված որոշումներին և ՀՀ օրենսդրությանը: Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից, ուսումնական այլ ստորաբաժանումներից: Ֆակուլտետի գործունեության կազմակերպումը և ղեկավարումն իրականացնում է ֆակուլտետի ղեկանը: Դեկանի նախագահությամբ գործում է ֆակուլտետի խորհուրդը:

Ֆակուլտետի խորհուրդը՝

- ԵԳՊԱ-ի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ (լաբորատորիաներ, բաժիններ) և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմավորելու և լուծարելու վերաբերյալ
- լուծում է ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ գործունեության հետ կապված հարցերը
- ռեկտորին ներկայացնում է ֆակուլտետի ուսումնական պլանները՝ ակադեմիայի գիտական խորհրդում հաստատելու համար
- ընտրում է գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչներին
- ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

Ֆակուլտետի ղեկանը՝

- ղեկավարում է ֆակուլտետի կրթական, գիտական, միջազգային և այլ գործունեությունը,
- ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ղեկանի տեղակալներին,
- սահմանված կարգով ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ

ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ:

Ամբիոնները ԵԳՊԱ-ի ուսումնագիտական գործընթացը կազմակերպող հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են, որոնք գործում են ԵԳՊԱ-ի կանոնադրության հիման վրա: Ամբիոնների գիտամանկավարժական կազմը բաղկացած է պրոֆեսորներից, դոցենտներից, ավագ դասախոսներից, դասախոսներից: ԵԳՊԱ-ում գործում են Գեղանկարի, Գրաֆիկայի և գծանկարի, Քանդակագործության, Կերպարվեստի տեսության և հումանիտար գիտությունների, Դեկորատիվ կիրառական արվեստի, համակարգչային գրաֆիկայի և հագուստի մոդելավորման, Գծանկարի ու գունանկարի միասնական և Դիզայնի ամբիոնները:

Մարդկային ռեսուրսների բաժնի գործառույթները ներառում են անձնակազմի հավաքագրումը և աշխատատեղերի համալրումը, աշխատանքի կատարողականի արդյունավետության և անձնակազմի կատարելագործման համակարգերի կառավարումը, անձնակազմի ծանրաբեռնվածության և նորմաների վերահսկումն ու պահպանումը, նոր աշխատակիցների խորհրդատվության և վերապատրաստումների կազմակերպումը, մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության մշակումն և համապատասխան գործավարությունը, աշխատակիցների անվտանգության, սոցիալական ապահովության և առողջությանը վերաբերվող հարցերի կարգավորումը, աշխատակիցներին օգնության և կոնսուլտացիաների տրամադրումը, աշխատակիցների նկատմամբ պարզևատրման կամ տույժի քաղաքականության կիրառումը:

Ֆինանսատնտեսական մասն իր մեջ ներառում է երկու ստորաբաժանում՝ հաշվապահություն և տնտեսական մաս: Վերջիններիս աշխատանքները իրականացվում են համապատասխան գծով պրոռեկտորի ղեկավարությամբ: Ֆինանսատնտեսական մասի հիմնական գործառույթներն են՝ ԵԳՊԱ գնումների կառավարումը համաձայն ՀՀ գնումների քաղաքականության, եռամսակային միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմակերպումն ու ներկայացումը, հաշվապահական և վերահսկողական ընթացակարգերի սահմանումն ու իրականացումը, բյուջեի վերլուծությունն ու վերանայումը, եկամուտների, ծախսերի, հաշիվների և այլ հաշվապահական հաշվառման փաստաթղթերի գործավարությունը, եկամուտների և ծախսերի վերահսկումը, հաշվապահական հաշվառման քաղաքականության ներկայացումը աշխատակիցներին և մյուս շահակիցներին, համագործակցությունը ներքին և արտաքին աուդիտների հետ, աշխատավարձի հաշվարկը, հիմնական միջոցների հաշվառումն ու մաշվածության հաշվարկը, բանկային գործառույթները, այլ ֆինանսատնտեսական հարցերի լուծումը:

Արտաքին կապերի բաժինը տրամադրում է տեղեկատվական ծառայություններ և հանդես է գալիս որպես միջնորդ ԵԳՊԱ-ի և հայաստանյան ու արտասահմանյան հաստատությունների միջև՝ տրամադրում է խորհրդատվություն հանրապետական և միջազգային գիտական ու մասնագիտական իրադարձությունների վերաբերյալ, մշակում է ծրագրեր և աջակցում միջազգային ծրագրերի իրականացմանը և կառավարմանը, աջակցում է ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերին, հաստատում է կապեր արտասահմանյան հաստատությունների հետ, կարգավորում է արտասահմանյան ուսանողների ուսումը և պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքը և կացությունը ՀՀ-ում, համակարգում է արտերկրից եկող ուսանողների վիզաների և այլ հարցերը, մշակում, խորհրդատվություն է տրամադրում ԲՈՒՀ-ի

միջազգայնացման քաղաքականության և ռազմավարության վերաբերյալ, կարգավորում է ԵԳՊԱ-ի արտասահմանյան այցելուների հետ նախնական համաձայնությունները և ծրագրերը, հավաքագրում է համապատասխան տեղեկություններ միջազգային դրամաշնորհներ տրամադրող կազմակերպությունների վերաբերյալ և միջազգային համագործակցության հնարավոր ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև տարածում է այդ տեղեկատվությունը ԵԳՊԱ-ի շահակիցների շրջանում:

Կարիերայի կենտրոնը ստեղծվել է «ԵԳՊԱ-աշխատաշուկա» կապի ընդլայնման ու ամրապնդման և ուսանողների, շրջանավարտների, գործատուների մասին տվյալների բազայի կառավարման նպատակով:

Կենտրոնն իրականացնում է աշխատաշուկայի ուսումնասիրություն, ուսանողների աշխատանքի տեղավորման և խորհրդատվական ծառայություններ, քաղաքացիական ծառայողների վերապատրաստում, տվյալների հավաքագրման մեխանիզմների մշակում, տվյալների բազայի ընդլայնում, տվյալների նախնական վերլուծություն, խորհրդատվություն ուսանողների հետագա կարիերայի վերաբերյալ, շրջանավարտների և գործատուների հետ կապի հաստատում, աշխատաշուկայում ԵԳՊԱ-ում իրականացվող ՄԿԾ-երի ներկայացում՝ տարբեր լրատվական միջոցներով: Կենտրոնը նաև շնորհանդեսներ է կազմակերպում ավագ դպրոցներում, ներկայացնում ԵԳՊԱ-ն՝ դիմորդներ ներգրավելու համար:

2014 թ. Նոյեմբերին ՏԵՄՊՈՒՄի Veritas ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ում բացվեց **Հետազոտական կենտրոնը**: Կենտրոնի գործունեության նպատակն է կրթական երրորդ աստիճանի՝ ասպիրանտուրայի բարեփոխումների իրականացումն ըստ Զալցբուրգյան սկզբունքների: Կենտրոնը զբաղվում է ԵԳՊԱ-ի գիտահետազոտական ուղղությունների ռազմավարության մշակմամբ, ԵԳՊԱ դասախոսների և ուսանողների հետազոտական աշխատանքների կազմակերպմամբ և համակարգմամբ, ԵԳՊԱ-ի գիտական հանդեսի՝ «Տարեգիրք»-ի հրատարակչական աշխատանքներով:

ԵԳՊԱ-ին կից գործում է Ալբեր և Թովե Բոյաշյան **ցուցասրահը**, որը հնարավորություն է ընձեռում արվեստագետ դասախոսներին, սկսնակ արվեստագետներին, ուսանողներին ցուցադրել իրենց ստեղծագործությունները: Ցուցասրահի աշխատակիցները պլանավորում և կազմակերպում են ցուցադրությունները, լուսաբանում են ցուցասրահում կայացած և կայանալիք միջոցառումները ԵԳՊԱ պաշտոնական ինտերնետային կայքում և լրատվական այլ միջոցներով, կազմակերպում քննարկումներ և հանդիպումներ արվեստաբանների և արվեստագետների հետ:

Որակի ապահովման կենտրոնը ԵԳՊԱ-ի կառուցվածքային անկախ ստորաբաժանում է, որը ենթարկվում է ուղղակիորեն ռեկտորին: Կենտրոնի անկախությունը երաշխավորում է ինքնագնահատման անաչառությունը: Կենտրոնի աշխատանքները կարգավորվում են ռեկտորի կողմից հաստատված ՈԱ կենտրոնի կանոնակարգի դրույթներով (տե՛ս հավելված 2.2): Կենտրոնի գործառույթներն են.

- Համակարգել ՈԱ ներքին գործընթացները
- Մեկնաբանել որակի ապահովման արտաքին պահանջները և հասու դարձնել բոլոր շահակիցների և ՈԱ գործընթացներին մասնակցող կազմի համար
- Իրականացնել ամենամյա ինքնագնահատման հաշվետվության պատրաստման ինստիտուցիոնալ և ծրագրային գործընթացները
- Վերապատրաստել անձնակազմը որակի ապահովման մոտեցումների շուրջ
- Բարձրացնել շահակիցների տեղեկացվածությունը ԵԳՊԱ-ում իրականացվող

գործընթացների վերաբերյալ:

- Կազմակերպել և լուսաբանել որակի ապահովման արտաքին գործընթացների հետ կապված հարցերը
- Մշակել մշտադիտարկման մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր լինի իրականացնել բարելավում՝ ՊԻՄԲ սկզբունքով
- Նպաստել ԵԳՊԱ-ի բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը
- Մշտադիտարկման ենթարկել ամբիոնների կողմից կրթական ծրագրերի վերանայման գործընթացը՝ կրթական ծրագրերը եվրոպական կրթական չափանիշերին համապատասխանեցնելու համար
- Մշակել մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր կլինի գնահատել.
 1. Դասավանդման մեթոդաբանությունը
 2. Ուսանողների գնահատման համակարգը
 3. ԵԳՊԱ-ում առկա ռեսուրսները և տրամադրվող ծառայությունները
 4. Պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի աշխատանքը
 5. Ընդունելության կարգը
 6. Դիմորդների տեղեկացվածությունը
 7. ԵԳՊԱ-ի շրջանավարտներից գործատուների գոհունակության աստիճանը
 8. ԵԳՊԱ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության մակարդակը:

ԵԳՊԱ-ում գործում է արվեստի պատմության, մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ հազեցած **գրադարան**: Գրադարանի աշխատակիցներն իրականացնում են պլանավորում և ներկայացնում են գրադարանի գործողությունները և տեղեկատվական ծառայությունները, ապահովում են գրադարանի հավաքածուների և ռեսուրսների հասանելիությունը ուսանողությանը և պրոֆեսորադասախոսական կազմին, կազմակերպում են գրադարանի նյութերի պահպանումը, տրամադրում են խորհրդատվական ծառայություններ գրադարանից օգտվողներին, ապահովում են գրադարանային ռեսուրսների վնասվածքների վերացումը, կատարում են վիճակագրություն, ներկայացնում են պահանջարկ ունեցող գրականության ցանկը: Առաջիկայում նախատեսվում է գրադարանային ռեսուրսների թվայնացում:

ԵԳՊԱ-ում առկա է նաև **պարետային ստորաբաժանում և բուժօգնության կետ**:

ԵԳՊԱ յուրաքանչյուր ստորաբաժանում ունի կանոնակարգ (տե՛ս հավելված 12), որտեղ հստակ սահմանված են ստորաբաժանման գործառույթները, յուրաքանչյուր աշխատակցի պարտականությունները: Ստորաբաժանումներն ապահովված են համապատասխան քանակի և որակի մարդկային ռեսուրսներով:

ՌԾ նպատակների և խնդիրների հիման վրա յուրաքանչյուր ստորաբաժանում իրականացնում է տարեկան պլանավորում: Ստորաբաժանումների նյութական ռեսուրսերի ապահովումը կազմակերպվում է տարեկան կտրվածքով կարիքների վերհանման միջոցով, և պահանջվող ռեսուրսների ցանկը կցվում է տարեկան պլանին: Ընթացքում առաջացած կարիքները նույնպես բավարարվում են զեկուցագրերի հիման վրա: Ստորաբաժանումների պլանների համահունչ լինելը ապահովում է ստորաբաժանումների փոխկապակցված գործունեությունը: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ տարեկան պլանավորման ընթացքում հաշվի է առնվում նաև ստորաբաժանումների

համագործակցությունը այն գործընթացների սահմաններում, որոնք պահանջում են մի քանի ստորաբաժանման համատեղ աշխատանքը:

բ) Ընթացակարգային

- Ո՞ր գործընթացներն են լավ աշխատում որակյին առնչվող քաղաքականության իրականացման համար:
- Որակի քաղաքականության իրականացման համար պատասխանատու անձանց կողմից ո՞ր գործընթացները բարելավման կարիք ունեն:
- Արդյո՞ք գործընթացներում փոփոխություններ պլանավորվում են, եթե այո, ապա ինչու՞:

ԵԳՊԱ-ն որակի քաղաքականությունը սահմանում է խնդիրների ձևակերպման, գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի, բոլոր գործընթացների որակի վերահսկողության, ապահովման և շարունակական բարելավման շրջանակում՝ իր գործունեության բոլոր փուլերում կարևորելով ՊԻՄԲ սկզբունքը:

ԵԳՊԱ-ի որակի քաղաքականությունը արտացոլվում է մի շարք փաստաթղթերում, որոնք հաջողությամբ համակարգում են ընթացիկ գործընթացները.

- ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ, (տե՛ս հավելված 8)
- Որակի ապահովման ձեռնարկ, (տե՛ս հավելված 2)
- ՄԿԾ-ների մշակման և վերանայման ձեռնարկ, (տե՛ս հավելված 5)
- ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգ (տե՛ս հավելված 13) և այլն:

ԵԳՊԱ-ի գործունեության արդյունավետ իրականացման համար բուհը հաշվի է առնում բարձրագույն կրթության ոլորտում ներկայիս պահանջները՝ որակի ներքին ապահովման տեսանկյունից, ուստի իր գործընթացներն իրականացնում է ՊԻՄԲ շրջափոփ հիման վրա, օրինակ տարեկան պլանավորման և պլանի իրականացման գործընթացը հիմնված է «ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործողությունների պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ»-ի վրա (տե՛ս հավելված 8):

- **Պլանավորում**՝ ստորաբաժանումների գործողությունների տարեկան պլանավորում՝ համաձայն ՌԾ-ի:
- **Իրականացում**՝ պլանով նախատեսված գործողությունների փաստացի իրականացում, եռամսյա և տարեկան հաշվետվության ներկայացում:
- **Ստուգում**՝ հատուկ հանձնաժողովի կողմից պլանով նախատեսված և իրականացված գործողությունների համեմատություն և արդյունքների ստուգում: Հանձնաժողովի արձագանք՝ յուրաքանչյուր ստորաբաժանմանը:
- **Բարելավում**՝ քայլեր հետագա ավելի հստակ պլանավորման և արդյունավետ իրականացման համար:

Ստորաբաժանումների տարեկան պլանավորումը համակարգվում է ուսումնագիտական գծով պրոռեկտորի կողմից և իրականացվում ստորաբաժանումների կողմից: Տարեկան պլանավորման ու հաշվետվողականության գործընթացները համակարգվում են գնահատող հանձնաժողովի և ՈԱ կենտրոնի կողմից: Եռամսյակային հաշվետվությունների միջոցով իրականացվում է ստորաբաժանման գործունեության

մոնիտորինգ, իսկ հետագայում նախատեսվում է տարեկան հաշվետվությունների հիման վրա ՈԱ կենտրոնի հետ համատեղ կատարել ստորաբաժանման գործունեության գնահատում: Մոնիտորինգի արդյունքում ստորաբաժանումներին ներկայացվում է գրավոր կարծիք իրենց գործունեության վերաբերյալ, որը հաշվի է առնվում հաջորդ տարվա տարեկան պլանավորման ժամանակ:

ԵԳՊԱ բոլոր ստորաբաժանումների տարեկան հաշվետվությունները ամփոփվում են ռեկտորի ամենամյա զեկույցում, որը հրապարակվում է ԵԳՊԱ պաշտոնական կայքէջում՝ թափանցիկություն ապահովելու նպատակով:

ԵԳՊԱ-ում իրականացվող գործընթացների որակի վերահսկողության արդյունավետությունը նախկինում չափելի չէր, այնինչ այժմ դա կիրականացվի ՌԾ-ում սահմանված կատարողականի ցուցիչների՝ KPI-ների միջոցով, ինչը թույլ կտա գնահատել գործընթացների իրականացման մակարդակը, ինչպես նաև սահմանված նպատակների և խնդիրների իրականացման արդյունավետությունը:

գ) Մշակութային

- Ներքին շահակիցներին բնորոշ ո՞ր արժեքները ու վարքագծի ձևերն են իրենց դրական ազդեցությունը ունենում դասավանդման և ուսուցման որակի կառավարման վրա:
- Շահակիցների հատկապես ո՞ր խումբն է օգնում դասավանդման և ուսուցման որակի կառավարմանը: Ո՞ր խմբերն են քիչ ներգրավված: Որո՞նք են ակտիվ կամ պասիվ ներգրավման պատճառները:
- Որո՞նք են բնորոշ իրավիճակները, որոնք տանում են որակի կառավարման համակարգի կառուցվաքային և ընթացակարգային փոփոխությունների: Ովքե՞ր են ներգրավված այդ փոփոխություններում:

ԵԳՊԱ-ն դասավանդման և ուսումնառության որակի կառավարման գործընթացներում հատկապես կարևորում է.

- **Պրոֆեսորադասախոսական կազմի** պատրաստակամությունը՝ ուսանողներին մասնագիտական հմտությունների փոխանցման հարցում
- **Վարչական կազմի** պատրաստակամությունը արդյունավետ կրթական միջավայրի ստեղծման հարցում
- Ուսանողների պատրաստակամությունը մասնակցելու բուհի գործընթացների իրականացմանը
- Թիմային աշխատանքը և կոլեգիալ պատասխանատվությունը:

Նշված արժեքները նպաստում են հաստատությանը առավել արդյունավետ համակարգել և կառավարել բուհի գործընթացները: Արվեստի բուհին բնորոշ առանձնահատկություններն իրենց ազդեցություն են ունենում նաև հաստատության որակի կառավարման վրա:

Վերոնշյալ արժեքների տեղայնացման նպատակով, ԵԳՊԱ-ն որոշումների կայացման և մի շարք այլ գործընթացներում ներգրավում է ներքին և արտաքին շահակիցների, օրինակ ուսանողների ներգրավվածությունն ապահովելու և նրանց մասնկացությունը որոշում կայացնելու ու բարեփոխումների գործընթացներում առավել արդյունավետ դարձնելու համար, Ակադեմիան, մասնակցելով ՏԵՄՊՈՒՄ-ի ESPAQ դրամաշնորհային ծրագրին՝

ստեղծել է Ուսանողական համայնք, որն ակտիվորեն մասնակցում է բուհի որակի ապահովման գործընթացներին՝ բարձրացնելով ուսանողներին առավել հուզող հարցերը:

Դասավանդման և ուսուցման որակի կառավարման գործընթացներում հիմնականում ներգրավված են վարչական, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, որոնցից յուրաքանչյուրը իր գործունեությամբ նպաստում է ոչ միայն դասավանդման և ուսուցման, այլ նաև բուհի գործունեության այլ ոլորտների որակի ապահովմանը: Արտաքին շահակիցների (գործատու, Մշակույթի նախարարություն, Մասնագիտական միություններ) ներգրավվածությունը փոքր է պասիվ համագործակցության պատճառով:

ԵԳՊԱ որակի կառավարման համակարգում փոփոխություններ և վերանայումներ կարող են իրականացվել՝ հաշվի առնելով արտաքին պահանջները, ինչպես նաև ներքին ինստիտուցիոնալ գործընթացները: Կախված փոփոխության բնույթից, ներգրավված շահակիցները կարող են տարբերվել. օրինակ վերջնարդյունքահեն կրթական ծրագրեր/ դասընթացներ ունենալը արտաքին պահանջ էր, որի իրականացման համար ներգրավվեցին ԵԳՊԱ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի ներկայացուցիչներ:

II. Կրթական ծրագրեր /դասընթացներ/

II.1. Կրթական ծրագրերի մշակում և զարգացում

ա) Բնաստիտուցիոնալ

- Հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարման տեսանկյունից, ինչը^օ ազդեցություն ունի կրթական ծրագրերի մշակման և հետագա զարգացման արդյունավետության վրա:
- Որպես կանոն ո՞վ է նախաձեռնում կրթական ծրագրերի հետագա զարգացումը:
- Ի՞նչ մարտահրավերներ գոյություն ունեն կրթական ծրագրերի ամբողջական փաթեթի հետագա զարգացման համար:
- Կրթական ո՞ր առաջարկներն են համարվում ապագային համապատասխան և ինչու^օ:

ԵԳՊԱ աշխատանքային խումբը ՏԵՄՊՈՒՄ «Մասնագիտության կրթական ծրագրերի և որակավորումների ազգային շրջանակի միջև համապատասխանության ապահովում և ստուգում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակել է «Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և վերանայման ձեռնարկ» (տե՛ս հավելված 5) կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացները առավել համակարգելու նպատակով, որտեղ մանրամասն ներկայացված է ՄԿԾ-երի մշակման և վերանայման անհրաժեշտ գործողությունների կազմակերպման գործընթացը:

Նախկինում կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացները այդքան էլ համակարգված չէին, քանի որ դրանց հիմքում չկային հստակ սահմանված չափանիշեր և չափորոշիչներ: Ձեռնարկը ամբողջական քաղաքականություն է, որի նպատակն է համակարգել ԵԳՊԱ-ում ՄԿԾ-երի և ՀՀ ՈԱԾ-ի ու արտաքին և ներքին շահակիցների պահանջների համապատասխանեցման գործընթացը: Ձեռնարկը ոչ միայն ապահովում է ծրագրերի մշակման և վերանայման գործընթացների արդյունավետությունը, այլ նաև հստակ սահմանում է՝ աշխատանքային խմբերի ձևավորումը, ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանությունը, անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները և այլն:

Համաձայն ձեռնարկի աշխատաշուկայում նոր ՄԿԾ-ի ստեղծման կամ գոյություն ունեցող ՄԿԾ-ի վերանայման անհրաժեշտության բացահայտման դեպքում ստեղծվում է հանձնաժողով, որում ներգրավվում են ամբիոնների առաջատար դասախոսներ, ուսումնական վարչության ներկայացուցիչ և ուսանողներ: Հանձնաժողովի ձևավորման համար պատասխանատու է ուսումնագիտական գծով պրոռեկտորը: Հանձնաժողովում Ուսումնական վարչությունը պատասխանատու է ՀՀ ԿԳ նախարարության, Եվրոպական կրթական տարածքի և ԵԳՊԱ-ի կողմից ընդունված իրավական ու այլ պահանջների և ձևաչափերի համաձայն ՄԿԾ կազմելու համար: Հանձնաժողովը կատարում է միջազգային առաջատար ՄՈՒՀ-երի ՄԿԾ-երի ուսումնասիրություն, հանդիպումներ է կազմակերպում ոլորտի գործատուների և այլ հիմնական շահակիցների հետ, սահմանում/վերանայում է նոր կամ գոյություն ունեցող ՄԿԾ-ի առաքելությունը, նպատակները, ուսումնառության վերջնարդյունքները, դրանք ձևավորող դասընթացների ցանկը, դասընթացների նկարագրությունը և ամբողջական փաթեթը ներկայացնում շահակիցներին՝ քննարկման համար: Հավանության դեպքում փաթեթը ներկայացվում է ԵԳՊԱ գիտական խորհրդի քննարկմանը և դրական կարծիքի դեպքում հաստատվում գիտական խորհրդի նիստում:

ՄԿԾ-ի կառուցվածքային փոփոխության նախաձեռնողը վարչական մասն է, իսկ բովանդակային փոփոխության նախաձեռնողը հիմնականում ամբիոնները: Նոր ՄԿԾ-երի մշակումը կամ գործող ՄԿԾ-երի վերանայումը կարող է պայմանավորված լինել բարձրագույն կրթության ոլորտում ազգային և միջազգային նոր մոտեցումներով, մասնագիտական ոլորտների հիմնական շահակիցների պահանջով և այլ արտաքին ու ներքին ազդակների առաջացման դեպքում:

ԵԳՊԱ-ում կրթական ծրագրերի զարգացման գործընթացում կարևոր մարտահրավերներն են՝

- համադրելի և մրցունակ ՄԿԾ-երի մշակումը: Այս ուղղությամբ բուհը արդեն իրականացրել է համապատասխան միջոցառումներ: Բուհը արդեն վերանայել է բակալավրի 3 («Համակարգչային գրաֆիկա», «Դիզայն», «Հագուստի մոդելավորում») և մագիստրատուրայի 3 («Համակարգչային գրաֆիկա», «Դիզայն», «Հագուստի մոդելավորում») կրթական ծրագրեր՝ դարձնելով դրանք վերջնարդյունքահեն: Բուհը վերանայել է նաև ԵԳՊԱ հետբուհական կրթական ծրագիրը՝ դարձնելով Զալցբուրգյան սկզբունքներին համահունչ: Առաջիկայում նախատեսվում է վերանայել ԵԳՊԱ մյուս կրթական ծրագրերը ևս՝ դարձնելով դրանք վերջնարդյունքահեն:
- պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացում: Այս տեսանկյունից հատկանշական է նրանց շրջանում մասնագիտական նոր հմտությունների ձևավորումը և տարածումը: Վերջինիս նպատակով, բուհը մշտապես իրականացնում է պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ:
- բուհ-գործատու շարունակական կապի ամրապնդում: Մինչ այժմ գործատուների հետ կապը պահպանվել է միայն նրանց շրջանում հարցումների իրականացման միջոցով: Ներկայումս բուհը պլանավորում է առավել ակտիվացնել բուհ-գործատու համագործակցությունը պարբերաբար անցկացվող հանդիպումների միջոցով:
- ուսանողների ներգրավվածության մեծացում կրթական ծրագրերի մշակման և զարգացման գործընթացներում: Մինչ այժմ ուսանողների ներգրավվածությունը ապահովվել է նրանց շրջանում իրականացվող հարցումների միջոցով, սակայն «ՄԿԾ-երի մշակման և վերանայման ձեռնարկ»-ը հնարավորություն է տալիս ապահովել նրանց ներգրավվածությունը նաև ՄԿԾ մշակման և/կամ բարելավման բուն գործընթացում:

ԵԳՊԱ կրթական ծրագրերը ապագային համապատասխան են, քանի որ դրանք հիմնված են ստեղծագործական և ստեղծարար մտածողության, նոր գաղափարների ու նորարարության վրա: ՄԿԾ-երի հիմնական մասը («Դիզայն», «Համակարգչային գրաֆիկա», «Հագուստի մոդելավորում») արդի և մրցունակ են: Հաշվի առնելով այս հանգամանքը, վերանայման առաջնահերթությունը տրվել է վերոնշյալ մասնագիտություններին՝ բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններում: ԵԳՊԱ մյուս կրթական ծրագրերը («Գեղանկարչություն», «Քանդակագործություն», «Գրաֆիկա», «Դեկորատիվ կիրառական արվեստ», «Արվեստի տեսություն և պատմություն») նպաստում են հասարակության զեղազիտական ճաշակի բարձրացմանը և ազգային մշակույթի տարածմանը:

բ) Ընթացակարգային

- Արդյո՞ք կրթական առաջարկների մշակման և հետագա զարգացման գործընթացները արդյունավետ են: Ի՞նչն է լավ աշխատում և ի՞նչը բարելավման կարիք ունի:
- Արտաքին պահանջների (իրավական, հասարակական, մասնագիտական) ներդրման գործընթացում ո՞ր մասն է լավ աշխատում, ո՞ր մասը բարելավման կարիք ունի, որո՞նք են պատճառները:
- Կրթական ծրագրերի հետագա զարգացման խթանների համակարգված հավաքագրման համար ի՞նչ գործընթացներ գոյություն ունեն:

ԵԳՊԱ կրթական ծրագրերի մշակման և հետագա բարելավման գործընթացները ներկայումս արդյունավետ են, քանի որ բուհը հիմնովին վերանայել է ՄԿԾ-երի մշակման և վերանայման գործընթացները՝ դարձնելով դրանք առավել կանոնակարգված և համակարգված: ՄԿԾ մշակման և վերանայման նոր ընթացակարգը հնարավորություն է տալիս՝

- մշակել ԵԲԿՏ-ին և ՀՀ ՈԱՇ-ին համապատասխան կրթական ծրագրեր՝ համաձայնեցնելով ՄԿԾ-երի վերջնարդյունքները տվյալ կրթական մակարդակում ՀՀ ՈԱՇ-ի նկարագրիչներին: Շնորհիվ նոր քաղաքականության, բուհը արդեն ունի կրթական ծրագրերի վերջնարդյունքները ՀՀ ՈԱՇ-ին համապատասխանեցնելու փորձ: «Հագուստի մոդելավորում», «Համակարգչային գրաֆիկա», «Դիզայն» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը վերանայվել ու համապատասխանեցվել են ՀՀ ՈԱՇ-ի նկարագրիչներին: Արդյունքում վերանայվել է դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդաբանությունը: Ձեռքբերված լավագույն փորձը կկիրառվի մյուս կրթական ծրագրերի վերանայման համար:
- ապահովել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում: Նախկինում շահակիցների ներգրավվածությունը սահմանափակվում էր նրանց շրջանում իրականացվող հարցումներով, սակայն նոր քաղաքականությունը թույլ է տալիս ապահովել նրանց փաստացի մասնակցությունը ՄԿԾ-երի մշակման և վերանայման բուն գործընթացներում:
- հստակ սահմանել և տարանջատել ՄԿԾ-երի մշակման և վերանայման գործընթացներում ներգրավված շահակիցների գործառնությունները: Նախկինում կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում հիմնականում ներգրավված էին ամբիոնները: Այժմ ԵԳՊԱ-ն ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում ներգրավում է շահակիցներին:

Կրթական ծրագրերի հետագա զարգացման խթանների համակարգված հավաքագրման համար, բուհը շարունակաբար ուսումնասիրություններ է իրականացնում թիրախային տարբեր խմբերում հարցումների միջոցով, որոնց արդյունքները կարող են դառնալ բարելավումների իրականացման հիմք: Օրինակ՝ նման հարցումների վերլուծությունների արդյունքում վերանայվեցին «Դիզայն», «Համակարգչային գրաֆիկա» և «Հագուստի մոդելավորում» ՄԿԾ-երը, ինչպես նաև վերազինվեցին այդ կրթական ծրագրերի լաբորատորիաները:

զ) Մշակութային

- Կրթական առաջարկների մշակման և հետագա զարգացման գործընթացում ներգրավված շահակիցներից ի՞նչ է ակնկալվում: Ու՞մ մասնակցությունն է ակնկալվում: Արդյո՞ք ներգրավվումը աշխատում է այնպես, ինչպե՞ս ակնկալվում էր:
- Եթե ներգրավված շահակիցների միջև կոնֆլիկտներ են առաջանում, ապա ինչպե՞ս են դրանք հաղթահարվում:
- Ինչքանո՞վ են շահակիցները ցանկանում մասնակցել և որքանո՞վ են նրանք տեղեկացված:

ԵԳՊԱ-ն կարևորում է ՄԿԾ-երի մշակման գործընթացում ներքին և արտաքին շահակիցների **ներգրավումը**՝ կարծիքների ազատ փոխանակման և տարբեր տեսակետերից ՄԿԾ-երին ներկայացվող պահանջների ձևավորմանը նպաստող **միջավայրի ստեղծման** միջոցով: Ներգրավված անձանցից ակնկալվում է գործընթացին քննադատական և օբյեկտիվ մոտեցում, նոր մոտեցումների ընդունման և կիրառման պատրաստակամություն, ճկունություն թիմում աշխատելու համար:

Կրթական ծրագրերի մշակման և հետագա զարգացման գործընթացներում ներգրավվող շահակիցների կազմը սահմանվում է համաձայն «ՄԿԾ-երի մշակման և վերանայման ձեռնարկ»-ի: Համաձայն վերջինիս, բացի ԵԳՊԱ պրոֆեսորադասախոսական կազմից, ՄԿԾ-երի մշակման/վերանայման գործընթացում ներգրավվում են համագործակցող և/կամ ոլորտի առաջատար կազակերպությունների, ԵԳՊԱ շրջանավարտներ ունեցող հաստատությունների գործատուներ: Ոչ բոլոր շահակիցներն են հետաքրքրված ներգրավվելու ծրագրերի մշակման և հետագա զարգացման գործընթացներում, ուստի բուհը համագործակցում է շահագրգռված շահակիցների հետ, ովքեր պատրաստ են իրենց դրական ներդրումն ունենալ կրթական ծրագրերի մշակման և հետագա զարգացման գործընթացներում: Շահակիցների հետ համագործակցության ընթացքում կարող են առաջանալ տարբեր տեսակետեր մեկ հարցի շուրջ, նման կոնֆլիկտները լուծվում են քննարկումների, պարզաբանումների միջոցով:

**II.2. Կրթական ծրագրերի / դասընթացների / վերապատրաստումների իրականացում
ա) Ինստիտուցիոնալ**

- Կրթական առաջարկների իրականացման գործընթացում որո՞նք են կառուցվածքային, ինչպես նաև մարդկային և նյութական ռեսուրսների ուժեղ կողմերը:
- Ամենօրյա աշխատանքում որո՞նք են կառուցվածքային (օր.՝ ստորաբաժանումների և նրանց միջև հաղորդակցական կապերի, որոշումների կայացման ուղիների) և մարդկային ու նյութական ռեսուրսների թույլ կողմերը:

Կրթական ծրագրերի իրականացման գործընթացի պատասխանատուներն են ուսումնագիտական գծով պրոռեկտորը, ուսումնական վարչությունը, դեկանատները, ամբիոնները՝ յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակում:



Ուսումնական վարչությունը պատասխանատու է ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակման և գործող կանոնակարգերի լրամշակման, միջազգային փորձի ուսումնասիրության և դրական փորձի ներդրման, ուսումնական պլանների կազմման, ուսումնական բեռնվածության հաշվարկման, ուսանողների առաջադիմության արդյունքների գրանցման, ուսանողների տեղափոխումների, շրջանավարտների դիպլոմների և դիպլոմի միջուկների, ակադեմիական տեղեկանքների և ուսումնական գործընթացի արդյունքների հետ կապված այլ փաստաթղթերի և տեղեկատվության տրամադրման համար:

Տակուլտետի դեկանատը պատասխանատու է դասացուցակների, դասընթացների

անցկացման կազմակերպչական աշխատանքների՝ լսարանների հատկացում, քննությունների կազմակերպում ու ժամանակացույցի մշակում և ուսումնական միջավայրի ապահովման համար:

Ամբիոնները պատասխանատու են ՄԿԾ-երի, առարկայական նկարագրերի կազմման, դասընթացների արդյունավետ իրականացման համար՝ թե՛ մարդկային և թե՛ նյութական ռեսուրսների ապահովմամբ, քննությունների անցկացմամբ:

Ամբիոնները համալրված են որակյալ պրոֆեսորադասախոսական կազմով՝ արվեստի ժողովրդական և վաստակավոր գործիչներ, գիտության աստիճաններ և կոչումներ ունեցող անձիք, աշխատաշուկայում մեծ համբավ վայելող մասնագետներ, ինչպես նաև երիտասարդ ԵԳՊԱ շրջանավարտներ (կազմը տե՛ս՝ հավելված 14): Հետևաբար, կրթական ծրագրերի իրականացման գործընթացում մարդկային ռեսուրսների տեսանկյունից ուժեղ կողմ է համարվում ամբիոնների համապատասխան քանակի և որակի դասավանդող կազմ ունենալը: Պրոֆեսորադասախոսական կազմն ունի անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ԵԳՊԱ-ն էլ իր հերթին, շարունակաբար օժանդակում է դասավանդման գործընթացում նոր մոտեցումների և մեթոդների կիրառմանը:

Նյութական ռեսուրսների տեսանկյունից կրթական ծրագրերի ուժեղ կողմերից է համալրված լաբարատորիաները, արհեստանոցները և արվեստանոցները. «Հագուստի մոդելավորում», «Համակարգչային գրաֆիկա», «Դեկորատիվ կիրառական արվեստ» և մի շարք այլ կրթական ծրագրեր ամբողջությամբ համալրված են անհրաժեշտ աշխատանքային միջոցներով: ԵԳՊԱ-ն շարունակում է ձեռք բերել անհրաժեշտ նյութական ռեսուրսներ՝ կրթական բոլոր ծրագրերին բավարարելու նպատակով: Կրթական ծրագրերի իրականացման ամենօրյա բնականոն ընթացքին, երբեմն, խոչընդոտում է լսարանների սակավությունը:

բ) Ընթացակարգային

- Ծրագրերի իրականացման ժամանակ n ՝ ընթացակարգերն (օր.՝ կրթական ծրագրերի մատուցում, դասավանդման գործընթաց) են լավ աշխատում: Ի՞նչը կարող է լավ փորձ համարվել:
- Ո՞ր գործընթացները հատկապես ուշադրության կարիք ունեն համապատասխան անձանց կողմից: Որո՞նք են պատճառները:
- Որտեղի՞ց են առաջանում փոփոխություն կամ բարելավում իրականացնելու խթանները: Ինչպե՞ս են դրանք տեղայնացվում հաստատության համակարգում և որո՞նք են այն գործընթացները, որոնք առնչվում են այդ խթանների հետ:

Կրթական ծրագրերի իրականացման գործընթացում բուհում լավ աշխատել և աշխատում են մի շարք գործընթացներ, ինչպիսիք են.

- Մասնագիտական դասընթացների սահմաններում ուսանողի կոլեգիալ գնահատում: Կիսամյակային ամփոփիչ քննությունների ժամանակ ուսանողը գնահատվում է ամբիոնի դասախոսներից կազմված հանձնաժողովի կողմից:
- Ձևավորող գնահատում, որի ընթացքում դասախոսները արձագանքում են ուսանողի կատարած աշխատանքին՝ նպաստելով աշխատանքի կատարելագործմանը և ակնկալվող ուսումնառության վերջնարդյունքների ձևավորմանը:
- Կիրառական մասնագիտությունների ուղղությամբ խնդիրների լուծման վրա հիմնված

ուսուցման իրականացում:

ԵԳՊԱ-ն արձագանքելով բարձրագույն կրթության ժամանակակից միտումներին, բուհի հիմնական գործընթացները իրականացնում է ՊԻՄԲ շրջափուլի հիման վրա: Ստորև ներկայացվում է ՊԻՄԲ շրջափուլի իրականացումը կրթական ծրագրերի տեսանկյունից:

Պլանավորում՝ ՄԿԾ-ի նկարագրին համապատասխան՝ ուսումնական պլանների մշակում և հաստատում, առարկայական նկարագրերի կազմում, դասացուցակի կազմում:

Իրականացում՝ Դասընթացների իրականացում ըստ ուսումնական պլանի և դասացուցակի՝ համապատասխան արվեստանոցներում և լսարաններում: ՄԿԾ-ի իրականացման մեկնարկ է հանդիսանում դիմորդների ներգրավումը, որի համար, ԶԼՄ-ներում, «Հայաստանի բուհեր» և նմանատիպ տեղեկատուներում տեղադրված հայտարարություններից բացի, ԵԳՊԱ-ն հանդիպումներ է կազմակերպում ՀՀ ավագ դպրոցներում և վարժարաններում, որոնց ընթացքում ներկայացվում են ԵԳՊԱ ՄԿԾ-երը:

ԵԳՊԱ-ն անց է կացնում նաև նախապատրաստական դասընթացներ՝ դիմորդների համար:

Ընդունելության քննությունները բարեհաջող հանձնած ուսանողների կրթական բուն գործընթացը ներառում է՝

- Մասնակցություն դասախոսություններին՝ տեսական նյութի մատուցում
- Աշխատանք արվեստանոցներում, արհեստանոցներում և լաբորատորիաներում՝ տեսական գիտելիքի կիրառում և գործնական կարողությունների զարգացում
- Ինքնուրույն անհատական և խմբային աշխատանքներ
- Գրականության ուսումնասիրություն
- Կատարած աշխատանքների ներկայացում և ցուցադրությունների մասնակցություն
- Ուսումնաարտադրական պրակտիկա, պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների ներկայացում
- Հետազոտության իրականացում
- Ավարտական աշխատանքների ներկայացում
- Շրջանավարտների հետ կապ՝ HEN-GEAR հարթակի և Կարիերայի կենտրոնի տվյալների բազայի միջոցով:

Ստուգում՝

ՄԿԾ-ի արդյունավետ իրականացման գնահատման համար կիրառվում են «Դասընթացի արդյունավետության գնահատում» (գործիքը և նկարագիրը տե՛ս՝ հավելված 2.1) և «ԵԳՊԱ առկա ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության գնահատում» (գործիքը և նկարագիրը տե՛ս՝ հավելված 2.1) հարցաթերթերը: Վերլուծությունների արդյունքում հայտնաբերված խնդիրները ներկայացվում են ամբիոններին: Վերլուծությունները ամփոփ ներկայացվում են նաև պաշտոնական կայքէջում: Ամբիոնները միջոցառումներն են իրականացնում դասախոսներին տեղեկացնելու հարցման արդյունքներին և դասավանդման մեթոդների ու համապատասխան ռեսուրսների բարելավման համար: ՄԿԾ-ի իրականացման գնահատումը կատարվում է նաև ըստ վերջնարդյունքների՝ շրջանավարտների և գործատուների շրջանում հարցումների անցկացման միջոցով:

Բարելավում՝ բարելավման միջոցառումների իրականացում՝ ստուգման արդյունքների և նմանատիպ ՄԿԾ-երի համեմատական վերլուծության հիման վրա: «ԵԳՊԱ առկա ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության գնահատում» հարցման արդյունքում վերազինվել են «Հագուստի մոդելավորում», «Դեկորատիվ կիրառական արվեստ», «Դիզայն», «Համակարգչային գրաֆիկա» լաբորատորիաներն ու արհեստանոցները, ինչն էլ նպաստեց սվյալ ՄԿԾ-երի իրականացման համար ուսումնական միջավայրի բարելավմանը:

զ) Մշակութային

- Ինչպե՞ս է տեղի ունենում տարբեր ստորաբաժանումների միջև համագործակցությունը դասավանդման ամենօրյա իրականացման գործընթացում: Արդյո՞ք առկա են բնորոշ կոնֆլիկտներ և ինչպե՞ս են դրանք համաձայնեցվում:
- Արդյո՞ք դասավանդման գործընթացում ներառված շահակիցների խմբերը ունենում են այնպեսի ներդրում, ինչպես սպասվում էր: Եթե սպասումները չեն համընկնում, ապա որո՞նք են պատճառները:

Կրթական ծրագրերի իրականացման գործընթացում ստորաբաժանումների միջև տեղի է ունենում սահուն համագործակցություն, քանի որ բուհում առկա է գործառույթների հստակ սահմանում. Ուսումնական վարչությունը մշակում է ուսումնական պլան, որի հիման վրա դեկանատները կազմում են դասացուցակ, ամբիոնները կազմում են դասընթացի նկարագրերը՝ տեղի է ունենում դասավանդման և ուսուցման բուն գործընթացը: Ուսանողների առաջադիմության արդյունքները արձանագրվում են Ուսումնական վարչությունում՝ ուսումնական գործընթացի հաշվառման բաժնում: Եթե համագործակցության ընթացքում առաջանում են կոնֆլիկտներ, ապա դրանք հաղթահարվում են երկուստեք քննարկումների, պարզաբանումների միջոցով:

Բուհը դասավանդման և ուսուցման գործընթացում ներգրավված շահակիցների շրջանում մշտապես կազմակերպում է ֆորմալ և ոչ ֆորմալ հանդիպումներ՝ քննարկելու ընթացիկ խնդիրները, ինչպես նաև անհասկանալի հարցերը: Աշխատանքային նման մոտեցումը օգնում է բուհի և շահակիցների սպասումները համապատասխանեցնել միմյանց:

ԵԳՊԱ-ն ՄԿԾ-երի իրականացման գործընթացում արժևորում է ՀՀ-ում ոլորտի առաջատար մասնագետների ներգրավումը, ուստի իրականացման գործընթացում ներգրավված են գիտական աստիճան կամ կոչում ունեցող, ժողովրդական և վաստակավոր գործիչներ, հանրապետական և միջազգային մակարդակներում ճանաչված դիզայներներ, արվեստագետներ և արվեստաբաններ:

ԵԳՊԱ-ում խրախուսվում է նաև երիտասարդ դասախոսների ներգրավումը կրթական գործընթացում՝ ապահովելով աստիճանական սերնդափոխություն:

Բացի բուն դասավանդման գործընթացից, ԵԳՊԱ պրոֆեսորադասախոսական կազմը մասնակցում է որոշումների կայացման գործընթացին՝ համաձայն ԵԳՊԱ կանոնադրության և մասնակցում է հարցումների և քննարկումների:

Դասավանդման գործընթացի և դասախոսի աշխատանքի կատարողականի գնահատման համար դեռևս կիրառվում է ՈԱ կենտրոնի կողմից մշակված գործիքը, սակայն առաջիկայում նախատեսվում է Մարդկային ռեսուրսների բաժնի հետ քննարկումների միջոցով մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական կազմի կատարողականի գնահատման նոր մեխանիզմներ:

Դասավանդման գործընթացին՝ իրենց գործառույթների շրջանակում՝ համագործակցության սկզբունքով՝ մասնակցում են նաև ֆինանսատնտեսական վարչությունը (նյութական ռեսուրսների ապահովում), հետազոտական կենտրոնը (ուսանողների հետազոտական աշխատանքների կանոնակարգում) և ամբիոնների ուսումնաօժանդակ կազմը (ապահովում է լաբորարատորիաների, արվեստանոցների և արհեստանոցների գույքի պահպանումն ու սարքավորումների անխափան աշխատանքը):

Հանդիսանալով արվեստի բուհ և ունենալով արվեստի բուհին բնորոշ առանձնահատկություններ, ինչպես օրինակ՝ ուսանողական փոքր համակազմ, ԵԳՊԱ-ում ուսանողների հետ սերտ համագործակցությունն ավելի դյուրին է, և դասավանդումն ավելի մոտ է ուսանողակենտրոն լինելուն, քանի որ մասնագիտական առարկաների ուղղությամբ ուսումնական գործընթացն ընթանում է ստեղծագործական ջերմ մթնոլորտում՝ կարծիքների փոխանակման, գաղափարների համատեղ իրականացման, փոխադարձ օգնության պայմաններում, բոլոր ուսանողների հետ տարվում է անհատական աշխատանք: Սակայն նույնը չի կարելի ասել տեսական առարկաների մասին: Վերջիններիս դասավանդման մեթոդները կարիք ունեն վերանայման: Այդ առարկաների համար առաջիկայում նախատեսվում է «Դասընթացի արդյունավետության գնահատում» հարցման անցկացումը, որի արդյունքների հիման վրա կառաջարկվեն դասընթացի բարելավման միջոցառումներ:

ՄԿԾ-երի իրականացման գործընթացում թույլ կողմ է համարվում օտար լեզուներով դասընթացների բացակայությունը: Դա խոչընդոտում է արտասահմանցի ուսանողների ներգրավմանը: Սակայն այս ուղղությամբ աշխատանքները պլանավորված են Արտաքին կապերի բաժնի Ռազմավարական ծրագրում:

II.3. Համագործակցություն

ա) Բնաստիստուցիոնալ

- Ծրագրերի իրականացման գործընթացում ինչպե՞ս է իրականանում այլ հաստատությունների, ինչպես նաև բուհի ստորաբաժանումների միջև համագործակցությունը (կառուցվածք և կանոնակարգեր):
- Ներքին և արտաքին համագործակցության գործընթացում ի՞նչն է լավ աշխատում, ի՞նչը բարելավման կարիք ունի:
- Ծրագրերի իրականացման գործընթացում ինչպե՞ս է իրականանում համագործակցությունը հաստատության ներսում:

Բուհը կրթական ծրագրերի միջազգայնացման, շնորհվող որակավորումներ փոխձանաչման, ինչպես նաև գործունեության այլ ոլորտների բարելավման և շարունակական զարգացման նպատակով իրականացնում է ակտիվ համագործակցություն տեղական և միջազգային ուսումնական հաստատությունների հետ: Կախված համագործակցության բնույթից, ԵԳՊԱ համապատասխան ստորաբաժանումը սկսում է բանակցություններ համագործակցող հաստատության հետ, փոխհամաձայնության է գալիս վերջինիս հետ և այլն, օրինակ ուսանողների պրակտիկաների անցկացմանը վերաբերող համագործակցության նախաձեռնողը կարող են լինել ամբիոնները, Ուսումնամեթոդական մասը նախաձեռնում, ինչպես նաև իրականացնում է գրանտային ծրագրեր, ուսանողների շարժունությունը վերաբերող համագործակցությունն իրականացվում է Արտաքին կապերի բաժնի կողմից և այլն:

ՄԿԾ-երի իրականացման ընթացքում ԵԳՊԱ ստորաբաժանումները իրականացնում են ներքին համագործակցություն, ինչպես նաև համագործակցություն է ընթանում նաև մի շարք արտաքին հաստատությունների հետ: Ներքին համագործակցությանը մասնակցում են՝ Ուսումնագիտական գծով պրոռեկտորը (հաստատում է ուսումնական պլանները և այլն), ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորը (նյութական ռեսուրսների ապահովում), Ուսումնական վարչությունը (ամբիոնների ծանրաբեռնվածության հաշվարկում, ուսանողների առաջադիմության վերաբերյալ տվյալների հավաքագրում, և այլ), դեկանատները (դասացուցակի կազմում, լսարանների հատկացում և այլ), ամբիոնները (ՄԿԾ-երի և դասընթացների նկարագրերի կազմում և իրականացում, դասավանդող կազմի ապահովում), Արտաքին կապերի բաժինը (օտարերկրյա ուսանողների ներգրավում, փոխանակման ծրագրերի իրականացում), ԵԳՊԱ «Ալբերտ և Թովե Բոյաջյան» ցուցասրահը (ուսումնառության ընթացքում կատարված աշխատանքների ցուցադրություններ, սեմինարների անցկացում), գրադարանը (գրականության ապահովում): ԵԳՊԱ ներքին համագործակցությունը ներկայացված է ԵԳՊԱ կառուցվածքում (տե՛ս հավելված 15) և իրականացվում է յուրաքանչյուր ստորաբաժանման գործառույթների սահմաններում, որոնք ամրագրված են ստորաբաժանումների կանոնակարգերում (տե՛ս հավելված 12) :

ՄԿԾ-ների իրականացման գործընթացում ԵԳՊԱ-ի արտաքին գործընկերներն են՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարություն (պետական պատվերով տեղերի սահմանում, վճարովի տեղերի հաստատում, պետական ավարտական որակավորման հանձնաժողովի նախագահի նշանակում և այլ), ՀՀ Մշակույթի նախարարություն (մասնակցություն մշակութային միջոցառումներին), ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա (Ասպիրանտական թեզերի պաշտպանության գործընթացի համակարգում, գրադարանային

ռեսուրսների տրամադրում), մի շարք հանրապետական և միջազգային բուհեր, արվեստի օջախներ և ստեղծագործական միություններ (փորձի փոխանակում, շարժունության ապահովում, պարկտիկաների կազմակերպում, դիպլոմային աշխատանքների բաց պաշտպանություն՝ Նկարիչների միության սրահներում և այլն), արվեստի կազմակերպություններ: Համագործակցող կազմակերպությունների ցանկը տե՛ս՝ հավելված 16-ում:

Ուսանողների շարժունության և օտարերկրյա ուսանողների ներգրավման շրջանակներում արտաքին համագործակցության գործընթացը համակազմվում է Արտաքին կապերի բաժնի կողմից:

Հաստատության ստորաբաժանումների միջև տեղի է ունենում սահուն համագործակցություն, սակայն արտաքին շահակիցների հետ համագործակցությունը մի փոքր թույլ է, քանի որ նրանց կողմից հետաքրքրվածությունը և համագործակցելու ցանկությունը մեծ չէ: Բուհը արտաքին շահակիցների հետ համագործակցությունը ակտիվացնելու նպատակով, իրականացնում է համապատասխան միջոցառումներ, մասնավորապես՝ գործատուների և մասնագիտական միությունների հետ հանդիպում-քննարկումներ:

բ) Ընթացակարգային

- Ո՞ր գործոններն են կարևոր համագործակցության սահուն կազմակերպման և իրականացման համար:
- Որտեղի՞ց են առաջանում փոփոխություն կամ բարելավում իրականացնելու խթանները: Ինչպե՞ս են դրանք տեղայնացվում հաստատության համակարգում և որո՞նք են այն գործընթացները, որոնք առնչվում են այդ խթանների հետ:

Միջազգային փոխանակման ծրագրերի շրջանակներում ուսանողների շարժունությունը ապահովելու նպատակով մշակվել է՝ «ԵԳՊԱ ուսանողների շարժունության կարգ» (տես հավելված 17) և «Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ» (տես հավելված 18): Համագործակցությունը իրականացվում է 21 օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ, որոնց հետ կնքված են համագործակցության պայմանագրեր: Գործընթացներում ներգրավված ստորաբաժանումների համագործակցությունը և պատասխանատվությունները սահմանված են վերոնշյալ կարգերում և գործընկեր հաստատությունների հետ կնքվող պայմանագրերում:

Մինչ ուսանողների փոխանակման պայմանագրի կնքելը ԵԳՊԱ Արտաքին կապերի բաժնի աշխատակիցները կատարում են համապատասխան դաշտի ուսումնասիրություն: Նախապես առանձնացված բուհերի կրթական ծրագրերը ներկայացվում են համապատասխան ՄԿԾ-երի պատասխանատուներին: Ընդհանուր քննարկումից հետո կապ է հաստատվում տվյալ բուհի հետ, և սկսվում են բանակցություններ: 2012-2016թթ. ընկած ժամանակահատվածում ԵԳՊԱ մի շարք ուսանողներ մեկ կիսամյակով ուսանել են համագործակցող բուհերում, իսկ ԵԳՊԱ-ում առնվազն մեկ կիսամյակով սովորել են 4 ուսանող: Ստորև ներկայացվում է ուսանողների ներհոսքը և արտահոսքը ԵԳՊԱ-ում:

Ուսանողների ներհոսք						
	Երկիր, հաստատություն					
		2012	2013	2014	2015	2016
1	Ֆրանսիա, Տուր, Անժեր, Մանսի արվեստի բարձրագույն դպրոց (փծ)			1		
2	Ուկրաինա, Լվովի արվեստի ազգային ակադեմիա (փծ)				2	
3	Ֆրանսիա, Բզանսոնի արվեստի բարձրագույն դպրոց (փծ)					1
Ուսանողների արտահոսք						
	Country and institution	2012/ 2013	2013/ 2014	2014/2015	2015/ 2016	2016/ 2017
1	Ֆրանսիա, Մարսելի գեղարվեստի բարձրագույն դպրոց (փծ)	1	1	3	1	
2	Ֆրանսիա, Լիոնի Օբյուսոնի արվեստի բարձրագույն ազգային դպրոց (փծ)				1	
3	Ֆրանսիա, Ռեյմսի դիզայնի և արվեստի բարձրագույն դպրոց (փծ)	2				
4	ՌԴ, Մանկու-Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիա (փծ)	1	3	4	2	6
5	Իտալիա, Պերուջայի համալսարան (փծ)			1	1	
6	Իտալիա, Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիա (փծ)			3	1	

Ուսանողների շարժունության շրջանակներում օտարերկրյա ուսանողների փոքր ներհոսքը պայմանավորված է օտար լեզվով դասընթացների բացակայությամբ:

2008-2016թթ. ընթացքում ԵԳՊԱ-ում ուսանել է 189 օտարերկրյա և սփյուռքահայ ուսանող, որոնց ընդունելությունը իրականացվել է ՀՀ ԿԳՆ-ի հետ համագործակցության սահմաններում:

ԵԳՊԱ-ում վերջին տարվա ընթացքում դասախոսական կազմից շարժունության է դիմել 1 դասախոս, իսկ համագործակցող բուհերի դասավանդող կազմից ներհոսքը մի փոքր շատ է:

Անձնակազմի ներհոսք						
	Երկիր, հաստատություն					
		2012/ 2013	2013/ 2014	2014/ 2015	2015/2016	2016/ 2017

1	<i>ՌԴ, Մանկտ-Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիա</i>					2
Անձնակազմի արտահոսք						
	Երկիր, հաստատություն					
		2012/ 2013	2013/ 2014	2014/ 2015	2015/2016	2016/ 2017
1	<i>ՌԴ, Մանկտ-Պետերբուրգի Շտիգլիցի անվան պետական գեղարվեստա-արդյունաբերական ակադեմիա</i>					1

Միջազգային բուհերի հետ համագործակցության արդյունքում համապատասխանեցվում են ՄԿԾ-երի վերջնարդյունքները, կրեդիտների բաշխումը՝ ներառյալ ուսանողի լսարանային և արտալսարանային ծանրաբեռնվածությունը: Կրեդիտների կուտակման և փոխանակման համակարգը տեղայնացնելու համար ընթանում է համագործակցություն նաև տեղական բուհերի հետ՝ ապահովելու և բարելավելու ուսանողի բուհից բուհ տեղափոխվելու գործընթացը:

Հանրապետական բուհերի հետ համագործակցությունը կատարվում է հիմնականում դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, որտեղ մշակվում են հանրապետական կրթական համակարգի բարելավմանը և միջազգայնացմանը նպաստող փաստաթղթեր՝ ECTS-ի գործարկման ձեռնարկ, ՄԿԾ-երի և ՀՀ ՈԱԾ-ի միջև համապատասխանեցման ձեռնարկ (տե՛ս հավելված 6): Միջբուհական համագործակցության սահմաններում իրականացվում է համատեղ ավարտական աշխատանքների պատրաստում: (Օրինակ 2016 թվականին ԵԳՊԱ-ի և Հայաստանի ամերիկյան համալսարանի ուսանողներից և դասախոսներից կազմված խմբերի կողմից իրականացվեցին համատեղ նախագծեր):

Արվեստի օջախների հետ համագործակցությունը իրականացվում է հետևյալ ոլորտներում՝ մասնակցություն համատեղ սեմինարների, ակադեմիական հանդիպումների, համատեղ ցուցահանդեսների, ուսանողական պրակտիկաներ: Ուսանողական պրակտիկաների կազմակերպման համար ԵԳՊԱ-ն ներկայումս համագործակցում է 18 կազմակերպությունների հետ (տե՛ս հավելված 19)՝ պայմանագրային հիմունքներով: Ուսանողական խմբերը պրակտիկային հատկացված ժամանակահատվածում այցելում են համապատասխան կազմակերպություն, որտեղ իրենց տեսական գիտելիքները կիրառում են պրակտիկ աշխատանքներում: Ուսումնական պրակտիկան ղեկավարում են ամբիոնների դասախոսները: Լինում են դեպքեր, երբ պրակտիկայի ավարտից հետո գործատուները լավագույն ուսանողներին հրավիրում են աշխատանքի:

Ներկայումս ԵԳՊԱ-ն փորձում է առավել ամրապնդել գործատուների հետ կապը: Համագործակցությունը գործատուների հետ ՄԿԾ-երի մակարդակով ընթանում է ԵԳՊԱ-ում դասավանդող և միաժամանակ գործատու դասախոսների հետ: Այլ գործատուների հետ

համագործակցությունը սահմանափակվում է դիպլոմային աշխատանքների պաշտպանությանը նրանց հրավիրելով, հարցումների մասնակցությամբ, նրանց կողմից դիպլոմային աշխատանքների թեմաների առաջարկներով: Գործատուների հետ շարունակական կապը պահպանելու նպատակով ՈԱ և Կարիերայի կենտրոնները մշակում են մեխանիզմներ:

ԵԳՊԱ արտաքին և ներքին շահակիցների հետ սահուն համագործակցությունը առավել արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է.

- ՀՀ այլ բուհերի հետ ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացում և արդյունքների ճանաչում:
- Ավարտական աշխատանքների սահմաններում իրական նախագծերի իրականացում և այդ նպատակով այլ հաստատությունների հետ համատեղ խմբերի ձևավորում:
- Անդամակցություն գրադարանային ցանցերին:
- Շրջանավարտների և գործատուների հետ կապի զարգացում:

Փոփոխություն կամ բարելավում իրականացնելու խթանները կարող են առաջանալ ներքին և արտաքին շահակիցների կողմից ներկայացված առաջարկներից և պահանջներից: Համագործակցության գործընթացի բարելավման համար բուհը ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ՝ քննարկումներ բուհի ներսում, որից հետո սկսվում են բանակցությունները համագործակցող հաստատության հետ:

զ) Մշակութային

- Կրթական ծառայությունների համար բուհը ներքին և արտաքին համագործակցության ի՞նչ սկզբունքներ ունի:
- Արդյո՞ք ընդունված առկա կանոնները և չափանիշերը ազդում են նրանց վրա: Ինչպե՞ս են կոնֆլիկտները լուծվում: Որո՞նք են համագործակցության մարտահրավերները:

ԵԳՊԱ-ի համագործակցության հիմնական սկզբունքն է իրականացնել գործընկերների հետ փոխշահավետ համագործակցություն: Սակայն համագործակցության հիմնական մարտահրավեր է շարունակում մնալ ներքին և արտաքին շահակիցների շրջանում մոտիվացիայի բարձրացումը:

Տարբեր կազմակերպությունների, արվեստի օջախների, ստեղծագործական միությունների հետ համագործակցության հիմքում ընկած է տվյալ հաստատության գործունեության բնույթը: Արվեստի բուհերի հետ համագործակցությունը օգնում է ապահովել ուսանողների և դասախոսների շարժունությունը: Արվեստի կենտրոնների, օջախների հետ համագործակցությունը ուսանողներին հնարավորություն է տալիս մասնակցել տարբեր միջոցառումների և մշտապես լինել մշակութային կյանքի կենտրոնում: Վերջինիս նպաստում են նաև ԵԳՊԱ-ի «Ալբերտ և Թովե Բոյաջյան» ցուցասրահում կազմակերպվող մշակութային միջոցառումները՝ անհատական և խմբային ցուցահանդեսներ, թեմատիկ հանդիպումներ և այլն: ԵԳՊԱ-ն համագործակցում է նաև մի շարք տեղական և միջազգային ոչ արվեստի բուհերի հետ, ինչը նպաստում է ԵԳՊԱ աշխատակազմի կարողությունների զարգացմանը: Նման համագործակցության հիմքում ընկած է լավագույն փորձի փոխանակումը՝ կրթական ծրագրերի մշակում և վերանայում, ՄԿԾ-երի չափելի վերջնարդյունքների սահմանում: Նման համագործակցությունները հնարավորություն են տալիս սերտ համագործակցել նաև ակադեմիայի դասախոսական և ուսանողական համակազմի հետ: Վերջիններիս ներգրավումը տարբեր գործընթացներում նպաստում է դասախոս-ուսանող կապի ամրապնդմանը՝ դասավանդման ուսանողակենտրոն մոտեցմանը:

II.4. Քննական համակարգ և քննությունների կազմակերպում

ա) Ինստիտուցիոնալ

- Կառուցվածքային ո՞ր կանոնակարգերը և կանոններն են ազդում ծրագրերում քննությունների ձևավորման վրա:
- Ի՞նչն է լավ աշխատում, ի՞նչը բարելավման կարիք ունի:

Ընդունելության քննություններ

Ընդունելության քննությունները իրականացվում են «ԵԳՊԱ բակալավրի կրթական ծրագրով ընդունելության ներքին քննությունների անցկացման կարգ»-ի (տե՛ս հավելված 20), «ԵԳՊԱ ընդունելության հանձնարարությունների և գնահատման չափանիշեր»-ի (տե՛ս հավելված 21), «ԵԳՊԱ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ»-ի համաձայն (տե՛ս հավելված 22): ԵԳՊԱ-ում իրականացվող ՄԿԾ-երում ներգրավելու համար դիմորդները հանձնում են ընդունելության քննություններ, որոնք կազմակերպվում են ԵԳՊԱ-ում և անցկացվում են ԵԳՊԱ-ի դասախոսներից կազմված հանձնաժողովների կողմից: Ուսանողների հանձնարարությունների նակարագրերը և կատարված աշխատանքների գնահատման չափանիշները յուրաքանչյուր առարկայի համար նախապես սահմանվում և հրապարակվում են ԵԳՊԱ պաշտոնական կայքէջում՝ <http://www.yafa.am/?p=12124>, ինչպես նաև տե՛ս հավելված 21:

Քննությունների ավարտից հետո ուսանողների գնահատականները փակցվում են ակադեմիայում, ինչպես նաև տեղադրվում ԵԳՊԱ պաշտոնական կայքէջում:

Վերոնշյալ փաստաթղթերը ըստ պատշաճի կանոնակարգում են ընդունելության գործընթացը: Ներկայումս աշխատանքներ են տարվում մագիստրոսական ծրագրով ընդունելության պահանջների հստակեցման ուղղությամբ:

Ընթացիկ գնահատում

Ընթացիկ գնահատման հիմքում ընկած է «ԵԳՊԱ ուսանողի գնահատման համակարգ»-ը (տե՛ս հավելված 23), որտեղ հստակ ներկայացված է ուսանողի գնահատման չափանիշերը: Բոլոր առաջին կուրսի ուսանողներին ամբիոնի վարիչները ներկայացնում են «ԵԳՊԱ ուսանողի գնահատման համակարգը», բացի այդ այն տեղադրված է ԵԳՊԱ պաշտոնական կայքէջում: Առաջին կուրսի ուսանողներին տրվում է նաև «Ուսանողի ձեռնարկ», որտեղ առկա է համապատասխան տեղեկություն ոչ միայն գնահատման համակարգի, այլ նաև ԵԳՊԱ տարբեր գործընթացների վերաբերյալ:

Ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակների ընթացքում կազմակերպվում են 2-3 միջանկյալ դիտումներ (ձևավորող գնահատում): Ուսանողին տրվում է արձագանք իր աշխատանքի ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ, որի հիման վրա ուսանողը կարող է բարելավել իր արդյունքները: Դրանով դասախոսները օգնում են, որպեսզի ուսանողը առավել արդյունավետ հասնի նախապես սահմանված վերջնարդյունքին: Իսկ կիսամյակի ավարտին կազմակերպվում են կիսամյակային ամփոփիչ քննություններ և ստուգարքներ՝ ուսանողների կողմից ձեռք բերված գիտելիքների և հմտությունների ստուգման և գնահատման համար: Յուրաքանչյուր դասընթացի նկարագրում սահմանված են տվյալ առարկայի գնահատման ձևը՝ կախված դասընթացի բնույթից և գնահատման չափանիշերը: Մասնագիտական առարկաների միջանկյալ և ամփոփիչ քննություններն անց

են կացվում դիտումների ձևով՝ ուսանողները ներկայացնում են իրենց ստեղծագործական աշխատանքները, որոնք ուսումնասիրվում են ամբիոնի բոլոր դասախոսներից կազմված հանձնախմբի կողմից: Այս մոտեցումը միջանկյալ դիտումների ժամանակ հնարավորություն է տալիս ուսանողին կարծիք և խորհրդատվություն ստանալ ոչ միայն իրեն դասավանդող դասախոսից, այլ նաև ամբիոնի այլ մասնագետների կողմից: Իսկ ամփոփիչ գնահատման ժամանակ նմանատիպ կոլեգիալությունը ապահովում է գնահատման անաչառությունը և թափանցիկությունը: Տեսական առարկաների գնահատումը անց է կացվում բանավոր հարցումների, կուրսային աշխատանքների, շնորհանդեսների, թեստերի կամ ռեֆերատների տեսքով: Քննության ավարտին բոլոր ուսանողների ներկայությամբ հայտարարվում են գնահատականները:

Քննական գործընթացին ներգրավված են ամբիոնների ողջ կազմը, ուսանողները: Քննությունների անցկացման համար պատասխանատու են դեկանատներն ու ամբիոնները: Քննությունների արդյունքներն ամրագրվում են ամբիոնների արձանագրություններում, դեկանատներում և Ուսումնական գործընթացի հաշվառման բաժնում:

ԵԳՊԱ-ի գնահատման հայեցակարգը 2012-2016թթ. ընթացքում ներքին շահակիցների կարծիքների հիման վրա երկու անգամ վերանայվել է և այժմ լավ է աշխատում: Նախատեսվում է իրականացնել գնահատման չափանիշերի հստակեցում:

Պետական ավարտական գնահատում

Պետական ավարտական գնահատումը իրականացվում է համաձայն «Ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ»-ի (տե՛ս հավելված 24): Ուսանողների ավարտական աշխատանքները պատրաստվում են համաձայն «Բակալավրական ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույց»-ի (տե՛ս հավելված 25):

Բակալավրական և մագիստրոսական աշխատանքների գնահատումն իրականացվում է պետական ատեստավորման հանձնաժողովի կողմից: ՀՀ ԿԳՆ-ի կողմից հանձնաժողովի նախագահ է նշանակվում ոլորտի անվանի ներկայացուցիչներից: Հանձնաժողովի կազմում ներգրավված են ԵԳՊԱ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ և ոլորտի այլ արտաքին մասնագետներ: Պաշտպանությանը ներկա են լինում գործատուներ: Պաշտպանությանը հրավիրված գործատուների ներկայությունը նպաստում է լավագույն շրջանավարտների աշխատանքի տեղավորմանը: Ներկա կարող են լինել նաև բոլոր ցանկացողները, քանի որ մուտքը բաց է բոլորի համար: Դիպլոմային աշխատանքների բաց պաշտպանությունը փաստում է ԵԳՊԱ-ի գործունեության, ինչպես նաև ավարտական աշխատանքների գնահատման թափանցիկության մասին:

Պետական ավարտական գնահատումը հստակ նկարագրված է և արդյունավետ:

բ) Ընթացակարգային

- Քննությունների կազմակերպման և դրանց մեթոդաբանության (ներառյալ գնահատում) ո՞ր ընթացակարգերն են լավ աշխատում: Ո՞ր ընթացակարգերին պետք է ուշադրություն դարձվի համապատասխան անձանց կողմից:
- Որտեղի՞ց են առաջանում փոփոխություն կամ բարելավում իրականացնելու խթանները: Ինչպե՞ս են դրանք տեղայնացվում հաստատության համակարգում և որո՞նք են այն գործընթացները, որոնք առնչվում են այդ խթանների հետ:

ԵԳՊԱ ուսանողների ընդունումը բակալավրական կրթական ծրագրով իրականացվում է ըստ «Բակալավրի կրթական ծրագրով ընդունելության ներքին քննությունների անցկացման կարգ»-ի (տե՛ս հավելված 20) և «ԵԳՊԱ ընդունելության քննությունների հանձնարարություններ և գնահատման չափանիշեր»-ի (տե՛ս հավելված 21): Յուրաքանչյուր տարվա ընդունելության քննությունների անցկացման համար կազմվում են ընդունող (գործընթացը համակարգող) հանձնաժողով և մասնագիտական քննական (գնահատող) հանձնաժողովներ, որոնք գնահատում են դիմորդների քննական աշխատանքները: Քննության ընթացքը վերահսկվում է՝ ակադեմիական ազնվության պահպանման նպատակով: Դիմորդներին տրամադրվում են մուլբերտներ, բնորդներ, նատյուրմորտի պարագաներ:

Մագիստրատուրայի ՄԿԾ-երի ընդունելությունն իրականացվում է ընդունող և մասնագիտական հանձնաժողովների կողմից՝ համաձայն «ԵԳՊԱ-ի մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ»-ի (տե՛ս հավելված 22):

Ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում քննությունները և ստուգարքները կազմակերպելու համար, դեկանատները կազմում են քննությունների ժամանակացույցը, որի համաձայն և անց են կացվում քննությունները: Քննությունների բուն անցկացման ընթացքը համակարգում է թողարկող ամբիոնը՝ դասավանդող դասախոսի հետ միասին: Գնահատման գործընթացում ներգրավված են համապատասխան ներքին շահակիցները, որոնցից յուրաքանչյուրը իր մասով տեղեկանում է քննության արդյունքներին: Ուսանողների գնահատումը կատարվում է համաձայն «Ուսանողի գնահատման համակարգ»-ի (տե՛ս հավելված 23), որտեղ հստակ սահմանված են գնահատման սկզբունքները, գնահատականների սանդղակը, ինչպես նաև գնահատականների վերաբերյալ բողոքարկման կարգը: Հարկ է նշել, որ 2012թ. և 2014թ. ԵԳՊԱ ուսանողի գնահատման համակարգը փոփոխվել է՝ հիմք ընդունելով ՈԱ կենտրոնի կողմից կատարված հարցման արդյունքները դասավանդող և ուսանողական համակազմի շրջանում: 2014թ. ի վեր գործում է նոր մոտեցումներով գնահատման համակարգ՝ հիմնված ուսումնառության վերջնարդյունքների գնահատման, ինչպես նաև շահակիցների կարիքների վրա: Գնահատման նոր համակարգի ընդունումից հետո եղել են որոշակի խնդիրներ կապված դրա կիրառման հետ: Որոշ դասախոսներ դժվարանում էին գնահատել նոր փոփոխված համակարգով: Հաշվի առնելով այս ամենը, ուսումնական վարչությունը և ՈԱ կենտրոնը հանդիպումներ և տարբեր քննարկումներ են կազմակերպել դասախոսական կազմի հետ՝ գնահատման համակարգը կրկին անգամ առավել խորը և մանրամասն ներկայացնելու համար: Նման հանդիպումներն օգնել են գնահատման համակարգի լիարժեք կիրառմանը մինչև այսօր: Բուհը պլանավորում է շարունակաբար իրականացնել հարցում դասավանդող և ուսանողական համակազմի շրջանում գործող գնահատման համակարգի արդյունավետության գնահատման նպատակով: Ներքին շահակիցների շրջանում իրականացվող հարցումները օգնում են գնահատման համակարգը ոչ միայն բարելավել այլ նաև գնահատման մեթոդները և ձևերը համապատասխանեցնել ներքին շահակիցների կրթական պահանջներին:

Պետական ավարտական գնահատման համար ձևավորվում է հանձնաժողով, որտեղ ներգրավված են դասախոսներ, ստեղծագործական միությունների անդամներ, գործատուներ: Նրանցից յուրաքանչյուրը նշանակում է գնահատական, իսկ վերջնական գնահատականի համար դուրս է բերվում թվաբանական միջին: Բողոքարկման դեպքում գնահատականը վերանայվում է հանձնաժողովի կողմից, որտեղ, ի լրումն հիմնական կազմի, ներգրավվում են

ուսանողական համակարգի և վարչական աշխատակազմի ներկայացուցիչներ: Պետական ավարտական աշխատանքների թափանցիկության ապահովման և ԵԳՊԱ շրջանավարտների մասնագիտական համբավի տարածման համար ավարտական քննությանը հնարավորություն ունեն մասնակցել հնարավոր բոլոր ներքին և արտաքին շահակիցները՝ դասախոսներ, ուսանողներ, հրավիրյալ գործատուներ, հետաքրքրված ուսանողներ, ծնողներ:

գ) Մշակութային

- Քննությունների մշակման և կազմակերպման գործընթացում համապատասխան պատասխանատու անձինք ի՞նչ սկզբունքներ պետք է հաշվի առնեն:
- Արդյո՞ք այդ սկզբունքները ընդունվում են ներգրավված բոլոր շահակիցների կողմից:
- Քննությունների մշակման գործընթացում ի՞նչ դեր ունեն իստիտուցիոնալ ավանդույթները: Արդյո՞ք գնահատման նոր մեթոդները հաշվի են առնվում:
- Ո՞ր արժեքները և վարքագծի ձևերը մեծ ազդեցություն ունեն քննական համակարգի և քննությունների կազմակերպման վրա: Ինչպե՞ս են դրանք ազդում քննական համակարգի խնդիրների իրականացման վրա:
- Արդյո՞ք առկա են կոնֆլիկտներ ներգրավված շահակիցների միջև քննությունների մեթոդաբանության, ինչպես նաև կազմակերպման վերաբերյալ: Ինչպե՞ս են նման կոնֆլիկտները լուծվում:

ԵԳՊԱ-ի քննական համակարգը տարբերվում է իր բնույթով՝ ընթացիկ դիտումներ, արձագանք ոչ միայն դասավանդող, այլ նաև տվյալ ամբիոնի մյուս դասախոսների կողմից: Նման մոտեցումը առավելագույնս ապահովում է կատարված աշխատանքի օբյեկտիվ գնահատում, դասախոս-ուսանող սերտ համագործակցություն: Կարծիքների փոխանակումը, ինչպես նաև արձագանքը մյուս դասախոսներից օգնում է ուսանողին առավել հստակ և համակարգված աշխատել:

Ընթացիկ և ավարտական գնահատման ժամանակ արժևորվում են՝

- Վերջնարդյունքահեն գնահատումը
- Թափանցիկության/հրապարակայնության ապահովումը
- Անաչառ գնահատումը:

ԵԳՊԱ-ում ընթացիկ քննությունների և ստուգարքների ընթացքում գրագողությունը գրեթե բացակայում է, քանի որ ուսանողները աշխատում են դասախոսի և միմյաց՝ ուսանողների հետ սերտ համագործակցության մթնոլորտում և նրանց կողմից կատարվող աշխատանքների ընթացքը վերահսկվում է դասախոսի կողմից: Նման մոտեցումը նպաստում է ակադեմիական բարեվարքություն պահպանելուն: Ընթացիկ խմբային և անհատական աշխատանքների դեպքում ևս կարևորվում է ուսանողի ինքնուրույնությունը: Եթե կատարված է գրագողություն, ապա այն իր ազդեցությունն է ունենում գնահատականի վրա, (մանրամասն տե՛ս «Ուսանողի գնահատման համակարգ»-ում (տե՛ս հավելված 23): Քննության գնահատականների վերաբերյալ ուսանողները տեղեկանում են տեղում, ինչը հնարավորություն է տալիս անմիջապես վերհանել իրենց հուզող հարցերը, ինչպես նաև բողոքարկել՝ ըստ սահմանված կարգի:

Ընդունելության քննությունների անցկացման վերաբերյալ արձագանքը ստացվում է առաջին կուրսեցիների շրջանում հարցման անցկացմամբ: Ուսանողների շրջանում անցկացվող՝ «Դասընթացի արդյունավետության գնահատում» հարցման մեջ առկա են

հարցեր, որոնց միջոցով գնահատվում է կիսամյակաին քննությունների անցկացումը: Բացի այդ իրականացվում են հարցումներ գնահատման համակարգի արդյունավետության վերաբերյալ՝ ուսանողների և դասախոսների շրջանում: Պետական ավարտական քննությունների ընթացքը բաց է բոլոր ներքին և արտաքին շահակիցների համար, ինչը ևս վկայում է ԵԳՊԱ գնահատման համակարգի թափանցիկության մասին:

II.5. Ուսանողների նվաճումների ճանաչում/փոխճանաչում

ա) Ինստիտուցիոնալ

- Արդյո՞ք այլ հաստատությունների կամ ոչ ֆորմալ և/կամ ինֆորմալ կրթություն տրամադրող հաստատությունների կողմից ընդունված ուսանողների նվաճումների ճանաչման կանոնները, կառուցվածքը և պատասխանատվությունները աշխատում են այնպես, ինչպես սպասվում է:

ԵԳՊԱ ուսանողի նախորդ կրթական աստիճանի ճանաչումը իրականացվում է համաձայն ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի և «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին ՀՀ օրենք»-ի:

ԵԳՊԱ-ում բակալավրի մակարդակում ուսումը շարունակելու համար որպես հիմք է ճանաչվում հանրակրթունքը և միջին մասնագիտական կրթությունը համաձայն «ԵԳՊԱ բակալավրի կրթական ծրագրով ընդունելության ներքին քննությունների անցկացման կարգ»-ի (տե՛ս հավելված 20) և «Միջին մասնագիտական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների բուհերում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգ»-ի (տե՛ս հավելված 26): Իսկ մագիստրոսի մակարդակում որպես հիմք է ճանաչվում առնվազն բակալավրի կրթական աստիճանը համաձայն «ԵԳՊԱ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգ»-ի (տե՛ս հավելված 22): Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությունը ԵԳՊԱ-ում չի ճանաչվում, քանի որ դրանց ճանաչումը սահմանափակվում է ՀՀ օրենսդրությամբ:

Այլ ուսումնական հաստատությունում սովորող ուսանողների ԵԳՊԱ տեղափոխվելու գործընթացը իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թ. օգոստոսի 25-ի N 1240-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության մասին» (տե՛ս հավելված 27) կարգի համաձայն, որտեղ մանրամասն նկարագրված են նախորդ ուսումնական հաստատությունում ձեռք բերված արդյունքների ճանաչման պայմանները և ընթացակարգը: Այս կարգի դրույթների համաձայն են կազմակերպվում նաև ներբուհական տեղափոխությունները:

Վերոնշյալ գործընթացի կազմակերպման համար պատասխանատու է ուսումնական վարչությունը՝ ղեկանատների և ամբիոնների ներգրավմամբ:

Օտարերկրյա բուհերի և ԵԳՊԱ-ի միջև ուսանողների շարժունությունը և արդյունքների ճանաչումը իրականացվում է համաձայն «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության մասին» (տե՛ս հավելված 27): Գործընթացի համար պատասխանատու է Արտաքին կապերի բաժինը, Ուսումնական վարչությունը՝ ղեկանատների և ամբիոնների ներգրավմամբ:

ԵԳՊԱ-ն իր շրջանավարտներին տրամադրում է պետական նմուշի դիպլոմ և դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն լեզուներով), որտեղ հստակ ներկայացված են՝ ՄԿԾ-ի դասընթացները, համապատասխան կրեդիտները, գնահատականի տառային և թվային միավորները, միջին տոկոսը, ամփոփիչ ատեստավորման համար սահմանված կրեդիտը և գնահատականի տառային միավորը, ուսումնառության ընթացքում՝ ընդհանուր կրեդիտների գումարը և միջին որակական գնահատականը (Դիպլոմի հավելվածի օրինակը տե՛ս հավելված 28):

ԵԳՊԱ դիպլոմը պաշտոնապես ճանաչվում է ԱՊՀ երկրներում, սակայն ԵԳՊԱ շատ

շրջանավարտներ եվրոպական մի շարք երկրներում, ԱՄՆ-ում և Ավստրալիայում աշխատում են ԵԳՊԱ-ում ստացված մասնագիտությամբ:

բ) Ընթացակարգային

- Արդյո՞ք այլ հաստատությունների կամ ոչ ֆորմալ և/կամ ինֆորմալ կրթություն տրամադրող հաստատությունների կողմից ընդունված ուսանողների նվաճումների ճանաչման ընթացակարգերը աշխատում են այնպես, ինչպես սպասվում է:
- Արդյո՞ք առկա են բնորոշ դժվարություններ, որոնք կանոնավոր կերպով հանդիպում են այդ ընթացակարգերում: Ի՞նչ փոփոխություններ են պլանավորվում և ի՞նչ պատճառներով:

ԵԳՊԱ-ում բակալավրի մակարդակում ուսումը շարունակելու համար որպես հիմք է ճանաչվում առնվազն հանրակրթությունը և միջին մասնագիտական կրթությունը համաձայն «Բակալավրի կրթական աստիճանի ընդունելության ներքին քննությունների անցկացման կարգ»-ի (տե՛ս հավելված 20) և «Միջին մասնագիտական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների բուհերում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգ»-ի (տե՛ս հավելված 26): Իսկ մագիստրոսի մակարդակում որպես հիմք է ճանաչվում առնվազն բակալավրի կրթական աստիճանը համաձայն «ԵԳՊԱ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգի»-ի (տե՛ս հավելված 22): Բակալավրի մակարդակում ուսանողների ընդունելությունը հանրակրթական կամ միջին մասնագիտական կրթական աստիճան ունեցողների համար կատարվում է ընհանուր հիմունքներով (տես կետ II.4): Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտները, համապատասխան երաշխավորությունների և ԵԳՊԱ-ի ամբիոնի համաձայնության առկայության դեպքում կարող են ուսումը շարունակել ԵԳՊԱ-ում համապատասխան մասնագիտությամբ երկրորդ կուրսից: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից երկրորդ կուրս վերջին երեք տարիների ընթացքում ընդունվել է 54 ուսանող:

Այլ բուհից ԵԳՊԱ տեղափոխվող ուսանողը ներկայացնում է դիմում և ակադեմիական տեղեկանք, որտեղ նշված է անցած կիսամյակների ընթացքում ուսումնասիրած դասընթացները՝ կրեդիտներով և գնահատականներով, միջին որակական գնահատականը: Վերջիններիս ուսումնասիրությունից հետո Ուսումնական գործընթացի հաշվառման բաժինը համապատասխան թողարկող ամբիոնին է ներկայացնում հաշվետվություն, որտեղ նշվում է երկու բուհերի ՄԿԾ-ների ուսումնական ծրագրերի և կրեդիտների տարբերությունը: Ամբիոնը ուսումնասիրում է այլ բուհում անցած և ԵԳՊԱ-ի ՄԿԾ-ի դասընթացների բովանդակության համապատասխանությունը և քննարկում է ուսանողի ուսումը ԵԳՊԱ-ում շարունակելու հնարավորությունը: Ամբիոնի բացասական կարծիքի դեպքում ուսանողի տեղափոխությունը չի իրականացվում: Ամբիոնի դրական կարծիքի դեպքում ուսանողը նախկին բուհից անձնական գործը ներկայացնում է ուսումնական գործընթացի հաշվառման բաժին և հրամանագրվում (տե՛ս հավելված 27՝ ՀՀ կառավարության 25.08.2011թ. N 1240-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության մասին» կարգը): Վերջին երեք տարիների վիճակագրությունը ցույց է տալիս, որ ԵԳՊԱ 21 ուսանող ներգրավված է եղել փոխանակման ծրագրերում:

Նույն կարգով են կատարվում նաև օտարերկրյա բուհերից տեղափոխությունները՝ հաշվի առնելով ՀՀ ԿԳՆ-ի համաձայնությունը: Վերջին երեք տարիների վիճակագրությունը ցույց է տալիս, որ 15 ուսանող տեղափոխվել է ԵԳՊԱ:

Ակադեմիան դեռևս չի իրականացնում միասնական կամ կրկնակի դիպլոմներ շնորհող կրթական ծրագրեր: Հետագայում պլանավորվում են բանակցություններ այլ բուհերի հետ համատեղ կրթական ծրագրերի և դրանց իրականացման մեխանիզմների և քաղաքականության մշակման վերաբերյալ:

գ) Մշակութային

- Որո՞նք են արտաքին նվաճումների ճանաչման ուղղորդող սկզբունքները: Արդյո՞ք հաստատության համապատասխան անդամները, հետաքրքրված ուսանողները և դասավանդող կազմը տեղյակ են եղել դրանց և արդյո՞ք նրանք ընդունում են դրանք: Ինչպե՞ս են կոնֆլիկտները համաձայնեցվում:

ԵԳՊԱ-ում ուսանողների նվաճումների/առաջադիմության ճանաչման հիմնական սկզբունքներն են՝

- վստահություն գործընկեր բուհերի կողմից տրամադրված կրթությանը,
- ձգտում միջմշակութային կապերի ձևավորմանը:

Հավատարիմ մնալով այդ սկզբունքներին ԵԳՊԱ-ն վստահում է պաշտոնական կարգավիճակ ունեցող բուհերի կողմից տրամադրվող կրթությանը և այդ բուհերում ստացված ուսանողների նվաճումները ճանաչելու գործընթացում գերծ է մնում լրացուցիչ ստուգումների կամ քննությունների անցկացումից: Նվաճումների ճանաչման գործընթացում ԵԳՊԱ-ն հիմնվում է ուսանողի նախկին բուհի կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվության վրա (ուսումնասիրված մոդուլներ, ECTS կրեդիտներ, գնահատականներ և այլն): Այս մոտեցումը ընդունում են գործընթացի բոլոր կողմերը: Տարածայնություններ կարող են առաջանալ միայն ուսումնական ծրագրերի համապատասխանության ուսումնասիրության գործընթացում, սակայն դրանք լուծվում են ամբիոնի դասախոսների քննարկումների արդյունքում ընդհանրական կարծիքի գալու միջոցով:

Ուսանողների մոտ միջմշակութային կապերի ձևավորմանը մեծապես նպաստում է միջբուհական շարժունության ապահովումը: Ուսանողների շարժունության արդյունավետության բարձրացման կարևոր պայմաններ են հանդիսանում՝

- օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացումը,
- համադրելի և ուսումնառության վերջնարդյունքներով արտահայտված ՄԿԾ-երի իրականացումը,
- ECTS համակարգի կիրառումը:

Ներկայումս ԵԳՊԱ-ում ակտիվ գործընթացներ են իրականացվում ուսանողների շրջանում օտար լեզուների իմացության մակարդակի բարձրացման և ECTS-ի պահանջներին համապատասխան, ուսումնառության վերջնարդյունքներով սահմանված, եվրոպական կրթական տարածքի ՄԿԾ-երի հետ համադրելի կրթական ծրագրերի մշակման և ներդրման ուղղությամբ:

Նախորդ կրթական աստիճանի ճանաչման, տեղափոխությունների և շարժունության գործընթացները կարգավորող փաստաթղթերը ներկայացված են ԵԳՊԱ կայքէջում: Հավելյալ տեղեկատվություն տրամադրվում է ուսումնական վարչության, դեկանատների և արտաքին կապերի բաժնի կողմից:

II.6. Աջակցություն և օժանդակություն

ա) Ինստիտուցիոնալ

- Ուսանողներին մատուցվող օժանդակության և աջակցության ծառայությունների ո՞ր էլեմենտներն են հաջողված: Ի՞նչ փոփոխություններ են պահանջվում: Որո՞նք են բնորոշ մարտահրավերները, որ պետք է հաղթահարվեն:
- Արդյո՞ք ֆիզիկական և մարդկային ռեսուրսները համապատասխան և բավարար են տրամադրելու ակնկալվող աջակցության և օժանդակության ծառայությունները: Ինչպե՞ս է դա հաստատվում:

Ուսանողին տրամադրվող աջակցության նպատակն է ապահովել նպաստավոր կրթական միջավայր, որը կաջակցի ուսանողի կրթական գործընթացի առավել դյուրին և արդյունավետ իրականացմանը: Ուսանողին աջակցություն է տրամադրվում հետևյալ ստորաբաժանումների կողմից՝

- Դեկանատներ
- Ամբիոններ
- Ուսումնական վարչություն
- Մարդկային ռեսուրսների բաժին
- Կարիերայի կենտրոն
- Գրադարան
- Որակի ապահովման կենտրոն
- «Ալբերտ և Թովե Բոյաջյան» ցուցասրահ
- Ուսանողական խորհուրդ
- Արտաքին կապերի բաժին
- Հետազոտական կենտրոն
- Բուժկետ:

Վերոնշյալ ստորաբաժանումները ապահովված են ուսանողներին աջակցություն տրամադրելու համար անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսներով: Դրա մասին են վկայում ԵԳՊԱ-ում ուսանողների և դասախոսների շրջանում անցկացվող ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության վերաբերյալ գնահատումների արդյունքները:

ԵԳՊԱ ուսանողներին տրամադրվում է աջակցություն մի շարք ծառայությունների միջոցով՝

- Տեղեկատվության տրամադրում
- Խորհրդատվություն դիմորդներին
- Նախապատրաստական դասընթացներ դիմորդների համար
- «Ուսանողի ձեռնարկ»-ի տրամադրում (տե՛ս հավելված 29)
- Պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական աշխատակազմի կողմից խորհրդատվության տրամադրում
- Օտար լեզուների անվճար դասընթացների տրամադրում:

Ուսանողներին տրամադրվող աջակցության համար մարտահրավերներ են՝ գրադարանային ռեսուրսների բարելավումը, սահմանափակ կարողություններով ուսանողների համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և հանրակացարանային պայմանների բարելավումը: Վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ ԵԳՊԱ-ն

ձեռնարկել է հետևյալ միջոցառումները.

- Գրադարանային ռեսուրսների բարելավման համար ԵԳՊԱ-ն կանդամակցի KOHA գրադարանային ցանցին, ինչպես նաև կքննարկվեն այլ տեղեկատվական գրադարանային ռեսուրսներին հասանելիության հնարավորությունները:
- 2016 հոկտեմբերից մեկնարկեց ԵԳՊԱ-ի կողմից ղեկավարվող TEMPUS-ի INCLUSION ծրագիրը, որը միտված է Բուհերում սոցիալական ուղղվածության ռազմավարության մշակմանն ու իրականացմանը, որի շրջանակներում ԵԳՊԱ-ում կմշակվեն և կներդրվեն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների աջակցման քաղաքականությունը, մեխանիզմները և ձեռք կբերվի ուսումնական գործընթացի ապահովման համար անհրաժեշտ սարքավորումներ:
- Բանակցություններ են տարվում հանրակացարանային պայմանների բարելավման ուղղությամբ:

բ) Ընթացակարգային

- Ինչպե՞ս են աշխատում օժանդակություն և աջակցություն տրամադրելու գործընթացները: Ո՞ր գործընթացներն են լավ աշխատում, որո՞նք բարելավման կարիք ունեն:
- Արդյո՞ք օժանդակության և աջակցության գործընթացներում ներգրավված հաստատության անդամները ունեն բավարար տեղեկություն և ռեսուրսներ: Արդյո՞ք օժանդակության և աջակցության թիրախային խմբերը հասնում են այն ամենին ինչ նախատեսվում է: Ինչպե՞ս է դա հաստատվում:
- Որտեղի՞ց են առաջանում փոփոխություն կամ բարելավում իրականացնելու խթանները: Ինչպե՞ս են դրանք տեղայնացվում հաստատության համակարգում և որո՞նք են այն գործընթացները, որոնք առնչվում են այդ խթանների հետ:

Ուսանողները իրենց տրամադրվող աջակցության մասին տեղեկանում են ԵԳՊԱ պաշտոնական կայքէջից, ուսանողի ձեռնարկից, ղեկանատների և այլ ստորաբաժանումների կողմից տրվող հայտարարություններից:

ԵԳՊԱ-ն ուսանողներին տրամադրվող աջակցությունը սկսում է ուսանողի կյանքի շրջափուլի սկզբից՝ դիմորդների ներգրավումից: ԶԼՄ-երում, ԵԳՊԱ պաշտոնական կայքում, «Հայաստանի բուհեր. Տեղեկատու դիմորդների համար» տեղեղեկատուում ներկայացվում է ԵԳՊԱ-ն՝ իր առաջարկած ՄԿԾ-երով, ընդունելության պայմաններով և պահանջներով:

Դիմորդների համար կազմակերպվում են նախապատրաստական դասընթացներ, որոնք վարում են ԵԳՊԱ դասախոսները: Դասընթացների կազմակերպման համար պատասխանատու են ֆակուլտետների ղեկանները: Պարապմունքներն անց են կացվում ԵԳՊԱ-ի մասնաշենքերում՝ համապատասխան արվեստանոցներում:

Փաստաթղթերի ընդունման ժամանակ դիմորդներին տրվում է սպառիչ խորհրդատվություն փաստաթղթերի ընդունման հանձնաժողովի անդամների կողմից՝ անհրաժեշտ լրացուցիչ փաստաթղթերի, քննությունների անցկացման կարգի վերաբերյալ:

Առաջին կուրսի ուսանողներին տրամադրվում է ամեն ուս. տարի թարմացվող

«Ուսանողի ձեռնարկ» (տե՛ս հավելված 29), որը ներկայացնում է ԵԳՊԱ-ի մասին պատմական ակնարկ, ՄԿԾ-երի ցանկը, վարձավճարները, գիտելիքի գնահատման հայեցակարգը և այլ անհրաժեշտ տեղեկություն:

Ուսանողներին տրամադրվում են ՄԿԾ-երի պահանջներին համապատասխանող կահավորված արվեստանոցներ, լաբորատորիաներ և արհեստանոցներ, բնորդներ և ռեկվիզիտի պարագաներ, աշխատանքային նյութեր:

Ուսանողներն իրենց հուզող հարցերով դիմում են համապատասխան դեկանատ, որի գործառույթների մեջ է մտնում ուղղորդել ուսանողին՝ վարչական կամ ակադեմիական խորհրդատվություն ստանալու նպատակով համապատասխան ստորաբաժանմանը դիմելու համար: Ուսանողներին վարչական խորհրդատվություն է տրվում նաև Ուսումնական վարչության, հաշվապահության կամ Մարդկային ռեսուրսների բաժնի կողմից (տեղեկանքներ և այլ): Բացի վարչական խորհրդատվությունից ուսանողները մասնագիտական հարցերով դիմում են իրենց դասավանդող կամ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի մյուս անդամներին, ովքեր մեծ պատրաստակամությամբ պատասխանում են ուսանողների հարցերին:

ԵԳՊԱ-ում գործում է Կարիերայի կենտրոն, որն ուղղորդում է ուսանողներին աշխատաշուկայում ներկայանալու գործընթացում, ապահովում է կապը շրջանավարտների և գործատուների միջև, կազմակերպում է սեմինարներ (գործատուին ներկայանալու, մտտիվացիոն նամակի և այլնի վերաբերյալ):

ԵԳՊԱ-ում գործում է գրադարան, որը, թեև պարբերաբար համալրվում է նոր գրականությամբ, բայց դեռևս չի բավարարում ողջ ուսանողական համակազմին: 2017 թ. նախատեսվում է գրադարանի թվայնացում և հասանելիություն KOHA գրադարանային ցանցին:

ՈՍ կենտրոնը ԵԳՊԱ գործընթացներին ուսանողներին առավելագույնս ներգրավվելու համար իրականացնում է հարցումներ, կազմակերպում քննարկումներ՝ հնարավորություն է ընձեռում ուսանողներին իրենց կարծիքները արտահայտելու: Կենտրոնի կողմից իրականացված հարցումների արդյունքում իրականացվել են մի շարք բարելավումներ ի նպաստ ուսանողների:

ESPAQ ծրագրի շրջանակներում ԵԳՊԱ-ում ստեղծվել է որակի ապահովման ուսանողական համայնք: Ներգրավված ուսանողների համար Ուսումնական վարչությունը և ՈՍ կենտրոնը համատեղ քննարկումներ են կազմակերպում որակի ներքին ապահովման վերաբերյալ, իրականացվում են վերապատրաստումներ տարբեր թեմաներով՝ որն է ուսանողի դերը որակի ապահովման գործընթացում, որակի ապահովման ինչպիսի գործընթացներ են իրականացվում բուհում և որն է ուսանողների դերը այդ գործընթացներում, ինչպես կազմել հարցաթերթեր և իրականացնել հարցումներ և այլ:

Ակադեմիայում գործում է ցուցասրահ, որն ուսանողներին հնարավորություն է ընձեռում անվճար հիմունքներով ցուցադրություններ կազմակերպել:

Ուսանողական խորհուրդը ուսանողների համար կազմակերպում է միջոցառումներ՝ այլ բուհերի հետ համատեղ ցուցահանդեսներ, էքսկուրսիաներ, պլեներ, որոնց կազմակերպման համար ֆինանսական աջակցություն է ցուցաբերում ԵԳՊԱ-ն: Ուսանողական խորհրդի աջակցությամբ ԵԳՊԱ ուսանողներին Երիտասարդական հիմնադրամը ֆինանսական աջակցություն է տրամադրում՝ վարձավճարի մասնակի փոխհատուցման նպատակով:

ԵԳՊԱ արտաքին կապերի բաժինը աջակցում է (տեղեկատվություն, փաստաթղթերի փաթեթի կազմում, այլ) ուսանողներին փոխանակման ծրագրերով այլ բուհերում ուսումը շարունակելու կամ ուսումնական կարճատև այցեր կատարելու գործընթացներում: Արտաքին կապերի բաժինը ուսանողներին տրամադրում է լրացուցիչ աջակցություն՝ համագործակցող բուհերի հետ կազմակերպում է համատեղ պլեներներ, գիտաժողովներ, վարպետաց դասեր, ցուցահանդեսներ:

Հետազոտական կենտրոնը բարձր կուրսի ուսանողներին օգնում է ավարտական թեզերի թեմաների ընտրության հարցում, ինչպես նաև ուղղորդում աշխատանքի կառուցվածքի վերաբերյալ, տրամադրում է համապատասխան գրականություն՝ կենտրոնին կից հետազոտական գրադարանից և այլ: Կենտրոնը կազմակերպում է արտալսարանային սեմինար-քննարկումներ, որոնց ընթացքում ուսանողները ներկայացնում են զեկույց իրենց կատարած հետազոտության վերաբերյալ: Հաջողված և գրախոսված գիտական հոդվածները անվճար հիմունքներով տպագրվում են ԵԳՊԱ «Տարեգիրք» գիտական հոդվածների ժողովածուում:

ԵԳՊԱ-ում գործում է փոխատեղման և զեղչերի հստակ համակարգ, որոնք կարգավորվում են «ՀՀ բուհերում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգ» (տե՛ս հավելված 30) և «ԵԳՊԱ ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման կարգ» (տե՛ս հավելված 31) փաստաթղթերով:

Որպես աջակցություն ուսանողներին ԵԳՊԱ-ն ամբողջ տարի անվճար հիմունքներով կազմակերպում է օտար լեզուների դասընթացներ (անգլերեն, իտալերեն, ռուսերեն և ֆրանսերեն): Օտարերկրյա ուսանողների համար կազմակերպվում են անվճար հայերենի և ռուսերենի դասընթացներ:

2016 թվականին ԵԳՊԱ-ն մշակեց և մրցույթի արդյունքում շահեց ERASMUS PLUS-ի INCLUSION ծրագիրը, որի շրջանակներում կբարելավվեն հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին ներգրավելու մեթոդաբանությունը և մոտեցումները:

Ակադեմիայում գործում է բուժօգնության կետ, որն ապահովված է առաջին օգնության դեղորայքով և պարագաներով:

Վերոնշյալ ծառայությունների հասանելիությունը և որակը գնահատվում են ուսանողների և դասախոսների շրջանում իրականացվող հարցումների և ուսանողական խորհրդից ստացվող արձագանքի միջոցով: Ծառայությունների հասանելիության և որակի խնդիրները բարձրացվում են նաև բուհի կառավարման տարբեր օղակներում ներգրավված ուսանողների կողմից: Այս ամենը խթան է հանդիսանում գործընթացների և դրանց համար անհրաժեշտ ռեսուրսների բարելավման համար:

ՈԱ կենտրոնը համակարգում է հարցումների անցկացումը, վեր է լուծում արդյունքները և դրանք ներկայացնում ղեկավարությանը և համապատասխան ստորաբաժանմանը՝ բարեփոխումների միջոցառումներ պլանավորելու և կատարելու համար: Բարելավումների համար պատասխանատու են ուսումնագիտական գծով պրոռեկտորը, ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորը, ուսումնական վարչությունը, դեկանատները, ամբիոնները: Հարցման արդյունքները ներկայացվում են նաև շահակիցներին և տեղադրվում ԵԳՊԱ պաշտոնական կայքէջում՝ գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով:

գ) Մշակութային

- Արդյո՞ք օժանդակության և աջակցության ծառայությունները կիրառվում են համապատասխան թիրախային խմբերի կողմից: Եթե ոչ, ապա ինչու՞:
- Որքանո՞վ են բավարարված առանձին թիրախային խմբերը մատուցվող օժանդակությունից և աջակցությունից:

ԵԳՊԱ-ն մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում ուսանողի կրթական կարիքները և համապատասխան քայլեր ձեռնարկում նպաստավոր կրթական միջավայր ստեղծելու համար:

ԵԳՊԱ-ի տարբեր ստորաբաժանումների և թիրախային խմբերի համագործակցությունը սերտ է՝ հիմնված փոխադարձ հարգանքի, օգնության, աջակցության վրա:

Ուսանողները կարող են օգտվել ԵԳՊԱ-ի տրամադրած ծառայություններից (խորհրդատվություններ, սեմինարներ, վարպետաց դասեր, ֆինանսական աջակցություն և այլն) և առկա ռեսուրսներից (լաբորատորիաներ, արվեստանոցներ, գրադարան և այլն):

ԵԳՊԱ-ի տրամադրած ծառայությունների և ռեսուրսների արդյունավետությունը գնահատվում է շահակիցների շրջանում պարբերաբար անցկացվող հարցումների միջոցով:

Ընդունելության քննությունների անցկացման արդյունավետության գնահատման համար ՈԱ կենտրոնը ամեն տարի հարցում է անցկացնում 1 կուրսեցիների շրջանում՝ քննությունների պայմանների բարելավման համար: Հարցումները նշանակալի թերություններ չեն բացահայտել:

Ուսանողների աջակցության արդյունավետությունը ԵԳՊԱ-ում գնահատվում է «ԵԳՊԱ ռեսուրսների և ծառայությունների արդյունավետության գնահատում» 2 հարցաշարով 2 թիրախային խմբերի համար՝ դասախոսների և ուսանողների: Վերջին հարցումը կատարվել է 2015թ.-ին, և վերջինս խիստ տարբերվում էր նախորդ հարցման արդյունքներից, քանի որ արդեն վերազինված էին «Համակարգչային գրաֆիկայի», «Հագուստի մոդելավորման», «Դիզայնի» և «Դեկորատիվ կիրառական արվեստի» արվեստանոցները, արհեստանոցներն ու լաբորատորիաները, ինչը մեծ կարևորություն ունի ՄԿԾ-երի հաջող իրականացման համար: «Գրաֆիկայի» և «Քանդակի» ՄԿԾ-երի արվեստանոցներն դեռևս ունեն վերազինման կարիք:

ԵԳՊԱ-ի ողջ գործունեության վերաբերյալ իրականացված հարցումները չեն արձանագրել ուսանողների դժգոհություններ խորհրդատվության կամ աջակցության վերաբերյալ, սակայն գրանցվել են որոշակի ռեսուրսների սակավության վերաբերյալ դժգոհություններ, որոնք հնարավորինս կարճ ժամկետներում և հնարավորության սահմաններում լուծվում են:

Խորհրդատվության և աջակցության առավել արդյունավետ իրականացման համար ԵԳՊԱ-ն շարունակ փորձում է աշխատակազմին լրացուցիչ հմտություններ փոխանցել տրամադրվող ծառայությունների որակը բարձրացնելու համար:

III. Ռեսուրսների կառավարում

III. 1. Նյութական և մարդկային ռեսուրսներ

ա) *Բնասխտուցիոնալ*

- Ո՞ր տարրերն են աջակցում այս ոլորտում հաստատության կողմից սահմանված որակի խնդիրների իրականացմանը/նվաճմանը:
- Որո՞նք են բնորոշ դժվարությունները և ինչպե՞ս են դրանք համաձայնեցվում:

ԵԳՊԱ նյութական և մարդկային ռեսուրսների զարգացումը հաստատության մշտապես արդիական խնդիրներից է, ուստի այն ամրագրված է 2012-2016թթ ՌԾ-ում՝ նպատակ 1-ի մի շարք խնդիրներում.

- խնդիր-4՝ դասախոսական կազմի կայունացում,
- խնդիր 5՝ վարչակազմի որակական աճի ապահովում,
- խնդիր 6՝ բարոյահոգեբանական առողջ և կոլեգիալ միջավայրի պահպանում և զարգացում,
- խնդիր 7՝ նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների բարելավում, դրանց արդյունավետ կառավարման ապահովում՝ որպես կրթական ծրագրերի իրականացման երաշխիք:

Նյութական և մարդկային ռեսուրսների կառավարման և զարգացման հիմքում ընկած է ՊԻՄԲ շրջափուլը: Գործընթացում ներգրավված են վարչական և ակադեմիական բոլոր ստորաբաժանումները:

Նյութական ռեսուրսների բաշխումը կանոնակարգվում է «ԵԳՊԱ ստորաբաժանումների տարեկան գործունեության պլանավորման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման կարգ»-ի համաձայն (հավելված 8): Յուրաքանչյուր ստորաբաժանման նյութական ռեսուրսները պլանավորվում են այդ ստորաբաժանման գործողությունների տարեկան պլանի կազմման ընթացքում և ամրագրվում են պլանում: Նյութական ռեսուրսների պլանավորման գործընթացում ներգրավված են ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորները ու տվյալ ստորաբաժանումը՝ որպեսզի ապահովվի ուսումնական, վարչական գործընթացների և ֆինանսների բաշխման փոխկապակցվածությունը:

Մարդկային ռեսուրսները բաժանվում են 3 դասի՝

- ուսումնագիտական,
- ուսումնասօժանդակ,
- վարչական և օժանդակ:

Ուսումնագիտական և ուսումնասօժանդակ կազմի պլանավորման գործընթացում մասնակցում են ամբիոնները, ուսումնական վարչությունը, մարդկային ռեսուրսների բաժինը և ուսումնագիտական գծով պրոռեկտորը: Հիմնական դասախոսական կազմի ընտրությունը կատարվում է գիտական խորհրդի կողմից մրցութային սկզբունքով:

Վարչական կազմի պլանավորման գործընթացում մասնակցում են՝ համապատասխան ստորաբաժանման ղեկավարը, մարդկային ռեսուրսների բաժինը: Աշխատակիցների հետ պայմանագրերի կնքումը և հրամանագրումը կատարում է ռեկտորը: Մարդկային ռեսուրսների ներգրավման և կառավարման գործընթացների հիմքում ընկած են ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ԵԳՊԱ կանոնադրությունը (տե՛ս հավելված 11) և ԵԳՊԱ

ստորաբաժանումների տարակարգերի մասին կանոնակարգը (տե՛ս հավելված 32):

Նյութական և մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացում հիմնական մարտահրավերներ են՝ ֆինանսական միջոցների սղությունը, փոփոխությունների նկատմամբ աշխատակիցների ընդդիմացումը: Այդ խնդիրների լուծման նպատակով ԵԳՊԱ-ն փնտրում է ֆինանսավորման արտաքին աղբյուրներ: Այդպիսի աղբյուրներ են հանդիսանում դրամաշնորհային ծրագրերը, որոնց շրջանակներում իրականացվում են եվրոպական կրթական տարածքի պահանջներին համապատասխան նոր համակարգերի, չափանիշերի, չափորոշիչների և ընթացակարգերի մշակում և ներդրում, գործող համակարգերի բարելավում, նյութական ռեսուրսների հարստացում, և դասախոսների ու վարչական աշխատակիցների վերապատրաստումներ:

բ) Ընթացակարգային

- Արդյո՞ք մարդկային ու նյութական ռեսուրսների բաշխման և դրանց վարչարարության վերաբերյալ գործընթացները (հատկապես դասավանդման և ուսուցման) հաստատության շրջանակներում գործում են տարբեր խմբերի, ստորաբաժանումների սպասելիքների համաձայն:
- Ինչպե՞ս է հաստատությունը ինտեգրում արտաքին պահանջները (օր. իրավական և տնտեսական):
- Որտեղի՞ց են առաջանում փոփոխություն կամ բարելավում իրականացնելու խթանները: Ինչպե՞ս են դրանք տեղայնացվում հաստատության համակարգում և որո՞նք են այն գործընթացները, որոնք առնչվում/համաձայնեցվում են այդ խթանների հետ:
- Հիմնված այդ խթանների վրա ի՞նչ փոփոխություններ են պլանավորվում: Հաստատության նյութական և մարդկային ռեսուրսների բաշխման և կառավարման գործընթացները իրականանում են ՊԻՄԲ շրջափոխի հիման վրա: Յուրաքանչյուր տարի ամբիոնները և վարչական ստորաբաժանումները ԵԳՊԱ ՌԾ-ի խնդիրներին համապատասխան կազմում են գործողությունների տարեկան պլան, որը պարունակում է պլանի իրականացման համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների ցանկը:

Ուսումնական գործընթացը ապահովող հիմնական միավորներն են հանդիսանում ամբիոնները: Անհրաժեշտ նյութական ռեսուրսների ցանկը սահմանելիս, ամբիոնի վարիչը քննարկում է ունենում ամբիոնի անդամների հետ, որի ընթացքում դասավանդողները և ուսումնաօժանդակ անձնակազմը ներկայացնում ու քննարկում են այս կամ այն դասընթացի իրականացման, լաբորատորիաների և արվեստանոցների գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ նյութական ռեսուրսները՝ հաշվի առնելով ուսանողների ուսումնառության արդյունավետ ապահովման կարիքները: Նյութական ռեսուրսների ցանկը սահմանելիս հաշվի են առնվում նաև ուսանողական և դասախոսական համակազմի շրջանում իրականացվող հարցումները: Դուրս բերված նյութական ռեսուրսների ցանկը քննարկվում է ամբիոնի վարիչի և ֆինանսատնտեսական ու ուսումնագիտական գծով պրոռեկտորների միջև կայացող քննարկման ժամանակ: Ռեսուրսների վերջնական ցանկը միասին քննարկելուց և հաստատելուց հետո ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորը կազմակերպում է ամբիոնի գործունեության և

մասնավորապես ՄԿԾ-ի իրականացման համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների ձեռքբերումը և ապահովումը: Այս գործընթացը հնարավորություն է տալիս համապատասխանեցնել ներկայացվող պահանջները բուհի ֆինանսական հնարավորություններին:

Նույն ընթացակարգով և մոտեցումներով կազմակերպվում է նաև բոլոր մնացած ուսումնական և վարչական ստորաբաժանումների տարեկան պլանների իրականացման համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների պլանավորումը:

Եթե ուսումնական տարվա ընթացքում առաջանում է չնախատեսված որևէ նյութական ռեսուրսի կարիք, ապա համապատասխան ստորաբաժանման ղեկավարը զեկուցագիր է ներկայացնում ֆինանսատնտեսական գծով պրոռեկտորին, որը քայլեր է ձեռնարկում տվյալ ռեսուրսի ձեռքբերման ուղղությամբ:

Դասախոսական անձնակազմի հավաքագրումը կատարվում է մրցութային սկզբունքով (երկարաժամկետ 5 տարի) և/կամ հրավերով (կարճաժամկետ մինչև 1 տարի):

Մրցութային սկզբունքով հավաքագրվում է ԵԳՊԱ հիմնական պրոֆեսորադասախոսական կազմը: Թափուր պաշտոնի և այն զբաղեցնողին ներկայացվող նվազագույն պահանջների վերաբերյալ մարդկային ռեսուրսների բաժինը տարածում է հայտարարություն: Պաշտոնը զբաղեցնելու համար դիմածների մրցույթը կայացնում է գիտական խորհուրդը փակ գաղտնի քվեարկությամբ: Մրցութային սկզբունքով ընտրված դասախոսների հետ կնքվում է պայմանագիր 5 տարի ժամկետով: Այս գործընթացը միտված է ԵԳՊԱ-ի դասախոսական կազմում ոլորտի լավագույն մասնագետներին ընդգրկելուն:

Հրավիրվող դասախոսների պլանավորումը կատարվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար: Ուսումնական վարչությունը կազմում է ամբիոնների ծանրաբեռնվածությունը և տրամադրում այն ամբիոնների վարիչներին: Ամբիոնների վարիչները քննարկում են ունենալով ամբիոնի անձնակազմի հետ կազմում են հիմնական (ընտրված) դասախոսների ծանրաբեռնվածությունը, ըստ որի հաշվարկվում է դասախոսի հաստիքը: Ամբիոնի հիմնական դասախոսների ծանրաբեռնվածությունը ապահովելուց հետո, ազատ ուսումնական դասընթացների/միավորների առկայության դեպքում ծագում է նոր դասախոսներ հրավիրելու անհրաժեշտություն: Առաջացած պաշտոնը զբաղեցնելու համար թեկնածություն կարող է առաջարկել ամբիոնը այդ ոլորտի արտաքին մասնագետների թվից: Հակառակ դեպքում ամբիոնը դիմում է մարդկային ռեսուրսների բաժին՝ պաշտոնի համար մրցույթ հայտարարելու և կազմակերպելու համար: Պաշտոնը զբաղեցնողի ընտրությունը կատարում է ամբիոնի վարիչը: Հրավիրված դասախոսների հետ կնքվում է պայմանագիր մինչև 1 տարի ժամկետով:

Բուհի գործունեության ընթացքում նոր գործառույթների և/կամ գործընթացների առաջացման դեպքում հանձնարարական է տրվում բուհում առկա անձնակազմին կամ որոշում է կայացվում նոր աշխատակից ընդունելու վերաբերյալ: Որոշումը կայացվում է կառավարման վերին օղակների կողմից: ԵԳՊԱ վարչական և ուսումնաօժանդակ կազմը համալրվում են մրցութային կարգով: Թափուր պաշտոնի վերաբերյալ հայտարարությունը և մրցույթի ընթացքը կազմակերպում է մարդկային ռեսուրսների բաժինը: Ընտրությունը կատարելու նպատակով ձևավորվում է առնվազն 5 հոգուց բաղկացած հանձնաժողով, որում պարտադիր կերպով ներգավվում են Մարդկային ռեսուրսների բաժնի ղեկավարը, համապատասխան ոլորտի պրոռեկտորը և համապատասխան ստորաբաժանման

դեկավարը: Կախված հայտարարված պաշտոնի գործառույթներից հանձնաժողովում կարող են ընդգրկված լինել նաև այլ աշխատակիցներ: Մրցույթը անցկացվում է պաշտոնը զբաղեցնողին ներկայացվող պահանջներին համապատասխանության սկզբունքով: Ընտրությունը կատարվում է այդ նպատակով ձևավորված հանձնաժողովի անդամների քննարկումների և միասնական կարծիքի գալու արդյունքում: Մասնագետի ընտրության վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է ռեկտորը:

ԵԳՊԱ-ում իրականացվող նյութական ռեսուրսների ձեռքբերման և մարդկային ռեսուրսների հավաքագրման գործընթացների հիմքում ընկած են՝ «ՀՀ գնումների մասին օրենքը» և «ՀՀ աշխատանքային օրենսգիրքը»: Նշված օրենքներում կամ այլ արտաքին փոփոխությունների առաջացման դեպքում համապատասխան ոլորտների դեկավարները պատասխանատու են ներքին կանոնակարգերում համապատասխան փոփոխություններ կատարելու և դրա մասին տեղեկատվություն տարածելու համար:

Փոփոխությունների և բարելավումների հիմնական խթանը՝ միասնական եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու, որակյալ և ճանաչելի կրթական ծառայություններ տրամադրելու ցանկությունն է:

Փոփոխություն կամ բարելավում իրականացնելու խթանները կարող են առաջանալ ինչպես արտաքին ազդակների այնպես էլ ներքին նախաձեռնությունների արդյունքում: Արտաքին ազդակներ կարող են հանդիսանալ օրենսդրական կամ իրավական փոփոխությունները, ՀՀ կրթության և գիտության նախարարության և այլ գերատեսչությունների կողմից իջեցվող հանձնարարականները: Արտաքին փոփոխությունների առաջացման կամ հանձնարարական ստանալու դեպքում ռեկտորը համապատասխան ստորաբաժանումներին իջեցնում է հանձնարարական դրանք տեղայնացման նպատակով գործընթաց պլանավորելու և իրականացնելու վերաբերյալ: Կախված փոփոխության գործընթացի բնույթից (երկարաժամկետ, միջնաժամկետ կամ կարճաժամկետ) համապատասխան փոփոխությունները կարող են ընդգրկվել ռազմավարական ծրագրի գործողությունների ժամանակացույցում կամ որոշ ստորաբաժանումների տարեկան գործողությունների պլանում կամ առանց պլաններում սահմանվելու փոփոխության վերաբերյալ տեղեկատվությունը կարող է արտացոլվել տարեկան և եռամսյակային հաշվետվությունների «չպլանավորված գործողություններ» բաժնում:

Բարեփոխումների վերաբերյալ ներքին նախաձեռնությունները կարող են առաջանալ ԵԳՊԱ տարբեր օղակների կողմից բուհի գործունեության տարբեր փուլերում. ԵԳՊԱ-ի հերթական 5-ամյա ռազմավարական ծրագիրը պլանավորելիս իրականացվող քննարկումների և խորհրդակցությունների և/կամ յուրաքանչյուր ստորաբաժանման տարեկան պլանների կազմման ընթացքում:

Օրինակ կրթական ծրագրերի և դասավանդման մեթոդների բարելավման գործընթացները սահմանված են ԵԳՊԱ 2012-2016թթ. Ռազմավարական ծրագրի նպատակ 1-ում: Դա խթանեց ԵԳՊԱ-ի մասնակցությունը Եվրամիության, Եվրախորհրդի և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող կրթական ծրագրերի միջազգայնացմանը և համապատասխանեցմանը միտված մի շարք ծրագրերին: Այդ ծրագրերի շրջանակներում Եվրոպական և տեղական փորձագետների կողմից իրականացվեցին վերապատրաստումներ և խորհրդատվություններ, կատարվեց տարբեր եվրոպական բուհերի լավագույն փորձի ուսումնասիրություն: Դրա արդյունքում

վերանայվեցին կրթական ծրագրերի և դասընթացների նկարագրերի ձևաչափերը՝ որոնք ներառեցին ՄԿԾ-ի և դասընթացների առաքելությունը, նպատակները, խնդիրները և ուսումնառության վերջնարդյունքները, ինչպես նաև դասավանդման, ուսումնառության և գնահատման քաղաքականությունը ու մեթոդները: Մշակվեցին ՄԿԾ-երի մշակման և վերանայման ձեռնարկը և ՄԿԾ-երի և ՈԱՇ-ի միջև համապատասխանության ապահովման ուղեցույցը: Ըստ նոր ձևաչափերի և մոտեցումների վերանայվեցին 6 ՄԿԾ-եր, 10 վերանայման ընթացքում են:

Ռազմավարական ծրագրով չնախատեսված բարեփոխման օրինակ է հանդիսանում ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգի մշակումը և դրանում էթիկայի կանոնների ներառումը: Այդ գործընթացի խթան հանդիսացան ՏԵՄՊՈՒՄ-ի GOVERN ծրագրի շրջանակներում իրականացված SWOT վերլուծության արդյունքում դուրս բերված թերությունները, ինչպես նաև իրականացված վերապատրաստումները: Խնդրի լուծման անհրաժեշտությունը քննարկելուց հետո մարդկային ռեսուրսների բաժնին հանձնարարվեց ապահովել համապատասխան կանոնակարգերի մշակումը և ներդրումը, ինչը ֆիքսվեց մարդկային ռեսուրսների բաժնի 2016 թվականի տարեկան պլանում:

Մոտ ապագայում պլանավորվում է իրականացնել հետևյալ բարելավումները/փոփոխությունները.

- 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրում գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշների (KPI) և չափանիշների (measure of success) սահմանում:
- Կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրում:
- Մարդկային և նյութական ռեսուրսների բարելավման նպատակով արտաքին ֆինանսավորման աղբյուրների հայթայթում:
- Դասախոսական և վարչական անձնակազմի որակավորման բարձրացման նպատակով վերապատրաստումների անցկացման քաղաքականության և ընթացակարգի մշակում:
- Նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների բարելավում (արտաքին ֆինանսական աղբյուրների ներգրավման և ձեռնարկատիրական գործունեության իրավունք ձեռք բերելու ու իրականացնելու միջոցով):
- Մարդկային և նյութական ռեսուրսների որակի ապահովման մեխանիզմների և գործիքների բարելավում:

գ) Մշակութային

- Ինչպե՞ս կարող են հաստատության անդամները, օրինակ պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները, մասնակցել դասավանդման և ուսուցման նյութական ու մարդկային ռեսուրսների կառավարմանը:
- Արդյո՞ք հաստատության բոլոր անդամները համարժեք կերպով տեղյակ են ֆիզիկական և ֆինանսական ռեսուրսների կառավարման գործընթացից:
- Ի՞նչ արժեքներ և մեթոդներ են ընդունվում կամ սպասվում այն մարդկանցից, ովքե՞ր ներգրավված են ռեսուրսների օգտագործման մեջ: Որո՞նք են

հաստատության ռեսուրսների չարաշահումներից կամ վատնումից խուսափելու ուղղորդող սկզբունքները:

- Արդյո՞ք իրենց կողմից սահմանված կանոնները (ուղղորդումները) ազդում են իրենց վրա: Ինչպե՞ս են կոնֆլիկտները համաձայնեցվում:

Անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսների վերաբերյալ ամբիոնների պահանջի հիմքում ընկած է դասախոսներից և ուսանողներից ստացված առաջարկները, հետևաբար դասախոսական և ուսանողական կազմը ԵԳՊԱ նյութական ու մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացում ունի իր նշանակալի դերը: Ավելին, ԵԳՊԱ առկա ռեսուրսների և մատուցվող ծառայությունների վերաբերյալ ՈԱ կենտրոնի հարցումներն ուսանողների ու դասավանդողների շրջանում ևս նպաստում են նրանց կարիքների վերհանմանը: Այդ հարցումների, ամբիոնների առաջարկների հիման վրա վերազինվել են ԵԳՊԱ մի շարք լաբարատորիաներ, արվեստանոցներ և արհեստանոցներ:

Համաձայն «ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգ»-ի (հավելված 13) դասախոսական և ուսանողական համակազմից պահանջվում է խնամքով վերաբերվել լաբարատորիաների սարքավորումներին: Սույն կանոնակարգում ներկայացված է նաև հաստատության ներսում շահակիցներից պահանջվող վարքագծի և էթիկայի կանոնները: Սահմանված վարքի կանոնները նպաստում են հաստատությունում աշխատանքային առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը: Աշխատանքային նման միջավայր ունենալը ԵԳՊԱ ՌԾ կարևոր խնդիրներից է, քանի որ բարոյահոգեբանական առողջ և կոլեգիալ միջավայրի պահպանումն ու զարգացումը նպաստում են հաստատության կազմակերպական մշակույթի ձևավորմանը, ինչն էլ իր դրական ազդեցությունն է ունենում Ակադեմիայի կառավարման և մի շարք գործընթացների վրա: Կոնֆլիկտների առաջացման դեպքում դրանք լուծվում են բանակցությունների միջոցով (mutual understanding): Եթե առաջացած խնդիրները բանակցությունների միջոցով չեն լուծվում, ապա կախված խնդրի բնույթից այն քննարկվում է համապատասխան վարչական մարմնի հետ, օրինակ՝ ուսումնական գործընթացի հետ կապված խնդիրները նախ և առաջ քննարկվում են ամբիոն նիստերում: Ամբիոնի նիստում լուծում չգտնելու դեպքում այն քննարկվում է ռեկտորատում: Վարչական մի շարք այլ խնդիրներ ևս կարող են իրենց լուծումը գտնել ռեկտորատի նիստում:

III.2. Մարդկային ռեսուրսների զարգացում

ա) *Ինստիտուցիոնալ*

- Ի՞նչ մարտահրավերներ են եղել մարդկային ռեսուրսների զարգացման վերաբերյալ:
- Արդյո՞ք գոյություն ունեցող հասկացությունները համարժեք կերպով հաշվի են առնում այդ մարտահրավերները:

ԵԳՊԱ գործունեության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում մարդկային ռեսուրսների զարգացումը, ինչը անմիջականորեն ազդում է բուհի տարբեր գործընթացների արդյունավետության վրա: Այդ ուղղությամբ ԵԳՊԱ-ի հիմնական մարտահրավերներն են.

- ԵԳՊԱ նպատակներին համահունչ անձնակազմի զարգացման գործընթացի կանոնակարգում և փաստաթղթավորում:
- Մարդկային ռեսուրսների զարգացման գործընթացի որակի ապահովման մեխանիզմների և գործիքների գործարկում:
- Մահուն սերնդափոխություն:

ԵԳՊԱ անձնակազմի զարգացման առաջնահերթ ուղղություններից է անձնակազմի ձևավորման քաղաքականության և մասնագիտական զարգացման ներքին համակարգի բարելավումը: ԵԳՊԱ-ում վերջինը ներառում է վերապատրաստումների իրականացման համակարգը, խրախուսման քաղաքականությունը և մասնագիտական աճին նպաստող միջավայրը: Չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ տարրերը առկա են բուհի գործունեության մեջ, դրանք մանրամասնորեն պլանավորված և փաստաթղթավորված չեն:

Մարդկային ռեսուրսների զարգացման գործընթացի որակի ապահովման մեխանիզմների և գործիքների գործարկումը կարևոր մարտահրավեր է: Բուհը կարևորում է մարդկային ռեսուրսների զարգացման գործընթացների որակի ապահովման մեխանիզմների և գործիքների մշակումն ու կիրառումը՝ դրանց նպատակայնությունը և արդյունավետությունը ապահովելու համար: Վերջին տարիներին անձնակազմի նպատակային վերապատրաստումները կազմակերպվել են դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, որոնք իրենց մեջ ներառել են որակի ապահովում:

Գիտակցելով անձնակազմի զարգացման համակարգի բարելավման և դրա գործարկման որակի ապահովման անհրաժեշտությունը, նախատեսվում է ԵԳՊԱ 2017-2021թթ. ռազմավարական ծրագրում ներառել մարդկային ռեսուրսների զարգացման գործընթացի կանոնակարգմանը, փաստաթղթավորմանը և որակի ապահովմանը միտված գործողություններ:

Դասավանդման և ուսումնառության ժամանակակից մոտեցումները ենթադրում են ժամանակակից տեխնոլոգիաների և գաջեթների օգտագործումը: Ուստի կարևոր մարտահրավեր է համապատասխան կարողություններով օժտված երիտասարդ մարդկային ռեսուրսների ներգրավումը և փորձառու աշխատակիցների հետ նրանց համագործակցության խթանումը: Նման մոտեցումը թույլ է տալիս ապահովել նոր մոտեցումների և լավագույն ավանդույթների փոխկապակցումը:

բ) Ընթացակարգային

- Ինչպե՞ս է աշխատում անձնակազմի զարգացման հասկացությունը (concept)
- Որո՞նք են բնորոշ դժվարությունները: Ինչպե՞ս են դրանք համաձայնեցվում:
- Որտեղի՞ց են առաջանում փոփոխություն կամ բարելավում իրականացնելու խթանները: Ինչպե՞ս են դրանք տեղայնացվում հաստատության համակարգում և որո՞նք են այն գործընթացները, որոնք առնչվում են այդ խթանների հետ:

Բուհի արդյունավետ գործունեության հիմքում ընկած է մարդկային կապիտալը, ուստի ԵԳՊԱ-ն անձնակազմի բարձր կատարողականը ապահովելու համար շարունակաբար իրականացնում է անձնակազմի մասնագիտական աճը խթանող միջոցառումներ, որոնք հասանելի են և դրանցում հավասարապես ներգրավվում են բուհի գործառնական բոլոր ստորաբաժանումները: Բուհը կայանալիք բոլոր վերապատրաստումների վերաբերյալ սպառիչ տեղեկություն է տրամադրում ներքին շահակիցներին ԵԳՊԱ պաշտոնական կայքէջի միջոցով: Բացի այդ, կայանալիք միջոցառման վերաբերյալ համապարփակ տեղեկություն է տրամադրվում բոլոր ստորաբաժանումներին, սակայն լինում են դեպքեր, երբ վերապատրաստումը իրականացվում է հատուկ նպատակով և այն վերաբերում է միայն մեկ կամ մի քանի թիրախային ստորաբաժանումներին, որոնց տեղեկություն տրամադրվում է ոչ միայն կայքէջի, այլ նաև գործընթացը համակարգող ստորաբաժանման միջոցով: Կրթական ծրագրերի վերաբերյալ վերապատրաստումներին հիմնականում մասնակցում են ամբիոնները, բուհի կառավարմանը վերաբերող միջոցառումներին մասնակցում է վարչական կազմը և այլն: Մինչ այժմ կայացած վերապատրաստումների մասին է վկայում բուհում իրականացված բարեփոխումները՝ կրթական ծրագրերի, կազմակերպական կառուցվածքի վերանայում և այլն: Բուհը շարունակում է իրականացնել անձնակազմի մասնագիտական աճին նպաստող միջոցառումները, մասնավորապես՝

- ԵԳՊԱ-ն նախաձեռնում է վերապատրաստումներ՝ միտված հաստատության թիրախային տարբեր խմբերի մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացմանը: Վերապատրաստումներն իրականացվում են տարբեր ուղղություններով՝ ՄԿԾ-եր և ուսումնական գործընթաց, կառավարում ու վարչարարություն և այլն, որոնք համահունչ են հաստատության ռազմավարական նպատակներին:
- ԵԳՊԱ-ն նաև անդամակցում է մի շարք դրամաշնորհային ծրագրերի, որոնց շրջանակներում վերապատրաստվում են վարչական, դասախոսական, ուսումնասօժանդակ կազմի ներկայացուցիչներ: Վերապատրաստումները միտված են ԵԳՊԱ կառավարման համակարգի բարելավմանը, կրթական ծրագրերի մշակմանը և վերանայմանը, հետազոտական գործունեության զարգացմանը, միջազգայնացմանը: ԵԳՊԱ-ի արտերկրում վերապատրաստված կազմը իրականացնում է լավագույն փորձի փոխանակում (in-house trainings) բուհի ներսում:
- ԵԳՊԱ-ն մշտապես նպաստում է աշխատակիցների մասնագիտական աճին՝ ստեղծագործող դասախոսներին հնարավորություն տալով անվճար ցուցադրել իրենց գործերը ԵԳՊԱ-ի ցուցասրահում, իսկ հետազոտողներին՝ գիտական հոդվածները անվճար հիմունքներով տպագրել «Տարեգիրք» գիտական

հողվածների ժողովածուում, ինչը նպաստում է իրենց կարիերային աճին:

- ԵԳՊԱ-ն պայմաններ է ստեղծում երիտասարդ դասախոսների աշխատանքային գործունեության համար, ինչը թույլ է տալիս իրականացնել դասախոսների ներդաշնակ և սահուն սերնդափոխություն: Առաջատար դասախոսները ուղղորդում են դասավանդման ոլորտում իրենց առաջին քայլերը կատարող երիտասարդ դասախոսներին (տե՛ս հավելված 33):

Վերապատրաստումների արդյունքում մշակվել են մի շարք փաստաթղթեր, վերանայվել են մասնագիտական կրթական ծրագրերը, գնահատման համակարգը, կառավարման մոտեցումները և այլն:

Աշխատակազմի մասնագիտական աճն ապահովելու համար իրականացվող գործողություններն առավել համակարգված դարձնելու նպատակով ԵԳՊԱ-ն նախատեսում է մշակել մասնագիտական զարգացման քաղաքականություն և վերապատրաստումների հստակ ժամակացույց:

Վերապատրաստումների հիմնական խնդիրն է անձնակազմի կողմից նոր մոտեցումների հանդեպ թերահավատությունը և դիմադրությունը: Այդ պատճառով հաճախ փոփոխությունները հիմնավորելու լրացուցիչ հանդիպումների անհրաժեշտություն է առաջանում:

Մարդկային ռեսուրսների կարողությունների փոփոխության և բարելավման խթան կարող է առաջանալ որևէ նոր գործընթաց նախատեսելու, այն ներդնելու կամ նախկին գործընթացները բարելավելու անհրաժեշտություն հայտնաբերելու դեպքում: Նոր գործընթացներ մեկնարկելիս կամ գոյություն ունեցող գործընթացները բարելավելիս ԵԳՊԱ-ի կողմից նախաձեռնվում են համապատասխան գործընթացները արդյունավետ կազմակերպելուն միտված վերապատրաստումներ, ինչը նպաստում է փոփոխությունների տեղայնացմանը:

գ) Մշակութային

- Անձնակազմի զարգացման ո՞ր կոնցեպտները և առաջարկներն են (հատկապես նրանք, որոնք կենտրոնանում են բովանդակային և դիդակտիկ զարգացման վրա) հատկապես լավ ընդունվում դասախոսական կազմի կողմից, որո՞նք լավ չեն ընդունվում, ինչու՞ :

Մարդկային ռեսուրսների զարգացման հնարավորությունները և ձեռնարկվող գործընթացները ԵԳՊԱ-ի գործունեության առաջնահերթ խնդիրներից են: Հաշվի առնելով կրթության ոլորտում արագընթաց զարգացումները՝ մասնագիտական աճին նպաստող ցանկացած միջոցառում խրախուսվում է բուհի կողմից, որը ևս գիտակցում են հաստատության աշխատակիցները: Նրանց լայն շրջանակը ներգրավում է այդ գործընթացներում և հիմնականում դրական գնահատում նախաձեռնությունները:

Հատկապես կարևորվում է մենթորության գործընթացը, որը թույլ է տալիս բուհում կատարել լավագույն փորձի փոխանակում՝ երիտասարդներին հնարավորություն տալով ծանոթանալ բուհի տարիների ավանդույթներին և դրանք զարգացնել նոր ու ժամանակակից մոտեցումներով:

ԵԳՊԱ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ստեղծագործական մտքի զարգացմանը նպաստում են նաև բազմաթիվ ցուցադրությունները, որտեղ ԵԳՊԱ աշխատակիցները հնարավորություն ունեն անվճար ցուցադրելու իրենց ստեղծագործությունները: Այս միջոցառումները միանշանակ լավագույն արձագանք են ստանում աշխատակիցների կողմից:

Բացի վերոնշյալից, վերջին տարիներին մեծ է աշխատակազմի մասնակցությունը բազմաթիվ տեղական և միջազգային վերապատրաստումներին, որոնք նախաձեռնում, իրականացնում կամ մասնակցում է ԵԳՊԱ-ն: Վերապատրաստումները միջազգային մակարդակում փորձի ուսումնասիրության լավագույն տարբերակներից են, որից հետո արձագանքը միանշանակ չի լինում՝ հաշվի առնելով տեղայնացման դժվարությունն ու հաստատության առանձնահատկությունները: Սակայն դրանց ընդունումը և կիրառումը ժամանակի խնդիր է, որը պարբերաբար իր լուծումն է ստանում հաստատության ներսում իրականացվող բազմաթիվ ներքին քննարկումների և սեմինարների միջոցով: Այնուամենայնիվ, ԵԳՊԱ աշխատակիցները բավարարված են մատուցվող ծառայություններից, սակայն բուհը և անձնակազմը գիտակցում է առավել հաճախ ու խորը մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման անհրաժեշտությունը, որի կազմակերպմանը խոչընդոտում են բուհի ֆինանսական սուղ միջոցները: Վերջինս լուծումը ժամանակի խնդիր է, որի հաղթահարման նպատակով բուհը ֆինանսավորման արտաքին աղբյուրներ է փնտրում, մասնավորապես բարձրագույն կրթության ոլորտում գրանտային ծրագրեր:

Այսպիսով՝ ԵԳՊԱ-ն, քաջ գիտակցելով փոփոխությունների ու բարելավումների անհրաժեշտությունը, գնահատելով իր ուժեղ ու թույլ կողմերը և հետագա պլանները, հատկապես վերջին տարիներին ակտիվորեն հետևում է աշխատակազմի մասնագիտական զարգացմանը և աճին՝ ստեղծելով նորանոր հնարավորություններ և փորձելով հնարավորինս լայն շրջանակներին ներգրավել տարբեր միջոցառումներում, հետևապես ամփոփելով դրանք որպես մասնագիտական առաջընթացին նպաստող հստակ քաղաքականություն:

III.3 Կապը հետազոտության հետ

ա) *Ինստիտուցիոնալ*

- Արդյո՞ք գոյություն ունեն մարտահրավերներ դասավանդումը և հետազոտությունը միմյանց կապելու գործընթացում: Արդյո՞ք գոյություն ունեցող հասկացությունները համարժեք կերպով հաշվի են առնում այդ մարտահրավերները:
- Որո՞նք են գոյություն ունեցող հասկացությունների ուժեղ կողմերը:

ԵԳՊԱ-ում կապը հետազոտության և դասավանդման միջև ապահովվում է կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողների մոտ հետազոտական կարողությունների ձևավորման, ինչպես նաև ասպիրանտների և դասախոսների կողմից իրականացվող հետազոտությունների արդյունքները ուսանողների շրջանում տարածելու միջոցով: Այնուամենայնիվ, իրականացվող հետազոտությունների և ուսումնական գործընթացի փոխկապակցումը, մասնավորապես՝ դրա կանոնակարգումը շարունակում է կարևոր մարտահրավեր մնալ.

- Փաստաթղթային հենքի ստեղծում
- Դասավանդման մեջ հետազոտությունների արդյունքների կիրառմանը միտված հստակ մեխանիզմների մշակում
- Ներքուհական **նպատակային** հետազոտությունների դրամաշնորհային համակարգի ներդրում
- Հետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության ապահովում
- Արտաքին ֆինանսական միջոցների հայթայթում:

Մինչ այժմ վերոնշյալ մարտահրավերներին ԵԳՊԱ-ն անդրադարձել է մի շարք բարեփոխումների իրականացման միջոցով, որոնց շրջանակներում.

- Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում առավել ուշադրություն դարձվեց հետազոտական բաղադրիչին
- Բարձրագույն կրթության 3-րդ մակարդակի համակարգի բարելավման նպատակով ԵԳՊԱ-ն ներգրավեց ՏԵՄՊԻՍ-ի ՎԵՆԻՏԱՍ ծրագրին, որի շրջանակներում ստեղծվեց հետազոտական կենտրոն և վերանայվեց հետազոտողի կրթական ծրագիրը (PhD programme)
- Ասպիրանտները դասավանդում են բակալավրիատի և/կամ մագիստրատուրայի ուսանողներին, որի շրջանակներում ներկայացնում են իրենց հետազոտությունները:

Հետազոտության զարգացումը շարունակում է մնալ ԵԳՊԱ կարևորագույն ոլորտներից մեկը և հաջորդ ռազմավարական ծրագիրը մեծ տեղ է հատկացնում իրականացվող հետազոտությունների և դասավանդման գործընթացի էլ ավելի սերտ փոխկապակցմանը և համակարգմանը (տե՛ս հավելված 9):

բ) Ընթացակարգային

- Ինչպե՞ս են կազմակերպվում դասավանդումը հետազոտության հետ կապելու գործընթացը: Ո՞վ է ներգրավված, ո՞վ է պատասխանատու և ո՞վ է տեղեկացվում:
- Որտեղի՞ց են առաջանում փոփոխություն կամ բարելավում իրականացնելու խթանները: Ինչպե՞ս են դրանք տեղայնացվում հաստատության համակարգում և որո՞նք են այն գործընթացները, որոնք առնչվում են այդ խթանների հետ:

Կարևորելով հետազոտական ոլորտի զարգացումը՝ ԵԳՊԱ-ն իրականացրել է մի շարք գործողություններ, որոնք նախատեսված էին 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրով: Գործընթացը բուհում համակարգում է ուսումնագիտական գծով պրոռեկտորը, իսկ նորաստեղծ հետազոտական կենտրոնը և թողարկող ամբիոնները պատասխանու են բովանդակային բարեփոխումների և հետազոտությունը դասավանդմանը փոխկապակցելու աշխատանքների կարգավորման, ինչպես նաև արդյունքների տարածման համար: Մինչ այժմ ԵԳՊԱ-ում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Դասավանդման և հետազոտության կապը ապահովելու նպատակով ԵԳՊԱ-ում իրականացվող բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտական աշխատանքներին հատկացվել են կրեդիտներ: Բակալավրի կրթական ծրագրերում հետազոտություն իրականացնելու և ավարտական աշխատանք պատրաստելու համար հատկացվել է 26 կրեդիտ, իսկ մագիստրոսի կրթական ծրագրերում՝ 60 կրեդիտ: Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի ապահովման համար պատասխանատու են թողարկող ամբիոնը և ուսումնական վարչությունը:
- Ելնելով իրականացվող մասնագիտությունների յուրահատկություններից՝ կիրառական ուղղվածություն ունեցող մասնագիտություններում (ինչպիսիք են՝ «Դիզայն», «Կիրառական արվեստ» և այլն) մասնագիտական առարկաները նույնպես ներառում են հետազոտական բաղադրիչ: Վերջինիս նպատակն է նյութերի և գործիքների ճանաչողության խորացումը, մասնագիտական վարպետության հղկումը, գեղարվեստական միջոցների յուրացումն ու զարգացումը, ստեղծագործական երևակայության խթանումը և այս ամբողջի ուսումնասիրությունը գեղարվեստական գործընթացի համատեքստում: Օրինակ, որևիցե նոր իր նախագծելիս կամ այլ խնդիր լուծելիս ուսանողի հանձնարարության մաս է հանդիսանում նմանատիպ արդեն գոյություն ունեցող իրերի և դրանց պարամետրերի հետազոտումը:
- Տեսական ուղղվածություն ունեցող մասնագիտություններում (ինչպիսին է՝ «Արվեստաբանությունը») ներառված է հատուկ դասընթացների շարք, որոնց սահմաններում ուսանողներին ներկայացվում են ԵԳՊԱ-ում իրականացվող հետազոտությունների արդյունքները: Այդ դասընթացները հաճախ փոփոխվում են և նախատեսված են հետազոտություններ իրականացնող դասախոսների ընթացիկ հետազոտական աշխատանքի արդյունքները դասավանդման միջոցով ներկայացնելու համար:
- Տեսական ուղղվածությամբ կրթական ծրագրերում իրականացվում է

գիտական-տեսական հետազոտություն, որի նպատակն է ուսումնասիրել արվեստի ստեղծագործությունները և արվեստաբանական ու հումանիտար մտքի զարգացումը պատմական գործընթացում: Նման հետազոտության շրջանակներում ուսանողներն ուսումնասիրում են գեղարվեստական փաստերը, դրանց ստեղծման բովանդակային, ոճական և ձևային օրինաչափությունները և այլն:

- Ուսանողների հետազոտական գործունեության ուղղորդման համար 2014թ. մշակվել և կիրառության է դրվել ԵԳՊԱ բակալավրի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույց, որում ընդհանրացվել են աշխատանքներին ներկայացվող պահանջները («Ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույց»-ը տե՛ս հավելված 25): Ուսանողները ավարտական աշխատանքները գրելիս օգտվում են ուղեցույցից, որը նրանց հետազոտական գործունեությունը առավել համակարգված և թիրախային է դարձնում:
- ԵԳՊԱ հետազոտական գործունեության բարելավման հիմնաքարերից է հետազոտողի կրթական ծրագրի մշակումը՝ համապատասխան Զալցբուրգյան սկզբունքներին: Այդ նպատակով բուհը դիմել է VERITAS դրամաշնորհային ծրագրին, որի արդյունքում ոչ միայն վերանայվեց հետազոտողի ծրագիրը, այլ նաև ստեղծվեց ԵԳՊԱ Հետազոտական կենտրոնը:
- Հետազոտողի կրթական ծրագրի ուսանողներն իրենց կատարած հետազոտությունների արդյունքները ներկայացնում են բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներին: Հետազոտողի կրթական ծրագրի ուսանողների հեղինակած գիտական հոդվածները ցածր կուրսերի ուսանողների համար երբեմն դառնում են անհրաժեշտ գրականություն:
- ԵԳՊԱ-ում իրականացված հետազոտությունների արդյունքները հաճախ դառնում են մեթոդական ուղեցույցեր և դասագրքեր: Վերջին տարիներին հրապարակվել են «Հայ կերպարվեստի պատմություն» և «Հայ մանրանկարչության պատմություն» դասագրքերը, ինչպես նաև 12 ուսումնամեթոդական ձեռնարկ՝ երաշխավորված ԵԳՊԱ Գիտական խորհրդի և ընդունված ՀՀ ԲՈՀ-ի կողմից:
- Նորաստեղծ հետազոտական կենտրոնը մշակել է մանրամասն և թիրախավորված ռազմավարական ծրագիր՝ հետազոտության համար և սահմանել է արվեստի տեսական ոլորտում բուհում կիրառվելիք հետազոտական ուղղությունները առաջիկա հինգ տարիների համար: Այդ ուղղությունները սահմանվել են՝ հաշվի առնելով բուհի մարդկային և նյութական ռեսուրսները, միջազգային մակարդակով արվեստի հետազոտության ոլորտում արդի իրավիճակը, ժամանակակից խնդիրները, զարգացման միտումները, մրցակցություն ապահովող ոլորտներն ու թեմաները, ինչպես նաև տեղական պահանջարկը:
- Հետազոտական կենտրոնը, ստեղծագործական ամբիոնների հետ համատեղ Կերպարվեստի, դիզայնի և կիրառական արվեստի ոլորտների համար Հայաստանում առաջին անգամ մշակել է հետազոտության

ուղղություններ, սահմանել է զարգացման միտումները և ընտրել է թեմաներ, որոնք պետք է ապահովեն բուհի առաքելության իրականացումը հետազոտության ոլորտում և տեղական ու միջազգային մակարդակով մրցունակության բարձրացումը:

- Հետազոտական կենտրոնը պարբերաբար կազմակերպում է միջոցառումներ՝ հանդիպումներ, բանախոսություններ, զեկույց-քննարկումներ, թեմատիկ ելույթներ, ճանաչողական ճամփորդությունների հաղորդումներ ինչպես բուհի դասախոսների և ուսանողների, այնպես էլ դրսի մասնագետների և հրավիրյալ դասախոսների մասնակցությամբ:
- Այս տարվանից կենտրոնի նախաձեռնությամբ նախատեսվում է ներդնել հիմնական և համատեղությամբ աշխատող դասախոսների համար հետազոտական սահմանված թեմաների պլանային ներկայացման համակարգ, նվազագույնը՝ մեկ, առավելագույնը՝ երեք տարով: Թեմաները պետք է ընտրվեն բուհի և կենտրոնի սահմանած հետազոտական ուղղությունների և ռազմավարական ծրագրի շրջանակներում:

ԵԳՊԱ հետազոտական գործունեության մեջ փոփոխություններ/բարեփոխումներ իրականացնելու հիմքում կարող են ընկած լինել ինչպես ներքին ինստիտուցիոնալ, այնպես էլ արտաքին խթաններ, որոնք նպաստում են ոլորտի շարունակական զարգացմանը: Հետամուտ լինելով արդեն իրականացված միջոցառումներին՝ ԵԳՊԱ-ն իր հետագա գործողություններում ևս կարևորել է հետազոտության զարգացումը՝ հատկապես դասավանդման և հետազոտության փոխկապակցումը, որը և սահմանված է 2017-2021 թթ. ռազմավարական ծրագրում: Ինչպես նաև բուհի հետազոտական ոլորտի զարգացման նպատակով ԵԳՊԱ-ն մասնակցում է ԷՐԱԶՄՈՒՄ+ «Նպաստել հետազոտության միջազգայնացմանը եվրոպական ինտեգրման համատեքստին համապատասխան բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի որակի ապահովման համակարգի ստեղծմամբ և իրականացմամբ» (C3QA) դրամաշնորհային ծրագրին: Վերջինս միտված է 3-րդ աստիճանի կրթության՝ մասնավորապես ասպիրանտական ծրագրերի որակի ապահովման քաղաքականության և գործիքակազմի մշակմանը ու փորձարկմանը: Ծրագիրը կնպաստի ոչ միայն ԵԳՊԱ 3-րդ աստիճանի կրթական ծրագրի և բուհի հետազոտական ոլորտի զարգացմանը, այլ նաև հետազոտության իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը և շարունակական բարելավմանը:

գ) *Մշակութային*

- Ի՞նչ արժեքներ և վարքագիծ է ակնկալվում հաստատության անդամներից, երբ խոսքը վերաբերում է դասավանդումն ու հետազոտությունը միավորելուն: Ինչպե՞ս է հաստատությունը աջակցում սպասվելիք վարքագծին:
- Ի՞նչ չափով/ Որքանո՞վ են հաստատության տարբեր անդամները կիսում և ընդունում սպասվելիք արժեքները և վարքագիծը:

Հետազոտական գործունեություն ծավալելիս կարևորվում է նորագույնի, նոր գաղափարի վերհանումը, ինչպես նաև արժևորվում է հետազոտական աշխատանքի արդյունքների ներկայացումը և փորձի փոխանակումը գործընկերների ու ուսանողների հետ: Վերջինիս իրականացումը ֆորմալ և ոչ ֆորմալ հանդիպումների ու քննարկումների

միջոցով հնարավորություն է տալիս հետազոտության արդյունքները ոչ միայն տարածել, այլ նաև գտնել դրանք դասավանդման գործընթացի հետ փոխկապակցելու ուղիները:

Հետազոտական գործունեությանը խթանելու և հետազոտության արդյունքների տարածմանը նպաստելու համար ԵԳՊԱ-ն տրամադրում է՝

- գիտական գործունեությամբ զբաղվող դասախոսներին հետազոտություններ կատարելու համար հավելյալ վճարվող ժամեր
- ԵԳՊԱ-ի գիտական ամսագրում անվճար տպագրվելու հնարավորություն
- հետազոտության շուրջ առանձին սեմինարների և ամբողջական դասընթացների իրականացման հնարավորություն,
- հետազոտության արդյունքների տարածման հարթակ ուսանողների, դասախոսների և արտաքին հետազոտողների շրջանում հետազոտության արդյունքները ներկայացնելու, քննարկելու և նոր գաղափարներ ու մոտեցումներ ձևավորելու համար:

Կարևորելով հետազոտական ոլորտի զարգացումը և ուսանողների ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում՝ ԵԳՊԱ-ն իրականացրել է մի շարք գործողություններ, որոնք նախատեսված էին 2012-2016 թթ. ռազմավարական ծրագրով: Գործընթացը բուռնում համակարգում է ուսումնագիտական գծով պրոռեկտորը, իսկ նորաստեղծ հետազոտական կենտրոնը և թողարկող ամբիոնները պատասխանու են բովանդակային բարեփոխումների համար: Ավելին, բուհը քայլեր է ձեռնարկել հետազոտությունը դասավանդմանը փոխկապակցելու ուղղությամբ: Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության մակարդակը բարձրացնելու նպատակով ԵԳՊԱ-ն նախատեսում է ներդնել ներբուհական գրանտային ծրագրեր, ինչը կնպաստի նաև հետազոտության ոլորտում ուսանող-դասախոս համագործակցության ամրապնդմանը:

Հետազոտական գործունեության մեջ նորագույնի, նոր գաղափարի զարգացման և արդյունքների տարածման անհրաժեշտությունը ընդունում և կարևորում է ԵԳՊԱ-ի ներքին շահակիցների՝ դասախոսների և ուսանողների մեծամասնությունը: Սակայն գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող դասախոսների թիվը մեծ չէ, ինչը պայմանավորված է նաև բուհի ուղղվածությամբ: Իրավիճակը բարելավելու նպատակով ԵԳՊԱ-ի 2017-2021թթ. ռազմավարական ծրագրով նախատեսվում է ներքին հետազոտական դրամաշնորհային ծրագրերի համակարգի ներդրումը: Այդ համակարգը միտված կլինի ԵԳՊԱ-ի հետազոտական ուղղություններով հետազոտություններ իրականացնող դասախոսներից և ուսանողներից կազմված հետազոտական խմբերի ֆինանսավորմանը, կոնկրետ ուղղությամբ հետազոտությունների իրականացմանը և դրանց արդյունքները միջազգային և տեղական գրախոսվող ամսագրերում հրատարակմանը, ինչպես նաև գիտական համաժողովներում ներկայացնելուն:

III.4. Կապը վարչարարության հետ


ա) *Ինստիտուցիոնալ*

- Որո՞նք են վարչարարությանն ուղղորդող սկուզբունքները և կանոնները կապված դասավանդման և ուսուցման հետ:
- Հաստատության վարչական ստորաբաժանումների կողմից դասավանդման և ուսուցման գործընթացին տրամադրվող աջակցության ո՞ր էլեմենտներն են լավ աշխատում: Ո՞ր ոլորտները բարելավման կարիք ունեն:
- Որո՞նք են վարչական կազմի համար դասավանդման և ուսուցման որակի խնդիրներին արդյունավետ աջակցելու մարտահրավերները: Ինչպե՞ս են այդ մարտահրավերները համաձայնեցվում:

Կարևորելով վարչարարության դերը բուհի գործունեության բոլոր գործընթացներում՝ ԵԳՊԱ-ն այն բարելավելու նպատակով անդամակցում է ՏԵՄՊՈՒՄ ԳՈՎԵՐՆ «Բոլոնիայի սկզբունքներին համահունչ բարձրագույն կրթության կառավարման համակարգի արդյունավետ բարեփոխումների իրականացում՝ խթանելով բուհերի ինքնավարությունը և հաշվետվողականությունը» դրամաշնորհային ծրագրին, որի շրջանակներում վերապատրաստվել է ԵԳՊԱ վարչական կազմը, ինչպես նաև տեղի են ունեցել մի շարք բարեփոխումներ՝ կառավարման համակարգի վերանայում, մի շարք հիմնադիր փաստաթղթերի մշակում և այլն: Ծրագրի շրջանակներում իրականացված բարեփոխումները իրենց դրական ազդեցությունն են ունեցել նաև ուսուցման և դասավանդման վարչարարության վրա՝ նպաստելով վերջինիս արդյունավետության բարձրացմանը:

ԵԳՊԱ-ում դասավանդման ու ուսումնառության գործընթացի վարչարարությունը կարգավորվում է մի շարք հիմնարար փաստաթղթերով՝ ԵԳՊԱ կանոնադրություն, ՄԿԾ մշակման և վերանայման ձեռնարկ, ՄԿԾ-ի նկարագիր, Ուսանողի գնահատման համակարգ, ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգ և այլն: Դրանցով սահմանվում են գործընթացների իրականացման կանոնները և էթիկան, մասնավորապես՝ վարչարարական համապատասխան գործընթացում ընդգրկված մարմինների համագործակցության շրջանակը և ենթակայության կապերը, գործունեության կազմակերպման ընթացակարգը, մասնակիցների լիազորություններն ու պատասխանատվությունը և այլն:

Դասավանդման և ուսումնառության գործընթացի վարչարարության համար պատասխանատու են ԵԳՊԱ-ի Ուսումնական վարչությունը, դեկանատները, ամբիոնները, որոնք անմիջականորեն համակարգում ու կազմակերպում են ուսումնական գործընթացը: Մակայն ԵԳՊԱ-ի վարչական մյուս ստորաբաժանումները՝ Մարդկային ռեսուրսների և ընդհանուր բաժինը, ՈԱ կենտրոնը, Ֆինանսատնտեսական բաժինը, Արտաքին կապերի բաժինը և այլն, օժանդակում և նպաստում են դասավանդման և ուսումնառության գործընթացի սահուն իրականացմանը:



Վերոնշյալ բոլոր օղակները, հիմք ընդունելով կանոնակարգող փաստաթղթերը, դասավանդման և ուսումնառության գործընթացի վարչարարությունն իրականացնելիս կարևորում են էթիկայի նորների պահպանումը (տե՛ս «ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգ», հավելված 13) և առաջնորդվում հետևյալ սկզբունքներով՝

- *կառավարման պատվիրակային մոտեցում*. հանձնարարականները տրվում և կատարվում են՝ ըստ ԵԳՊԱ ստորաբաժանումների միջև գործող ենթակայության ու հաղորդակցական կապերի
- *համագործակցություն*. Գործընթացներն իրականացվում են ստորաբաժանումների միջև համահունչ և փոխկապակցված գործունեության միջոցով,
- *թափանցիկության ապահովում*. ԵԳՊԱ-ն ձգտում է ապահովել դասավանդման և ուսումնառության գործընթացի հասանելիությունը ներքին և արտաքին շահակիցներին:

Դասավանդման և ուսումնառության վարչարարությունը կարգավորող ստորաբաժանումներն օժանդակում են գործընթացին դրա պլանավորման, անհրաժեշտ փաստաթղթային հենքի ստեղծման ու մշակման, նյութական ու ֆինանսական ռեսուրսների տրամադրման, ուսանողներին ֆինանսական աջակցության և այլնի միջոցով: Ինչպես ցույց են տվել դասախոսների և ուսանողների շրջանում վարչարարության և կառավարման վերաբերյալ կատարված հարցումների արդյունքները, նշված գործընթացները բավականին լավ ու համակարգված են գործում: Սակայն, հաշվի առնելով վարչարարության ծավալների մեծացումը և փաստաթղթաշրջանառության ժամանակատար լինելը, դրանց արդյունավետության հետագա ապահովումը և բարելավումը վերջին տարիներին դարձավ ԵԳՊԱ-ի համար լուրջ մարտահրավեր: Նշված խնդիրը կարգավորելու նպատակով ԵԳՊԱ-ն սկսել է ներդնել կառավարման էլեկտրոնային համակարգ, որը դասախոսական կազմի և ուսանողների համար կձևավորի հարթակ՝ ավելի դյուրին և թափանցիկ դարձնելով դասավանդման և ուսումնառության գործընթացը, ինչպես նաև ապահովելով դրա վարչարարության արդյունավետ համակարգումը:

Բացի այդ, վերջին տարիներին կարևորելով ԵԳՊԱ-ում իրականացվող բոլոր գործընթացների, այդ թվում նաև վարչարարության որակի ապահովումը, նախաձեռնվել են մի շարք գործընթացներ նպաստելու դրանց արդյունավետության գնահատմանը: Սակայն հստակ մեխանիզմների և գործիքների մշակումը և կիրառումը ևս մեկ մարտահրավեր է, որը ԵԳՊԱ-ն նախատեսել է իր 2017-2021թթ. Ռազմավարական ծրագրում:

բ) Ընթացակարգային

- Ինչպե՞ս են վարչական ստորաբաժանումները ներգրավվում կրթական առաջարկների մշակման, հետագա բարելավման ու իրականացման գործընթացներում և իրենց որակի ապահովման աշխատանքներում:
- Որտեղի՞ց են առաջանում փոփոխություն կամ բարելավում իրականացնելու խթանները: Ինչպե՞ս են դրանք տեղայնացվում հաստատության համակարգում և որո՞նք են այն գործընթացները, որոնք առնչվում են այդ խթանների հետ:

Դասավանդման և ուսումնառության գործընթացի վարչարարությունը կազմակերպող բոլոր օղակներն ուղղակի կամ անուղղակի ներգրավված և ապահովում են կրթական ծառայությունների (educational offers) մշակումը, իրականացումը և հետագա բարելավումը:

ԵԳՊԱ-ի դասավանդման և ուսումնառության գործընթացում ներգրավված ուսումնական վարչությունը, դեկանատները և ամբիոններն ունեն իրենց հստակ դերերը՝ ուղղակիորեն նպաստելով դրանց իրականացմանը: Ուսումնական վարչությունը տրամադրում է անհրաժեշտ ձևաչափերը, կարգերը, ժամկետները դեկանատներին ու ամբիոններին: Վերջիններս, պատասխանատու լինելով գործընթացի իրականացման համար, ուսումնական վարչության կողմից տրամադրված փաստաթղթային հենքերը կիրառելուց հետո, արդյունքները գնահատելով, արձագանք են տալիս դրանց վերաբերյալ, ինչը հնարավորություն է ստեղծում հետագա բարելավումների համար:

ԵԳՊԱ-ի դասավանդման և ուսումնառության գործընթացում իրենց ուրույն դերն ունեն նաև օժանդակող ստորաբաժանումները, որոնք պլանավորում և ապահովում են նյութական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ, իրականացնում են գործընթացների որակի ապահովում, հնարավորություններ են ստեղծում արտաքին համագործակցության, միջազգային փորձի ուսումնասիրության և ներդրման ու փոխանակման համար:

Հաշվի առնելով փաստաթղթային հենքի վերաբերյալ դեկանատներից, ամբիոններից և օժանդակ ստորաբաժանումներից ստացված արձագանքները և ուսումնասիրելով տրամադրված հենքի կիրառման ընթացքը ուսումնական վարչությունը բարելավման և փոփոխության միջոցառումներ է ձեռնարկում:

Վարչարարության ոլորտում իրականացվող բարելավումները և/կամ փոփոխությունները կարող են պայմանավորված լինել ինչպես ներքին ինստիտուցիոնալ, այնպես էլ արտաքին պահանջով: ԵԳՊԱ-ն վարչարարության գործընթացն առավել համակարգված ու արդյունավետ իրականացնելու նպատակով կատարել է կարիքների գնահատում, ինչի արդյունքում համալրել է անձնակազմը, իրականացրել է փաստաթղթերի և ընթացակարգերի վերամշակում, նախաձեռնել կառավարման էլեկտրոնային համակարգի ներդնումը, ինչպես նաև քայլեր է ձեռնարկել

վարչարարության որակի ապահովման ուղղությամբ: Սակայն, վարչարարության որակի ապահովումը շարունակում է ակտուալ մնալ և իր արտացոլումն է գտել ԵԳՊԱ 2017-2021թթ. ռազմավարական ծրագրում:

գ) Մշակութային

- Վարչական կազմին ի՞նչ արժեքներ և մեթոդաբանություն է բնորոշ կրթական առաջարկների ներկայացման, հետագա բարելավման ու իրականացման, ինչպես նաև դրանց որակի ապահովման գործընթացներում: Ի՞նչ վերաբերմունք և վարքագիծ է ակնկալվում: Ի՞նչն է նրանց օժանդակում:
- Արդյո՞ք առկա են նրանց կողմից սահմանված կանոններ, որոնք ազդում են իրենց վրա: Ինչպե՞ս են կոնֆլիկտները համաձայնեցվում:

Կրթական ծառայությունների տրամադրման գործընթացի վարչարարության մեջ ԵԳՊԱ-ն կարևորում է ստորաբաժանումների փոխկապակցված համագործակցությունը, բուհի էթիկայի նորմերով առաջնորդվելը, ինչպես նաև ուսանողական և դասավանդող համակազմին ի շահ գործելը:

ԵԳՊԱ վարչական կազմը, հաշվի առնելով կրթության ժանմանակակից պահանջները, ՄԿԾ-երի մշակման, հետագա բարելավման, ինչպես նաև հաստատության կառավարման գործընթացներում կարևորում է շահակիցների ներգրավումը: Վերջիններս պետք է դրսևորեն հանձնառություն կատարվող աշխատանքի նկատմամբ: Ներքին և արտաքին շահակիցների ներգրավումը հնարավորություն է տալիս ապահովել բուհի հնարավոր գործընթացների արդյունավետությունը ու համապատասխանությունը հաստատության մակրո և միկրո միջավայրերին: Շահակիցների ներգրավումը ապահովում է ԵԳՊԱ տարբեր գործընթացների թափանցիկությունը: Ավելին, յուրաքանչյուր գործընթացում կարևորվում է հաշվետվողականությունը, որն էլ ապահովում է գործընթացի հետևողական իրականացումը: Հաշվետվողականության բարձրացման նպատակով՝ ռեկտորի տարեկան հաշվետվությունը, որն իր մեջ ներառում է տեղեկատվություն բուհում իրականացվող տարբեր գործընթացների վերաբերյալ, տեղադրվում է ԵԳՊԱ կայքէջում: Վարչարարության գործընթացների հիմքում ընկած այս մոտեցումների կիրառումը ԵԳՊԱ-ում խթանվում է պարբերաբար անցկացվող հանդիպումների և քննարկումների, կանոնակարգող փաստաթղթերի հասանելիության ապահովման և, ըստ պահանջի, անհատական խորհրդատվությունների տրամադրման միջոցով:

Շահակիցների տեղեկացվածության ապահովման և հնարավոր կոնֆլիկտների կանխորոշման, ինչպես նաև վարչարարության ընթացակարգերի արդյունավետության ապահովման նպատակով կրթական ծառայությունների վարչարարությունը համակարգող փաստաթղթերի և համապատասխան ընթացակարգերի նախագծերը ներկայացվում են ԵԳՊԱ տարբեր շահակիցներին քննարկմանը: Ստացված արձագանքը հիմք է հանդիսանում վերոնշյալ փաստաթղթերի հետագա բարելավման համար: Այն դեպքում, երբ ԵԳՊԱ-ում արդեն գործող կարգերի արդյունավետությունը նվազում է կամ ընթացակարգը բարեփոխման կարիք ունի, գործընթացի անմիջական մասնակիցների նախաձեռնությամբ կարող է կազմակերպվել քննարկում և հետագա վերանայում:

IV. Թափանցիկություն և փաստաթղթավորում

IV.1 Ծրագրերի /դասընթացներ/ կանոններ և կանոնակարգեր

ա) *Ինստիտուցիոնալ*

- Ի՞նչ կանոններ և կանոնակարգեր են սահմանվել կրթական առաջարկների համար: Ու՞մ են դրանք հասցեագրված/ուղղված:
- Կազմակերպական ո՞ր ստորաբաժանումներն են պատասխանատու:
- Ի՞նչն է լավ աշխատում:

Բուհում ՄԿԾ-երի և դրանց դասընթացների արդյունավետ իրականացման համար ԵԳՊԱ-ն ստեղծել է համապատասխան փաստաթղթային հենք, ինչը մեծապես նպաստում է հաստատության գործունեության կանոնակարգմանը և թափանցիկության ապահովմանը: Կրթական առաջարկների մշակման և իրականացման կանոնների, կանոնակարգերի հիմնական պատասխանատու վարչական օղակներն են՝ Ուսումնական վարչությունը, դեկանատները, ամբիոնները:

ԵԳՊԱ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելությունը իրականացվում է «ԵԳՊԱ բակալավրի կրթական ծրագրով ընդունելության ներքին քննությունների անցկացման կարգ»-ի (հավելված 20), «ԵԳՊԱ մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության քննությունների անցկացման կարգի»-ի (հավելված 22), և «ԵԳՊԱ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգ»-ի համաձայն (տե՛ս հավելված 18): Սույն կարգերը հասցեագրված են ԵԳՊԱ դիմորդներին և ընդունելությունն իրականացնող մասնագիտական ու կազմակերպական հանձնաժողովներին: Գնահատման չափանիշերը և պահանջները, ընդունելության քննությունների կազմակերպումը, ինչպես նաև անցկացման ընթացակարգը սահմանվում է վերոնշյալ կարգերով:

ՄԿԾ-երի արդյունավետ իրականացման համար առկա են ուսանողների ուսումնական գործընթացը համակարգող և կանոնակարգող փաստաթղթեր:

ԵԳՊԱ կրթական բոլոր ծրագրերը մշակվում են «ԵԳՊԱ կրթական ծրագրերի մշակման և վերանայման» ձեռնարկի համաձայն (տե՛ս հավելված 5): ԵԳՊԱ յուրաքանչյուր կրթական ծրագրի ունի «ՄԿԾ նկարագիր» (տե՛ս հավելված 34), որը հասցեագրվում է ԵԳՊԱ դասավանդող և ուսանողական համակազմին: Նկարագրում մանրամասն ներկայացված է տվյալ կրթական ծրագրին վերաբերող բովանդակային և տեխնիկական սպառիչ տեղեկություն, մասնավորապես՝ ծրագրի առաքելությունը և հիմնավորումը, ուսումնական վերջնարդյունքները, դասավանդման և գնահատման ձևերը ու մեթոդները, ուսումնական պլանը, ծրագրի իրականացման համար նյութական ռեսուրսները, անհրաժեշտ գրականության ցանկը և այլն:

Ուսանողները հնարավորություն ունեն պատշաճ տեղեկություն ստանալ ԵԳՊԱ կրթական ծրագրերից ոչ միայն «ՄԿԾ նկարագրի», այլ նաև «Ուսանողի ձեռնարկ»-ի միջոցով (տե՛ս հավելված 29), որը ամեն տարի թարմացվում է: Ձեռնարկը հասցեագրվում է ԵԳՊԱ ուսանողներին և դիմորդներին: Ձեռնարկում ներկայացված է ԵԳՊԱ ընդհանուր գործունեության, ՄԿԾ-երի և այլնի վերաբերյալ համապարփակ տեղեկություն:

Ուսումնական գործընթացի կարևոր փաստաթղթերից է համարվում նաև «ԵԳՊԱ գնահատման համակարգ»-ը, որը հասցեագրվում է վարչական, դասավանդող, ինչպես

նաև ուսանողական համակազմին (տե՛ս հավելված 23): Հայեցակարգում մանրամասն ներկայացված է ուսանողի գնահատման մոտեցումները, հիմնական սկզբունքները, վերահանձնում, գրագորություն, գնահատականների բողոքարկում և այլն:

Ուսումնառության ընթացքում ուսանողներն ազատ են իրականացնել շարժունություն համաձայն «ԵԳՊԱ ուսանողների շարժունության կարգ»-ի, որը հասցեագրված է վարչական և ուսանողական համակազմին (տե՛ս հավելված 17): Կարգի հիմքում ընկած է ՀՀ Կառավարության կողմից հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգ»-ը: ՀՀ-ում ուսանողների շարժունության վերաբերյալ գործընթացները համակարգում է Ուսումնական վարչությունը, իսկ միջազգային շարժունության իրականացման դեպքում՝ Արտաքին կապերի բաժինը:

Բուհը ուսանողներին տրամադրում է ֆինանսական աջակցություն համաձայն «ԵԳՊԱ ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման կարգ»-ի՝ հասցեագրված վարչական և ուսանողական համակազմին (տե՛ս հավելված 30): Բուհը ուսանողներին տրամադրում է ֆինանսական աջակցություն նրանց բարձր առաջադիմության և/կամ սոցիալական կարգավիճակի հիման վրա:

ԵԳՊԱ ուսանողների ազատումն և վերականգնումը իրականացվում է «ՀՀ բուհերում հեռացման (ազատման) և վերականգման կարգ»-ի համաձայն՝ հասցեագրված վարչական կազմին և ուսանողներին (տե՛ս հավելված 35):

ԵԳՊԱ բակալավրիատի և/կամ մագիստրատուրայի ուսանողին շնորհվում է որակավորում, եթե նա հաջողությամբ է պաշտպանել ամփոփոխ ավարտական աշխատանքը և/կամ մագիստրոսական թեզը: Ավարտական և դիպլոմային աշխատանքները ուսանողները իրականացնում են «ԵԳՊԱ ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման ուղեցույց»-ի համաձայն, որը հասցեագրում է պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին, (տե՛ս հավելված 25): Ամփոփիչ ատեստավորման ժամանակ ուսանողները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները, որի ընթացքը կազմակերպվում է «ԵԳՊԱ ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ»-ի համաձայն՝ հասցեագրված վարչական կազմին, ուսանողներին, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին, (տե՛ս հավելված 24): Սույն կարգով սահմանվում է նաև «Ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման ընթացակարգ»-ը: Ավարտական աշխատանքը և/կամ մագիստրոսական թեզը հաջող պաշտպանելուց հետո ԵԳՊԱ-ն շնորհում է պետական նմուշի դիպլոմ: Դիպլոմին կից տրվում է նաև դիպլոմի համաեվրոպական հավելված (տե՛ս հավելված 28):

Բուհը առկա կանոնակարգերի և կարգերի հասանելիությունը ներքին և արտաքին շահակիցներին ապահովելու նպատակով, կրթական առաջարկներին վերաբերող հիմնական փաստաթղթերը տեղադրում է ԵԳՊԱ պաշտոնական կայքէջում: Հարկ է նշել, որ կրթական առաջարկներին վերաբերող առկա բոլոր փաստաթղթերը պատշաճ ձևով տարբեր մակարդակներում համակարգում են ուսումնական գործընթացը, սակայն դրանց կիրառումը բավականին աշխատատար է, ուստի այդ բոլոր փաստաթղթերի դրույթները հաշվի առնող կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրումը կնպաստի ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

բ) Ընթացակարգային

- Ինչպե՞ս են մշակվել այն փաստաթղթերը, որոնք սահմանում են հաստատությունում ուսումնառելու կանոնները: Ինչպե՞ս են դրանք հրատարակվում և թարմացվում:
- Ինչպե՞ս է հաստատությունը հաշվի առնում / ինտեգրում արտաքին պահանջները (օր. իրավական) գործընթացներում:
- Որո՞նք են կանոնների մշակմանը, թարմացմանը և տարածմանը բնորոշ մարտահրավերները: Ինչպե՞ս են դրանք համաձայնեցվում:
- Որտեղի՞ց են առաջանում փոփոխություն կամ բարելավում իրականացնելու խթանները: Ինչպե՞ս են դրանք տեղայնացվում հաստատության համակարգում և որո՞նք են այն գործընթացները, որոնք առնչվում են այդ խթանների հետ:

ԵԳՊԱ-ում գործող կարգերի վերանայման նախաձեռնությունը կարող է առաջանալ ինչպես վերնից ներքև (պետական և/կամ միջազգային հարթակում որևէ փոփոխություն), այնպես էլ ներքևից վերև (հաստատության և/կամ որևէ ստորաբաժանման կողմից առաջարկ/պահանջ):

ԵԳՊԱ գործունեության հիմքում ընկած են պետական մի շարք հիմնադիր փաստաթղթեր: Հաստատության ուսումնական և այլ գործընթացների համար փաստաթղթային հենք մշակելիս, բուհը հաշվի է առնում մի շարք իրավական ակտեր՝ «Կրթության մասին ՀՀ օրենք», «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին ՀՀ օրենք», ինչպես նաև պետական այլ կարգեր: Հաշվի առնելով բուհի կանոնադրությունը, ԵԳՊԱ-ն մշակում է հաստատության կանոնակարգերն ու ընթացակարգերը, ինչպես նաև ներքին կարգապահական կանոնները:

Բուհը վերանայում է հաստատության ներսում գործող առկա կարգերը՝ հաշվի առնելով կրթության ոլորտում պետական քաղաքականությունը: ԵԳՊԱ որևէ կարգի վերանայման համար ստեղծում է աշխատանքային խումբ, որում ներգրավվում են համապատասխան ներքին շահակիցներ: Աշխատանքային խումբը կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք քննարկվում և հաստատվում են ԵԳՊԱ Գլխական խորհրդի կողմից:

Պետական բոլոր կարգերի հիման վրա ստեղծված ԵԳՊԱ կարգերը արդյունավետ գործում և հասցեագրվում են հաստատության հիմնական շահակիցներին, սակայն դրանցով առաջնորդվելիս կարող են առաջանալ աշխատանքային տարբեր խնդիրներ՝ պայմանավորված ոչ միայն պետական կարգերում առկա դրույթներով, այլ նաև բուհի ներսում դրանց կիրառմամբ: Հաստատության ներսում նման խնդիրները լուծվում են բանակցությունների, քննարկումների միջոցով, որոնց կազմակերպման համար պատասխանատու է Ուսումնական վարչությունը:

գ) Մշակութային

- Արդյո՞ք հաստատության անդամները՝ հատկապես ուսանողները և դասախոսական կազմը, համարժեք կերպով տեղեկացված են կրթական ծրագրերի այն կանոններին և կանոնակարգերին, որոնք ազդեցություն ունեն իրենց վրա:
- Արդյո՞ք հաստատության համապատասխան անդամների կողմից ընդունված

կանոնները ազդեցություն են ունենում նրանց վրա: Արդյո՞ք կանոնները թափանցիկ և հասկանալի են բոլոր շահակիցներին:

Ուսանողական և դասախոսական համակազմը պատշաճ կերպով տեղեկացված է հաստատության կրթական առաջարկներին վերաբերող կարգերի, կանոնակարգերի և մնացյալ հիմնարար փաստաթղթերի հիմնական մոտեցումներին ու սկզբունքներին: Ընդունված կարգերը, կանոնները պարզ և հասկանալի են բոլոր ներքին շահակիցների համար, եթե առկա են անհասկանալի դրույթներ, ապա տեղի է ունենում քննարկումներ, պարզաբանումներ:

Բուհի կրթական առաջարկներին վերաբերող հիմնական փաստաթղթերը տեղադրված են ԵԳՊԱ կայքէջում, հետևաբար հասանելի են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներին: Ուսուցման և դասավանդման գործընթացին վերաբերող ընթացիկ փոփոխությունների մասին ուսանողները և դասախոսները տեղեկանում են ամբիոնի, ինչպես նաև դեկանատների միջոցով: Բուհում առկա բոլոր կանոնակարգերը, ներքին կարգապահական կանոնները տարածվում են ինչպես ուսանողների, այնպես էլ ներքին բոլոր շահակիցների վրա:

Կարգերի մշակման և կիրառման գործընթացի արդյունավետությունը ապահովում է դրանց ստեղծման, վերանայման գործում ոչ միայն հիմնական շահակիցների ներգրավվածությունը, այլ նաև դրանց արդյունավետության գնահատման ՈԱ գործիքների կիրառումը, օրինակ՝ ԵԳՊԱ առաջին կուրսի ուսանողները, բովանդակային և կազմակերպական տեսանկյունից, գնահատում են ընդունելության քննությունները: Նման մոտեցումը օգնում է հնարավորինս բարելավել ԵԳՊԱ ընդունելության քննությունների անցկացման գործընթացը:


IV.2 Փաստաթղթավորում

ա) *Ինստիտուցիոնալ*

- Ինչպե՞ս է փաստաթղթավորման, փաստաթղթերի կառավարման և տեղեկության պահպանման համակարգը աշխատում:
- Որո՞նք են բնորոշ մարտահարվերները և ինչպե՞ս են դրանք հաղթահարվում:

ԵԳՊԱ փաստաթղթերի կառավարման համակարգը հստակորեն տարանջատում և ցույց է տալիս բուհի մուտքային, ներքին և ելքային փաստաթղթերի շարժը: Առկա համակարգը ապահովում է բուհում իրականացվող տարբեր գործընթացների սահուն և թափանցիկ ընթացքը: ԵԳՊԱ փաստաթղթերի կառավարման համակարգը ներկայացված է ստորև սխեմայում՝

ԵԳՊԱ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ



ԵԳՊԱ ներքին փաստաթղթերի մշակման, պահպանման, ինչպես նաև վերանայման համար առկա են կազմակերպական կանոններ: Յուրաքանչյուր մշակված փաստաթուղթ պահպանվում է թղթային և/կամ էլեկտրոնային տարբերակով: Հրապարակման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերը տեղադրվում են նաև ԵԳՊԱ կայքէջում:

Փաստաթղթերը մշակվում և պահպանվում են ԵԳՊԱ տարբեր ստորաբաժանումներում՝ կախված գործընթացի բնույթից. ուսանողների վերաբերյալ հիմնական փաստաթղթերը պահվում են Ուսումնական գործընթացի հաշվառման բաժնում, կրթական գործընթացների բարեփոխումներին վերաբերող փաստաթղթերը՝ Ուսումնամեթոդական բաժնում, բուհի աշխատակիցների վերաբերյալ տեղեկությունը՝ Մարդկային Ռեսուրսների բաժնում և այլն: Վաղեմության ժամկետը անցած բուհի բոլոր փաստաթղթերը պահվում են արխիվում, որի գործունեության հիմքում ընկած է «ԵԳՊԱ արխիվի կանոնակարգ»-ը (տե՛ս հավելված 36):

Բուհի առանձին ստորաբաժանումներում առկա է տվյալների պահպանման և կառավարման էլեկտրոնային համակարգեր, ինչպիսիք են՝ հաշվապահական գործընթացների, ուսանողների ուսումնական առաջադիմության, աշխատակազմի տվյալների համար նախատեսված համակարգերը: Սակայն առկա համակարգերը միմյանց հետ կապակցված չեն, ուստի ԵԳՊԱ փաստաթղթաշրջանառության գործընթացում հիմնական մարտահրավերը փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային ամբողջական համակարգի ձևավորումն է: Ներկայումս ԵԳՊԱ-ն քայլեր է ձեռնարկում միտված փաստաթղթաշրջանառության գործընթացի բարելավմանը: 2017թ. կնեդրվի էլեկտրոնային կառավարման նոր համակարգը, որը միտված է ԵԳՊԱ փաստաթղթաշրջանառության գործընթացի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև կնպաստի ստորաբաժանումների միջև հաղորդակցական կապերի ամրապնդմանը:

բ) Ընթացակարգային

- Արդյոք դասավանդման և ուսուցման/ կրթական ծրագրերի վերաբերյալ փաստաթղթավորման և տեղեկության պահպանման գործընթացները աշխատում են այնպես, ինչպես ակնկալվում է:
- Որո՞նք են բնորոշ մարտահարվերները և ինչպե՞ս են դրանք համաձայնեցվում/հաղթահարվում:
- Ինչպե՞ս է հաստատությունը արտաքին համապատասխան պահանջները ներդնում ներքին գործընթացներում (օր. պարտականությունների/ գործառույթների՝ հրապարակում կամ հաստատության կողմից այլ հրատարակումներ)՝ թափանցիկության և փաստաթղթավորման նպատակով:
- Որտեղի՞ց են առաջանում փոփոխություն կամ բարելավում իրականացնելու խթանները: Ինչպե՞ս են դրանք տեղայնացվում հաստատության համակարգում և որո՞նք են այն գործընթացները, որոնք առնչվում են այդ խթանների հետ:

Դասավանդման և ուսուցման փաստաթղթաշրջանառության գործընթացը առավել համակարգված դարձնելու նպատակով, բուհը կիրառում է ուսանողների անձնական և ուսումնական գործընթացին վերաբերող տվյալների պահմանման ու կառավարման էլեկտրոնային համակարգ: Այն իր մեջ ներառում է միայն ուսանողների առաջադիմության,

անձնական և այլ տվյալների վերաբերյալ տեղեկություն, ուստի չի արտացոլում և պարունակում դասավանդման ու ուսուցման գործընթացին վերաբերող ամբողջ տեղեկությունը և փաստաթղթերը: Դասավանդման և ուսուցման վերաբերյալ հիմնական տեղեկությունը և փաստաթղթերը հավաքագրվում և պահվում են ամբիոններում, դեկանատներում և Ուսումնական վարչությունում:

Դասավանդման և ուսուցման գործընթացի վերաբերյալ փաստաթղթերը նպաստում են կրթական ծրագրերի առավել արդյունավետ իրականացմանը: Մակայն դրանց կիրառության ժամանակ կարող են առաջանալ որոշակի մարտահրավերներ, որոնք հաղթահարելու նպատակով կազմակերպվում են սեմինար-քննարկումներ, տեղի է ունենում փորձի փոխանակում:

գ) Մշակութային

- Արդյո՞ք հաստատության անդամները՝ հատկապես ուսանողները և դասախոսական կազմը, համարժեք ձևով տեղեկացված են իրենց վերաբերող կրթական առաջարկներին և ընհանրապես իրենց պայմաններին:
- Ի՞նչ վերաբերմունք և վարք է ակնկալվում հաստատության այն անդամներից, ովքեր ներգրավված/կապված են ներքին և արտաքին տեղեկատվական քաղաքականության հետ, ինչպես նաև արդեն իսկ իրականացված որակի խնդիրների և բարելավման կարիք ունեցող խնդիրների տեսանկյունից:
- Արդյո՞ք այդ սպասումները ընդունվում են հաստատության թիրախային տարբեր խմբերի կողմից:

Բուհի ներքին շահակիցները կրթական առաջարկների և մատուցվող ծառայությունների վերբերյալ համապարփակ և անհրաժեշտ տեղեկություն ստանում են ԵԳՊԱ տարբեր ստորաբաժանումներից:

ԵԳՊԱ-ն պրոֆեսորադասախոսական կազմի յուրաքանչյուր ներկայացուցչի հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր, որտեղ մանրամասն ներկայացված է դասավանդողի իրավունքները, պարտականությունները, ինչպես նաև ԵԳՊԱ-ում մասնագիտական հնարավորությունների, աշխատանքային պայմանների վերաբերյալ ընդհանուր դրույթներ (տե՛ս հավելված 37): ԵԳՊԱ դասախոսները դասավանդման և ուսուցման գործընթացի, մասնագիտական վերապատրաստումների և գիտական այլ միջոցառումների վերաբերյալ հիմնական տեղեկությունը ստանում են համապատասխան ամբիոնից, ամբիոնները դասախոսներին՝ ՄԿԾ առաքելությանը և նպատակներին համահունչ և ուսումնական պլանի հիման վրա, տրամադրում են դասընթացի նկարագրի օրինակելի ձևաչափ, որի հիման վրա դասավանդող համակազմը մշակում է իր դասընթացին համապատասխան նկարագիրը:

Բուհ ընդունված յուրաքանչյուր ուսանողի հետ կնքվում է պայմանագիր, որտեղ մանրամասն ներկայացված է ուսանողի իրավունքները, պարտականությունները, ինչպես նաև բուհում ուսումնառելու վերաբերյալ ընդհանրական դրույթներ (տե՛ս հավելված 38): Ուսուցման գործընթացի վերաբերյալ հիմնական տեղեկությունը ուսանողներին տրամադրում են ամբիոնները և դեկանատները, իսկ առաջին կուրսի ուսանողները հնարավորություն ունեն

տեղեկանալ ԵԳՊԱ կրթական առաջարկների և մատուցվող ծառայությունների վերաբերյալ նաև «Ուսանողի ձեռնարկ»-ից (տե՛ս հավելված 29): Ուսանողները ԵԳՊԱ գործունեության, ինչպես նաև առաջարկվող և մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկություն ստանում են ԵԳՊԱ կայքէջից և բուհի տարբեր ստորաբաժանումներից. Կարիերայի կենտրոնը տրամադրում է տեղեկություն վերապատրաստումների, սեմինարների վերաբերյալ, փոխանակման ծրագրերի վերաբերյալ տեղեկություն տրամադրում և տարածում է Արտաքին կապերի բաժինը, ուսուցմանն առնչվող վարչական գործընթացների մասին տեղեկանում են Ուսումնական գործընթացի հաշվառման բաժնից և այլն:

ԵԳՊԱ-ն կարևորում է ներքին գործընթացների, ուսանողների և աշխատակիցների անձնական տվյալների վերաբերյալ տեղեկության գաղտնիության պահպանումը, ինչը սահմանված է ԵԳՊԱ աշխատանքային պայմանագրում (տե՛ս հավելված 37) և «ԵԳՊԱ ներքին կարգապահական կանոնակարգում (տե՛ս հավելված 13):

ԵԳՊԱ-ն կարևորում է հիմնական շահակիցների ներգրավվածությունը ոչ միայն դասավանդմանը և ուսումնառությանը վերաբերող, այլ նաև ԵԳՊԱ մյուս գործընթացներում: Բուհը շարունակաբար կլոր-սեղան քննարկումների, հարցումների միջոցով շահակիցներից ստանում է արձագանք ԵԳՊԱ տարբեր գործընթացների վերաբերյալ, ինչը նպաստում է ինչպես բուհի ՈԱ գործընթացների, այնպես էլ դասավանդման և ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

ԵԳՊԱ ներքին փաստաթղթերի մշակման, պահպանման, ինչպես նաև վերանայման համար առկա են կազմակերպական կանոններ: Յուրաքանչյուր մշակված փաստաթուղթ պահպանվում է թղթային և/կամ էլեկտրոնային տարբերակով: Հրապարակման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերը տեղադրվում են նաև ԵԳՊԱ կայքէջում: